

ՔԵՄԲԵԼ ԵՎ ՖԵԼԸ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ
CASE OF CAPMBELL AND FELL v. THE UNITED KINGDOM

Դատարանի 1984թ. մայիսի 3-ի

վճիռը

Ստրասբուրգ

Քեմբլ և Ֆել գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առաջնորդվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածով և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթներով, նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով՝ պրն Գ. Վիարդան, Նախագահ, պրն Զ. Քրեմոնա, պրն Թոր Վիլհելմսոն, պրն Ֆ. Գյոլքուքլու, սըր Վինսենթ Էվանս, պրն Ռ. Մաքդոնալդ, պրն Կ. Ռուսո,

նաև պրն Մ-Ա Էյշեն, Քարտուղար, և պրն Հ. Պեցուլդ, Քարտուղարի տեղակալ,

1983թ. սեպտեմբերի 23-ի, դեկտեմբերի 8-ի և 9-ի և 1984թ. մայիսի 2-ի և 3-ի դռնփակ խորհրդակցություններից հետո,

մայիսի 3-ին կայացրել է հետևյալ վճիռը

Վարույթը

1. Գործը Դատարան է հանձնվել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից 1982թ. հոկտեմբերի 14-ին՝ Կոնվենցիայի 47-րդ հոդվածով և 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ են հանդիսացել 25-րդ հոդվածի համաձայն պրն Զոն Զոգեֆ Քեմբլի և հայր Պատրիկ Ֆելի կողմից 1977թ. ընդդեմ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության՝ Հանձնաժողով ներկայացրած 2 գանգատները (թիվ 7819/77 և 7878/77): Հանձնաժողովը գանգատները միավորել է մեկ վարույթում 1981թ. մարտի 14-ին և 19-ին:

2. Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների (հոդված 44, հոդված 48) և այն հայտարարության վրա, որով Միացյալ Թագավորությունը ճանաչում էր Դատարանի պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված): Առաջարկվում էր որոշել, թե արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պրն Քեմբլի գործով՝ Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների և հայր Ֆելի գործով՝ 6-րդ, 8-րդ և 13-րդ հոդվածների խախտման մասին:

3. Պալատի կազմում ընդգրկված էին, ex officio, Սըր Վինսենթ Էվանսը՝ Բրիտանիայից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված) և պրն Գ. Վիարդան՝ Դատարանի նախագահ (21-րդ կանոն, կետ 3(բ)): 1982թ. հոկտեմբերի 28-ին Նախագահը՝ Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ որոշել է մյուս 5 անդամներին, մասնավորապես՝ պրն Զ. Քրեմոնային, պրն Թոր Վիլհելմսոնին, պրն Գ. Լագերգրենին, պրն Ռ. Մաքդոնալդին և պրն Կ. Ռուսոյին (Կոնվենցիայի նախկին 43-րդ հոդված և 21-րդ կանոն, կետ 1): Հետագայում պրն Ֆ. Գյոլքուքլուն՝ փոխարինող դատավոր, փոխարինել է պրն Լագերգրենին, որի մասնակցությունը գործի քննությանը բացարկվել է (22-րդ կանոնի կետ 1 և 24-րդ կանոնի կետ 1):

4. Պրն Վիարդան, որ ստանձնել էր Պալատի նախագահի լիազորությունները (21-րդ կանոն, կետ 5), Քարտուղարի միջոցով, Մեծ Բրիտանիայի Կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») գործակալի և Հանձնաժողովի պատվիրակի հետ համաձայնեցրել է դատավարության կազմակերպման կարգը: 1982թ. նոյեմբերի 17-ին նա որոշում է ընդունել այն մասին, որ գործակալը պարտավորվում է մինչև 1983թ. հունվարի 31-ը ներկայացնել իր գրավոր բացատրությունները, և որ պատվիրակն իրավունք ունի գրավոր պատասխանը ներկայացնելու՝ Քարտուղարի կողմից Կառավարության գրավոր բացատրություններն իրեն

(Նախագահին) փոխանցելուց հետո երկու ամսվա ընթացքում: Հունվարի 25-ին Նախագահը համաձայնել է այս վերջնաժամկետներից առաջինը երկարաձգել մինչև 1983թ. մարտի 14-ը:

Քարտուղարությունը Կառավարության գրավոր բացատրություններն ստացել է 1983թ. մարտի 17-ին: Մայիսի 18-ի նամակով Հանձնաժողովի քարտուղարը Ղատարանին է փոխանցել դիմողի ներկայացուցիչների կողմից պատվիրակին հանձնված գրավոր բացատրությունները. նամակում շարադրված էր նաև պատվիրակի կարծիքը Ղատարանում գործի շրջանակի վերաբերյալ, և նշվում էր, որ ինքը պահպանում է գործի լսումների ընթացքում գրավոր բացատրությունների վերաբերյալ կարծիք հայտնելու իրավունքը:

5. Նախագահը Քարտուղարի միջոցով Կառավարության գործակալի և Հանձնաժողովի պատվիրակի հետ խորհրդակցելով՝ 1983թ. հուլիսի 7-ին որոշում է ընդունել 1983թ. սեպտեմբերի 20-ին գործի լսումներն սկսելու վերաբերյալ, իսկ հուլիսի 27-ին որոշել է, որ գործի շրջանակը կսահմանափակվի նույն օրը ընդունված կարգադրությամբ սահմանված կարգով:

6. Ղռնբաց լսումները տեղի ունեցան 1983թ. սեպտեմբերի 20-ին՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում: Մինչ այդ Ղատարանը գումարել էր նախապատրաստական նիստ:

Ղատարանում կողմերին ներկայացնում էին.

- Կառավարությունը՝

տկն Ա. Գլովերը՝ իրավախորհրդատու, Արտաքին և պետական հարցերի գրասենյակ, գործակալ

պրն Մ. Բեյքերը, հավատարմագրված փաստաբան,

խորհրդական,

պրն Կ. Օսթորնը,

պրն Պ. Ստիվենսը,

պրն Զ. Լե Վայը, Ներքին գործերի գրասենյակ,

խորհրդատուներ.

Հանձնաժողովը՝

պրն Տ. Օփսալը,

պատվիրակ,

պրն Կ. Թորնբերին՝ հավատարմագրված փաստաբան և

պրն Ա. Լոգանը՝ ներկայացուցիչ, Հանձնաժողովում դիմողի փաստաբանը (պատվիրակի օգնական):

(Ղատարանի կանոնակարգի 29-րդ կանոն, կետ 1, 2-րդ նախադասություն):

Ղատարանը լսել է պրն Բեյքերի ելույթը Կառավարության անունից և պրն Թորնբերինը՝ Հանձնաժողովի անունից, ինչպես նաև լսել է վերջիններիս պատասխաններն իր և իր երկու անդամների հարցերին:

7. Լսումների ընթացքում պրն Բեյքերը և պրն Թորնբերին քննության են ներկայացրել մի շարք փաստաթղթեր՝ Ղատարանի կողմից իրավունքի խախտում արձանագրելու դեպքում Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ: Ղեկավարվելով Նախագահի կարգադրություններով և ցուցումներով՝ Քարտուղարությունը հարցի վերաբերյալ ստացել է հետևյալ փաստաթղթերը՝

- 1983թ. հոկտեմբերի 13-ին՝ Հանձնաժողովի պատվիրակի միջոցով, դիմողների բացատրությունները,

- 1983թ. դեկտեմբերի 2-ին՝ Կառավարության գրավոր բացատրությունները,

- 1984թ. հունվարի 13-ին՝ Հանձնաժողովի քարտուղարի նամակը, որում նշվում է, inter alia, որ պատվիրակը գործի լուծումը թողնում է Ղատարանի հայեցողությանը:

Փաստերի վերաբերյալ

I. Գործի առանձին հանգամանքները

Ա. Նախապատմությունը և 1976թ. սեպտեմբերի 16-ի միջադեպը

8. Առաջին դիմողը՝ արն Ջոն Քենբլը, Միացյալ Թագավորության քաղաքացի է՝ ծնված 1944թ.՝ Հյուսիսային Իռլանդիայում: Անգլիայում բնակվում է 1965թվականից:

1973թ. նոյեմբերին նա մեղադրվել է մի շարք հանցագործությունների, մասնավորապես՝ կողոպուտի փորձ կատարելու և այդ նպատակով զենք պահելու կապակցությամբ, և դատապարտվել տասը տարվա ազատազրկման: Հետագայում նա ազատազրկումը կրել է մի շարք կալանավայրերում և 1976թ. սեպտեմբերի 16-ին գտնվել է Ալբանի բանտում՝ Ուայթի կղզում: Այժմ նա ազատության մեջ է:

9. Երկրորդ դիմողը՝ հայր Պատրիկ Ֆելլը, Միացյալ Թագավորության քաղաքացի է՝ ծնված 1940թ.՝ Անգլիայում: Նա Հռոմի կաթոլիկ եկեղեցու քահանա է:

1973թ. նոյեմբերին, մեղադրվելով հրկիզման փորձի և դիտավորությամբ գույքի ոչնչացման փորձի մեջ, և մասնակցելով քաղաքական նպատակներ հետապնդող և բռնության մեթոդներ կիրառող կազմակերպության ղեկավարմանն ու վերահսկմանը, դատապարտվել է տասներկու տարվա ազատազրկման: Նա ևս հետագայում պատիժը կրել է ազատազրկման տարբեր վայրերում և 1976թ. սեպտեմբերի 16-ին նույնպես գտնվել է Ալբանի բանտում: Այժմ գտնվում է ազատության մեջ:

10. Նշված ժամանակահատվածում երկու դիմողներն էլ համարվել են «A կատեգորիայի բանտարկյալներ» (տես՝ ստորև կետ 44 (ա)): Հանցագործությունները, որոնց համար դատապարտվել էին դիմողները, իշխանությունների կողմից գնահատվել են իբրև Իռլանդական հանրապետական բանակի ահաբեկչական գործունեության հետ առնչվող կամ մաս կազմող արարքներ: Հանձնաժողովի զեկույցի համաձայն՝ երկու դիմողներն էլ հետևողականորեն հերքել են այդ կազմակերպությանն իրենց անդամակցությունը:

11. 1976թ. սեպտեմբերի 16-ին Ալբանի բանտում տեղի է ունեցել մի միջադեպ: Հանձնաժողովում գործի վարույթի ժամանակ միջադեպի հանգամանքների և օգտագործված զենքի ու բռնության կիրառման փաստի վերաբերյալ Կառավարության և դիմողների միջև լուրջ վեճ է ծավալվել, սակայն ներկայիս գործի համար բավարար է նաև ստորև բերվող նկարագրությունը:

Պրն Քենբլը, հայր Ֆելլը և չորս այլ բանտարկյալներ, որ մասնակցում էին մեկ այլ բանտի նկատմամբ վերաբերմունքի դեմ բողոքի ակցիային, նստացույց էին արել բանտի միջանցքում և հրաժարվել տեղից շարժվել: Նրանց տեղից հաջողվել էի հանել կալանավայրի աշխատակիցների հետ պայքարից հետո միայն, որի ընթացքում մարմնական վնասվածքներ էին ստացել թե՛ դիմողները, թե՛ հսկիչները: Առավել լուրջ վնասվածքներ ստացած արն Քենբլը բուժման նպատակով տեղափոխվել էր Փարկիլդրստի բանտային հիվանդանոց, որտեղից Ալբանի բանտ էր վերադառնել 1976թ. սեպտեմբերի 30-ին:

Բ. Պրն Քենբլի դեմ կարգապահական վարույթը

12. Բանտի տեսուչների խորհուրդը վերոհիշյալ միջադեպում ներգրավված բոլոր վեց բանտարկյալներին մեղավոր էր ճանաչել Կալանավայրի 1964թ. կանոնակարգով նախատեսված կարգապահական զանցանքների կապակցությամբ (Կանոնակարգ, տես՝ ստորև՝ կետեր 26-28): 1976թ. սեպտեմբերի 24-ին խորհուրդը լսել էր բոլոր գործերը, բացի այդ ժամանակ Փարկիլդրստում գտնվող արն Քենբլի գործից:

13. 1976թ. հոկտեմբերի 1-ին, Ալբանի բանտ վերադառնալուց անմիջապես հետո, արն Քենբլը տեղեկացվել է, որ մեղադրվել է կարգապահական զանցանքների՝ խռովության կամ խռովության հրահրման և բանտի աշխատակցի նկատմամբ բռնություն կիրառելու համար, ինչը հակասում է Կանոնակարգի 47-րդ կանոնի 1-ին և 2-րդ կետերին (տես՝ ստորև՝ կետ 27): Առաջին մեղադրանքը վերաբերում էր այլ բանտարկյալների հետ միջադեպին մասնակցելուն, երկրորդի հիմքում ընկած էր այն պնդումը, որ արն Քենբլն ավելի կոթով հարվածել էր հսկիչին:

Բանտի Կառավարչի կողմից նախնական լսումը (տես՝ ստորև՝ կետ 31) տեղի է ունեցել հոկտեմբերի 1-ին, երբ մեղադրանքները փոխանցվել էին բանտի տեսուչների խորհրդին:

Վերջինս դռնփակ նիստով գործը լսել էր հոկտեմբերի 6-ին: Երկու լսումներից առաջ էլ դիմողն ստացել էր «ծանուցագրեր», իսկ Խորհրդում գործի քննությունից առաջ՝ ընթացակարգի նկարագրությունը պարունակող թերթիկի պատճենը (տե՛ս ստորև՝ կետ 36): Խորհրդում գործի վարույթի առնչությամբ «ծանուցագրերը» ուղարկվել էին հոկտեմբերի 5-ի առավոտյան ժամը 8:00-ին: Ծանուցագրերից մեկը սկսվում էր հետևյալ կերպ՝ «Ձեր վերաբերյալ բանտի հսկիչի կողմից կազմվել է զեկույց այն մասին, որ 1976թ. սեպտեմբերի 16-ին ժամը 19:30-ին “Դ” սրահում Դուք կատարել եք 47-րդ կանոնի 1-ին կետով նախատեսված հանցանք, i.e. խռովություն»:

Մյուս ծանուցագիրն սկսվում էր հետևյալ կերպ՝ «Ձեր գործի քննությունը տեղի կունենա վաղը, և Ձեզ պաշտպանվելու հնարավորություն կտրվի: Եթե ցանկանում եք գրավոր պատասխանել այս մեղադրանքին, կարող եք շարադրել պատասխանը սույն ձևաթղթի շրջերեսին»:

Պրն Քեմբլը ներկա չի գտնվել լսումներից և ոչ մեկին: Ըստ արձանագրությունների՝ նախքան Կառավարչի կողմից գործի լսումը նա հայտարարել է, թե պատրաստ է ներկա գտնվելու լսումներին միայն օրինականորեն ներկայացված լինելու դեպքում: Խորհրդում գործի վարույթի ժամանակ օրինական ներկայացուցիչ ունենալու նրա պահանջը ևս մերժվել է՝ այդ ժամանակ գործող պրակտիկայի համաձայն (տե՛ս ստորև՝ կետ 36): Նախքան Խորհրդի գումարումը՝ նրան այցելել էր նախագահողը և զգուշացրել, որ նիստը կարող է անցկացվել նաև նրա բացակայությամբ: Ըստ արձանագրությունների՝ նա հասկացել է այս զգուշացումը և իրեն ներկայացված մեղադրանքները: Փաստորեն նա ոչ Խորհրդի նիստի հետաձգման, ոչ ներկայացուցչի հետ նախօրոք խորհրդակցելու կարիք չի ունեցել. տվյալ ժամանակահատվածում ըստ գործող պրակտիկայի նման պահանջը ևս անօգուտ կլիներ (նույն տեղում):

Հանձնաժողովում և Դատարանում գործի վարույթի ժամանակ պրն Քեմբլը բերել է իր չներկայանալու լրացուցիչ բացատրություններ ևս. առաջին հերթին՝ տեղեկանալով սեպտեմբերի 24-ին կայացած Խորհրդի նիստի արդյունքների մասին, ունենալով նաև նման լսումների սեփական փորձառություն, դիմողն արդարացի լսումներ չի ակնկալել և իր մասնակցությունը դրանց անօգուտ է համարել, երկրորդ հերթին՝ կրած վնասվածքների պատճառով նա իրեն չափազանց թույլ էր զգում, իսկ հոկտեմբերի 6-ին գտնվում էր «պատժախցում՝ գետնին ընկած, անկարող քայլելու, առանց սննդի և խիստ ցավերի մեջ»: Ինչ վերաբերում է վերջին պնդումներին, որոնք վիճարկվել էին Կառավարության կողմից, բժշկական քննությունը երկու լսումներից առաջ էլ դիմողին պատիժ կրելու կարողունակ է ճանաչել: Հանձնաժողովը եզրահանգել է, որ պրն Քեմբլին լսումներին ներկա գտնվելուն խոչընդոտելու փաստը չի հիմնավորվել, և որ նա չի ներկայացել սեփական որոշմամբ, սեփական նկատառումներից ելնելով, ինչից հետևում է, որ լսումներին չներկայանալը դիմողի պատասխանատվության խնդիր է:

14. Տեսուչների Խորհրդում գործի վարույթի ժամանակ դիմողի անունից ներկայացվել է հայտարարություն, որով նա իրեն անմեղ է ճանաչել մեղսագրված արարքների առնչությամբ, սակայն գրավոր արդարացում, այնուամենայնիվ, չի ներկայացվել: Համաձայն վարույթների արձանագրությունների, որոնք երկու դեպքում էլ տևել են ոչ ավելի քան 15 րոպե, կալանավայրի հսկիչներից մեկը ցուցմունք է տվել խռովության մեղադրանքի վերաբերյալ՝ ընթերցված հայտարարության մեջ նկարագրելով պրն Քեմբլի և մյուս բանտարկյալների կատարած դերը միջադեպում, իսկ մյուս հսկիչը վկայություն է տվել բռնության մեղադրանքի մասով՝ նշելով պրն Քեմբլի կողմից հարված ստանալու փաստը:

1976թ. հոկտեմբերի 6-ին դիմողը մեղավոր է ճանաչվել երկու մեղադրանքներով և խռովության ու բռնության համար զրկվել է վաղաժամկետ ազատ արձակման հնարավորությունից՝ համապատասխանաբար 450 և 120 օրով, որոշակի արտոնություններից, համապատասխանաբար 56 և 35 օրով, մեկուսացվել է աշխատանքներից և զրկվել աշխատավարձ ստանալու հնարավորությունից՝ երկու մեղադրանքներով պատժամիջոցների հաջորդական իրականացմամբ (տե՛ս ստորև՝ կետեր 28 և 29): Կալանավայր մտնելու պահին

պրն Քեմբլի ազատ արձակման հավանական ժամկետն է եղել (տես՝ ստորև կետ 29) 1980թ. մայիսը: Խորհրդի որոշման պահին այս ժամկետին կարգապահական 10 առանձին որոշումներով արդեն ավելացվել էր 145 օր՝ ընդհանուր ժամկետը բոլորելով մինչև 1072 օր:

15. 1977թ. սեպտեմբերի 1-ին և 1979թ. ապրիլի 17-ին պրն Քեմբլի կողմից Հանձնաժողովին են ներկայացվել դիտողություններ, որում համապատասխանաբար նշվում է, որ նա մտադրվել է անգլիական դատարաններին ուղարկել, և ուղարկել է դիմումներ՝ վերադաս ատյանում գործի վերաքննության առնչությամբ (տես ստորև՝ կետեր 39-41)՝ պահանջելով վերանայել Տեսուչների խորհրդի՝ 1976թ. իր գործով որոշումը:

1980թ. հուլիսի 23-ին ներկայացված գրավոր բացատրություններից երևում է, սակայն, որ հենվելով պաշտպանական կողմի 1979թ. նոյեմբերին և 1980թ. հունիսին արված խորհրդատվության վրա, թե՛ պրն Քեմբլը, և թե՛ հայր Ֆելը որոշել էին նման դիմումներ չներկայացնել. պաշտպանական կողմը գտել էր, որ նման դիմումները դատապարտված են ձախողման՝ հաշվի առնելով, որ դիմողները «խուսափել էին» մասնակցել լսումներին: 1983թ. սեպտեմբերի 20-ին Դատարանում գործի վարույթի ժամանակ Կառավարությունը մատնանշել է այն հանգամանքը, որ նույնիսկ 1980թ. Ներքին գործերի քարտուղարը չէր մերժի վերադաս ատյանում գործի ժամկետանց վերաքննության մասին պրն Քեմբլի դիմումը, մինչդեռ այժմ կներժի (տես ստորև՝ կետ 41): Իրականում նա հետամուտ չէր եղել գործի լուծմանը:

Հետագայում հարցը վերանայվել էր հայր Ֆելի գործի առնչությամբ, որին 1979թ. նոյեմբերին հավաստիացրել էին, թե հարցը լուծելի է: 1981թ. փետրվարին գլխավոր պաշտպանը խորհուրդ էր տվել նրան իր գործով 1976թ. սեպտեմբերի 24-ին Խորհրդի լսումների ընթացքում (որին նա մասնակցել էր) «ակնհայտ անարդարացի» վերաբերմունք դրսևորելու հիմքով անմիջապես վերաքննության պահանջ ներկայացնել: Ավելի ուշ նույն տարվա ընթացքում նրան հաջողվել էր դատարանից ստանալ անհրաժեշտ համաձայնությունը, սակայն դիմումը մերժվել էր թե՛ առաջին և թե՛ վերաքննիչ ատյաններում:

16. Ազատագրկման մեջ գտնվելու ժամանակահատվածում պրն Քեմբլի նկատմամբ հարուցվել է 15 կարգապահական վարույթ, որոնց արդյունքում նա 957 օրվա չափով (ներառյալ այն 570 օրը, որ նա ստացել էր Խորհրդի 1976թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ) զրկվել է պատժից վաղաժամկետ ազատվելու հնարավորությունից: Նրա հետագա դիմումների արդյունքում (նկարագրված՝ 38-րդ կետում) այդ ժամկետից 236 օր բաշխվել է դիմողին: Նա ազատ է արձակվել 1982թ. մարտի 31-ին՝ նշանակված տասը տարվա ազատագրկումից կրելով ութ տարի և ութ ամիսը՝ ներառյալ նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

Գ. Դիմողների իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը նրանց մարմնական վնասվածքների վերաբերյալ հայցի մասով:

17. Հայր Ֆելը 1976թ. սեպտեմբերի 21-ի առնչությամբ Ներքին գործերի քարտուղարին ներկայացրել է հետևյալ խնդրագիրը, «Ալբանի բանտում սեպտեմբերի 16-ի միջադեպի ընթացքում ես մի շարք մարմնական վնասվածքներ եմ ստացել: Դիմում եմ Ձեզ՝ իմ կողմից ձեռնարկվելիք հետագա քայլերի կապակցությամբ ինձ իմ փաստաբանի հետ հանդիպելու և խորհրդակցելու հնարավորություն տալու խնդրանքով»: Մոտ մեկ շաբաթ անց լրացուցիչ խնդրագրով դիմողը խնդրել է նաև ներկայացուցչին տեսնելու հնարավորություն տալու մասին՝ մարմնական վնասվածքների համար փոխհատուցման և հնարավոր այլ քաղաքացիական հայցերի վերաբերյալ ձգգրտումներ կատարելու համար:

Ներքին գործերի քարտուղարը պատասխանել է հոկտեմբերի 1-ին: Նա տեղեկացրել է հայր Ֆելին, որ համաձայն «նախաքննության գաղտնիության կանոնի» (տես ստորև՝ կետ 44) խնդրո առարկայի վերաբերյալ նա կարող է իրավաբանական օգնություն ակնկալել ներքին համակարգում դրանց ուսումնասիրության ավարտից և եզրակացությունների ներկայացումից հետո միայն:

18. 1976թ. հոկտեմբերի 4-ին հայր Ֆելը ևս մի խնդրագիր է ներկայացրել՝ մանրամասն նկարագրելով սեպտեմբերի 16-ի միջադեպը և դրա հետևանքները և խնդրելով մանրակրկիտ

քննություն իրականացնել: Իր ստացած վնասվածքների վերաբերյալ հետագա տեղեկությունները նա լրացրել է հոկտեմբերի 27-ին ներկայացրած խնդրագրում:

1977թ. փետրվարի 9-ի իր պատասխանում Ներքին գործերի քարտուղարը նշել է, որ քննության արդյունքում հավաստիացել է, որ դիմողի պնդումները՝ հարձակման և ոչ համարժեք կամ անհարկի ուշացված բժշկական օգնության մասին, անհիմն են: Դիմողին տեղեկացվել է, որ նրան, ցանկության դեպքում, այնուամենայնիվ, իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն կընձեռվի:

19. 1976թ. Ներքին գործերի քարտուղարին ներկայացրած խնդրագրում, առանց որևէ պատճառ մատնանշելու, պրն Քեմբլը հայտարարել է, թե «ցանկանում է հանդիպել իր փաստաբանի հետ»: Դեկտեմբերի 8-ին նրա խնդրանքը մերժվել է՝ այն պատճառաբանությամբ, որ նա բավարար հիմքեր չի ներկայացրել ներքին քննություն սկսելու համար: 1977թ. մարտի 3-ին նույն պատճառաբանությամբ մերժվել է նաև 1976թ. դեկտեմբերի 28-ին ներկայացված հաջորդ խնդրագիրը, որում ասվում էր հետևյալը. «Ես մտադիր եմ բողոքարկել դատարանին Ալբանի բանտի աշխատակիցներից ստացած մարմնական վնասվածքների կապակցությամբ և կցանկանայի տեսնել իմ ներկայացուցչին: Միջադեպը տեղի է ունեցել սեպտեմբերի կեսին, և ես այս առիթով ևս մեկ անգամ հանդես եմ եկել խնդրագրով»:

20. Այս անգամ որոշակի կապ էր հաստատվել նաև դիմողների այդ ժամանակվա ներկայացուցիչների՝ պրնք Վուդֆորդի և Աքրոյդի հետ: 1977թ. հունվարի 17-ին պրն Քեմբլի կողմից օրինական ճանապարհով նրանց նամակ ուղարկվելուց հետո, վերջիններս հունվարի 28-ին դիմել էին Ներքին գործերի գրասենյակ, նշելով, որ իրենց հանձնարարված է ներկայացնել դիմողին քաղաքացիական վարույթներում և իրենց անհրաժեշտ է ստանալ Բանտի կառավարչի հետ դիմողի շահերին առնչվող խնդիրները քննարկելու հնարավորություն: Այնուամենայնիվ, հունվարի 24-ին նրանց կողմից պրն Քեմբլին ուղղված նամակը (հավանաբար, իրավաբանական օգնության վերաբերյալ) արգելվել էր փոխանցել հասցեատիրոջը:

1976թ. սեպտեմբերի միջադեպին մասնակից մյուս բանտարկյալների հայտարարությունները ևս ներկայացուցիչներին էին հասել այլևայլ ճանապարհներով: 1977թ. փետրվարի 10-ին նրանք դիմել էին Ալբանի Բանտի կառավարչին՝ նշելով, որ դիմողները և չորս այլ կալանավորներ իրավաբանական բնույթի խնդիրների ճշգրտման նպատակով խնդրում են այցելել իրենց՝ հատկապես խնդրելով առանձին հանդիպում: Փետրվարի 14-ին, այսինքն՝ փաստաբանի հետ խորհրդակցելու մասին Ներքին գործերի քարտուղարի կողմից հայր Ֆելին տրված թույլտվությունից հինգ օր անց (տե՛ս վերը՝ կետ 18), Կառավարիչը պատասխանել է այս հարցադրումներին, նշելով, որ դիմողը կարող է օգտվել նման հնարավորությունից, սակայն այժմ նրա դրությունը թույլ չի տալիս իրավաբանական օգնության հնարավորություն, քանի որ նրա գործի քննությունը Բանտի վարչությունում դեռ ավարտված չէ:

Ի պատասխան ներկայացուցիչների հունվարի 28-ի վերոհիշյալ նամակի՝ մարտի 3-ին Ներքին գործերի գրասենյակը հայտնել է, որ պրն Քեմբլի՝ հունվարի 17-ի նամակն իրենց սխալմամբ է հղվել, և որ նա չի կարող հաղորդակցվել կամ տեսակցություններ ակնկալել նրանցից՝ քանի դեռ պահպանված է «նախաքննության գաղտնիության կանոնը» (տե՛ս՝ ստորև կետ 44(գ)) հնարավոր ներկայացվելիք բողոքների նկատմամբ:

Մարտի 23-ին պրն Վուդֆորդին և Աքրոյդին թույլատրվել է խորհրդակցել պրն Քեմբլի հետ՝ Հանձնաժողովին ներկայացված դիմումի կապակցությամբ (տե՛ս ստորև՝ կետ 44 (ե)): 1977թ. սեպտեմբերի 1-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրություններում 1976թ. սեպտեմբերի միջադեպի վերաբերյալ արված զեկուցումը գործով քննություն սկսելու համար բավարար հիմք է համարվել: Քննությունը, որին դիմողը որևէ կերպ չի մասնակցել, ավարտվել էր նոյեմբերի 29-ին, իսկ դեկտեմբերի 16-ին (կամ մոտակա օրերին) դիմողը տեղեկացվել է քննության առարկա բողոքի կապակցությամբ իրավաբանական խորհրդատվություն ստանալու իր իրավունքի մասին:

21. Հետագայում դիմողներն ստացել են տարաբնույթ իրավաբանական խորհրդատվություններ, 1979թ. սեպտեմբերի 13-ի ծանուցագրերով նախաձեռնել են դատական վարույթ, հարձակման մեղադրանք են ներկայացրել ընդդեմ կալանավայրի որոշ հսկիչների, փոխկառավարչի և ՆԳ գրասենյակի: Դատարանում գործի լսումների ժամանակ (1983թ. սեպտեմբեր) վերոհիշյալ հարցերը, որոնց վերաբերյալ հայցադիմումները ներկայացվել էին մոտ տասնհինգ ամիս անց, դեռևս լուծված չէին:

Դ. Հայր Ֆելին ներկայացուցիչների այցելության պայմանները

22. Պրն Վուդֆորդի և Աքրոյդի (որոնք մեկ անգամ արդեն բարձրացրել էին այդ հարցը փետրվարի 10-ի նամակով (տե՛ս վերը՝ կետ 20)) 1977թ. մարտի 21-ի նամակի պատասխանում՝ ստացված մարտի 23-ին, Ալբանի Կալանավայրի կառավարիչը նշել է, որ հարցի տվյալ փուլում նրանց այցելությունը հայր Ֆելին պետք է կարգավորվեր 37 (2) կանոնով (տե՛ս ստորև՝ կետ 44 (դ)) և, հետևաբար, պետք է տեսանելի ու լսելի լիներ ներկա հսկիչի համար, ինչին նրանք պատասխանել են, թե չեն կարող համաձայնել նման պայմանների և կդիմեն Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Մայիսի 31-ին միջնորդները տեղեկացրել են Կառավարչին դիմումի նախնական ներկայացման, իսկ մարտի 31-ին՝ հայր Ֆելի կողմից դիմումը Հանձնաժողով ներկայացնելու մասին: Հաջորդ օրն ստացվել է Կառավարչի պատասխանը, որում նա թույլ էր տալիս նրանց տեսակցել դիմողին՝ հսկիչի համար տեսանելի, բայց ոչ լսելի պայմաններում (տե՛ս ստորև՝ կետ 44 (ե)):

Ե. Բժշկական խորհրդատվության մատչելիությունը դիմողների համար:

23. 1976թ. սեպտեմբերի 23-ին (կամ մոտակա օրերին) հայր Ֆելը խնդրագիր է ներկայացրել ՆԳ քարտուղարին՝ անկախ բժշկական խորհրդատվության խնդրանքով: Հոկտեմբերի 5-ին ՆԳ գրասենյակը պատասխանել է, թե քարտուղարը պատրաստ չէ բավարարելու այս խնդրանքը:

24. Փարկիըրստից Ալբանի կալանավայր վերադառնալուց հետո՝ մոտավորապես 1976թ. հոկտեմբերի 18-ին, պրն Քեմբլի կամ նրա ընտանիքի անդամների կողմից դիմում է ներկայացվել՝ անկախ բժշկական քննություն անցնելու խնդրանքով: Ըստ Կառավարության՝ նրան խորհուրդ է տրվել հարցը լուծել ՆԳ քարտուղարին խնդրագրով դիմելու միջոցով, ինչը նա չի արել: Ըստ դիմողի՝ խնդրանքը կտրականապես մերժվել է:

Զ. Հայր Ֆելի անձնական նամակագրության սահմանափակումները:

25. 1974թ. հոկտեմբերին՝ Հալ բանտում գտնվելու ժամանակ, ի պատասխան նախորդ տարվա հուլիսին ներկայացված խնդրագրի, հայր Ֆելը տեղեկացվել է, որ ՆԳ քարտուղարը չի կարող բավարարել քույր Փաուերի հետ նամակագրական կապ պահպանելու նրա խնդրանքը, պատճառաբանելով, թե չնայած այն հանգամանքին, որ դիմողը նրան ճանաչել է դեռևս մինչև ազատագրվումը, սակայն նրանց հարաբերությունները չեն համապատասխանում «մերձավոր ազգական» բնորոշմանը: Դեկտեմբերի 17-ին խորհրդարանի անդամներից մեկին հղած նամակում ՆԳ քարտուղարը հաստատել է իր այս որոշումը՝ այն հիմնավորելով «Ա կատեգորիայի» կալանավորների համար թույլատրելի նամակագրության ընդունված պրակտիկայով (տե՛ս ստորև՝ կետ 44 (ա)). դիմողի և քույր Փաուերի բարեկամության որևէ ապացույցներ չեն նկատվել, չնայած դիմողը նրան ավելի վաղուց է ճանաչել, քան պաշտոնապես թույլատրված նամակագիրներից շատերին:

Հայր Ֆելը բողոքել է իր այլ ընկերների, մասնավորապես՝ մեկ այլ միանձնուհու՝ քույր Մերի Բենեդիկտի հետ նամակագրական կապ պահպանելու հնարավորությունից զրկված լինելու կապակցությամբ: Ըստ Կառավարության՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողը նամակագրական կապ է ունեցել շուրջ 200 մարդու հետ, իսկ դատապարտվելուց հետո նրան թույլատրվել է կապ պահպանել 40 հոգու հետ:

II. Գործին առնչվող ներպետական օրենսդրություն և պրակտիկա
Ա. Կարգապահությունը կալանավայրում
1. Կարգապահական հանցանքներ և պատժամիջոցներ

26. Անգլիայում և Ուելսում բանտերի և բանտարկյալների նկատմամբ վերահսկողությունը և պատասխանատվությունը Բանտերի մասին 1952թ. Օրենքով դրվում է ՆԳ քարտուղարի վրա: Վերջինս այդ օրենքի 47 (1) բաժնի համաձայն սահմանում է «բանտերի կարգավորման և կառավարման ... և այնտեղ ազատագրվումը կրող անձանց դասակարգմանը, նրանց նկատմամբ վարվեցողությանը, աշխատանքին, կարգապահությանը և վերահսկողությանը վերաբերող» կանոնները: Այս կանոնները պարունակում են իրավական միջոցներ, որոնք դրվում են խորհրդարանի քննարկմանը՝ բացասական եզրակացության ընթացակարգով, այսինքն՝ դրանք գործում են, եթե խորհրդարանը այլ բան չի որոշում:

ՆԳ քարտուղարի կողմից հրապարակված և այժմ գործող (համապատասխան փոփոխություններով) կանոններն ընդունվել են 1964թ.:

27. 47-րդ կանոնը նախատեսում է ընդհանուր հաշվով տարբեր աստիճանի ծանրության քսանմեկ կարգապահական խախտում: Ինչ վերաբերում է տվյալ գործին, նշված կանոնով սահմանվում է, որ կալանավորը կարգապահական խախտում է կատարել, եթե նա

1. իրականացնում է խռովություն կամ այլ կալանավորների է դրդում է խռովության,
2. մարմնական վնասվածք է պատճառում բանտի հսկիչին:

28. Կանոնը թվարկում է նաև կարգապահական խախտման դեպքում նշանակվող տույժերի ցուցակը, որն սկսվում է նախազգուշացումով և ներառում է՝

(a) որոշակի արտոնություններից զրկելը,

(b) ընկերային աշխատանքներից մեկուսացումը,

(c) շահույթների կասեցում,

(d) աշխատավարձի կրճատում,

(e) վաղաժամկետ ազատ արձակման հնարավորության սահմանափակում:

«Առանձնապես ծանր» հանցանքների համար (b), (c) և (d) կետերում նշված պատժամիջոցները չեն կարող նշանակվել ավելի քան 56 օրվա ժամկետով, իսկ (a) և (e) կետերում նշվածների համար որևէ սահմանափակում նախատեսված չէ (51-րդ և 52-րդ կանոններ):

Մեկից ավելի հանցանքների դեպքում վերոհիշյալ պատժամիջոցները կարող են իրականացվել հաջորդաբար, թեև այս մասին Կանոնակարգում չի նշվում:

29. Կալանավայրերի մասին 1952թ. Օրենքի 25 (1) բաժնում նախատեսվում է.

«Սույն Օրենքի 47 բաժնի համաձայն ընդունված կանոններում կարող է սահմանվել դրույթ, ըստ որի այդ կանոններով նախատեսված դեպքերում ազատագրվման ձևով պատիժ կրող անձը կարող է վաղաժամկետ ազատվել պատժի կրումից՝ օրինակելի վարքի և աշխատասիրության համար, որպիսի դեպքերում պատիժը կրած անձի ազատ արձակվելուց հետո նա համարվում է պատիժը կրած»:

Համաձայն 5-րդ կանոնի (համապատասխանեցված այս բաժնին)՝ ցմահ ազատագրվման ձևով այլ պատիժ կրող անձը, եթե ցմահ պատժի դատապարտված չէ, կարող է «վաղաժամկետ ազատվել պատժի կրումից» նշանակված պատժի ոչ ավելի քան մեկ երրորդի չափով: Հետևաբար, սա նաև առավելագույն ժամկետն է, որը կարգապահական հանցանքի դեպքում կարող է ավելացվել արդեն կրվող փաստացի պատժին:

Համաձայն թե՛ Բանտերի մասին օրենքի, և թե՛ համապատասխան կանոնների՝ վաղաժամկետ ազատումը, որ իշխանությունների կողմից դիտվում է իբրև կալանավայրերի բարեփոխումների խթանման գործընթացի մաս, հայեցողաբար կիրառվող միջոց է: Սովորաբար պրակտիկայում յուրաքանչյուր բանտարկյալ ազատագրվման սկզբում տեղեկացվում է ազատ արձակվելու մոտավոր ժամկետի մասին՝ վաղաժամկետ ազատման

առավելագույն հնարավորության հաշվարկով, և նա ազատ է արձակվում այդ ժամկետում, եթե կարգապահական տույժերի հետևանքով պատժի ժամկետը չի երկարաձգվում: Վաղաժամկետ ազատ արձակման հնարավորությունից զրկումը, որ կիրառվում է ոչ միայն ծանր հանցագործությունների համար, չի ենթադրում նախնական դատավճռի խստացում, և բանտարկյալը ազատագրվման մեջ է մնում այդ դատավճռի իրավաբանական ուժով:

2. Կարգապահական վարույթը

(ա) Գործի հարուցումը

30. Կարգապահական խախտում առաջացնող արարքները կարող են նաև քրեական իրավունքի խնդրո առարկա լինել: Այսպես, օրինակ՝ հսկիչի նկատմամբ բռնության միջոցներ կիրառելը համապատասխանում է քրեական իրավունքով նախատեսված «հարձակում՝ մարմնական վնասվածք հասցնելով» հանցագործությանը: Մյուս կողմից, խռովությունը և խռովության դրդելը քրեական պատասխանատվություն ենթադրող արարքներ չեն համարվում, թեև կարող են պարունակել նաև դավադրության հանցակազմի տարրեր:

Ըստ Կառավարության՝ այն դեպքերում, երբ արարքը համապատասխանում է թե՛ կարգապահական և թե՛ քրեական հանցանքի բնորոշմանը, ՆԳ գրասենյակի բանտերի վարչությունը որոշում է ad hoc սկզբունքով, թե արդյո՞ք գործը պետք է փոխանցվի ոստիկանությանը՝ հետագա դատական հետապնդման ակնկալիքով: Սովորաբար այս կերպ վարվում են նշանակալի բռնությամբ ուղեկցված արարքների դեպքում, սակայն կարող են դեր խաղալ այլ հանգամանքներ ևս՝ կատարված արարքի տարածվածությունը բանտում, աշխատակազմի և մյուս բանտարկյալների կարծիքը, բանտարկյալի վարքը և անձնական գործի տվյալները, նախկինում վաղաժամկետ ազատման տեղ գտած սահմանափակումները և մինչև պատժի մարումը մնացած ժամկետը, քրեական գործի հնարավոր ծախսերի, դժվարությունների և անվտանգության հետ կապված խնդիրներ:

Ըստ դիմողների՝ այնուամենայնիվ, կալանավայրի ցանկացած հսկիչ դեպքի վերաբերյալ զեկույցը կարող է նաև անհատապես ներկայացնել ոստիկանություն, և Կառավարությունը համաձայն է, որ եթե նույնիսկ ոստիկանությունը որոշում է գործ չհարուցել դեպքի կապակցությամբ, հնարավոր է գործի մասնավոր հարուցումը: Ավելին, միևնույն փաստը, համենայն դեպս, տեսականորեն կարող է դառնալ թե՛ քրեական և թե՛ կարգապահական վարույթի առարկա (տես՝ Ռ. Վ. Հոգան (1960) համաանգլիական 3 իրավաբանական զեկույցները):

31. Այն դեպքերում, երբ կալանավորի նկատմամբ կարգապահական մեղադրանք կա, այն պետք է որքան հնարավոր է արագ ներկայացվի, իբրև առաջին ատյանի՝ ներկայացվելով Կալանավայրի կառավարչին՝ սովորաբար ոչ ուշ քան մեղադրանքը հարուցելու հաջորդ օրը (48-րդ կանոն): Կալանավորին մեղադրանքի մասին պետք է տեղեկացվի հնարավորինս արագ՝ ամեն դեպքում, մինչև Կառավարչի քննությունը (49-րդ կանոն):

Նվազ կարևորության խնդիրները Կառավարիչը լուծում է նաև միանձնյա: «Առանձնապես ծանր հանցագործությունների» համար մեղադրանքի դեպքում նա պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՆԳ քարտուղարին կամ վերջինիս հանձնարարությամբ գործը փոխանցել կալանավայրի Տեսուչների խորհուրդ (52-րդ կանոն):

(բ) Տեսուչների խորհուրդը

32. Տեսուչների խորհուրդը Անգլիայի և Ուելսի բոլոր կալանավայրերում ՆԳ քարտուղարի կողմից նշանակվող մարմին է, որի անդամներից առնվազն երկուսը պետք է հաշտարար դատավորներ լինեն (ոչ անպայման իրավաբաններ): Անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, եթե ՆԳ քարտուղարը պակաս ժամկետ չի սահմանում (Կալանավայրերի մասին 1952թ. օրենքի բաժին 6՝ փոփոխված Դատարանների մասին 1971թ. օրենքով և 92-րդ կանոնով): Նրանք կարող են վերանշանակվել:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունի 115 խորհուրդ՝ յուրաքանչյուրը 8-24 անդամով, որոնք աշխատում են ոչ վճարովի հիմունքներով, սակայն ստանում են կրած ծախսերի

փոխհատուցում: Յուրաքանչյուր ոք կարող է հավակնել նման նշանակման, սակայն պրակտիկայում նշանակվում են գործող անդամների կողմից առաջարկվող թեկնածուները: Այս նշանակումների ժամանակ հիմնականում առաջնորդվում են մագիստրատների և ոչ մագիստրատների հավասար քանակը պահպանելու սկզբունքով՝ ապահովելու համար անհրաժեշտ անձնական հատկություններ և ժամանակ ունեցող շահախնդիր մարդկանց ներգրավվածությունը, ինչպես նաև առավելագույնս արտացոլելու համար բնակչության օբյեկտիվ կտրվածքի մոդելը: Սովորաբար խորհուրդը նշանակվում է եռամյա ժամկետով: ՆԳ քարտուղարի կողմից խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման իրավունքի վերաբերյալ որևէ կանոնակարգում չկա, և լիազորությունների վաղաժամկետ վայր դնելը, ըստ Կառավարության, կարող է պահանջվել միայն բացառիկ դեպքերում:

33. Խորհրդի լիազորությունները, բացի առկա նախադրյալների հիման վրա կարգապահական խախտումների համար մեղադրանքի քննությունը, ներառում է նաև կալանավորների բողոքները և պահանջները լսելու կալանավայրի կառավարման և կալանավորների նկատմամբ վերաբերմունքի առումով ուշադրության արժանի խնդիրները կառավարչին ներկայացնելու և ՆԳ քարտուղարին զեկույցներ ներկայացնելու լիազորությունները (94, 95 և 97-րդ կանոններ): Հույժ անհրաժեշտության դեպքում խորհուրդը իրավասու է կասեցնել կալանավայրի ցանկացած աշխատակցի պարտականությունների կատարումը՝ մինչև այս կապակցությամբ ՆԳ քարտուղարի որոշման հայտնի դառնալը (94-րդ կանոն (4)): Խորհրդի անդամները պետք է հաճախակի այցելեն կալանավայր, ունեն կալանավայրի ցանկացած տարածք մուտք գործելու և մատյաններին ծանոթանալու իրավունք, կարող են հարցազրույց ունենալ ցանկացած կալանավորի հետ՝ առանց կալանավայրի աշխատակցի ներկայության (96-րդ կանոն): Վճիռներ ընդունելու խորհրդի իրավունքը սովորաբար նրա լիազորությունների ընդամենը փոքր մասն է կազմում, և վերաբերում է կալանավայրում գրանցվող կարգապահական գործերի այն նվազ տոկոսին, որ ներկայացվում է խորհրդի դիտարկմանը, և հազվադեպ է, որ գործը վերաբերում է «առանձնապես ծանր հանցանքներին»:

Տեսուչների խորհրդի լրակազմ գործառույթներն ուսումնասիրվել են «Գերագույն ատյանի դատավորի», քրեական բարեփոխումների Հովարդի Լիգայի և իրավախախտների հոգաժողության և տեղաբաշխման ընկերակցության նախաձեռնած հանձնաժողովի կողմից: 1975թ. զեկույցում («Ջելիկոյի զեկույց») այս հանձնաժողովը նշել է, որ «խորհուրդները չափազանց լուրջ են վերաբերվում իրենց վրա դրված պարտականությունների կատարմանը», սակայն, «չնայած արդարադատություն իրականացնելու փորձերին, իրատեսություն այն չի հաջողվում իրականացնել»: Հանձնաժողովը եզրահանգել է, որ կարևոր գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում ներգրավված լինելը միանգամայն անհամատեղելի է ակնառու անկախություն ցուցադրելու վերադաս մարմնի պահանջի հետ, ուստի առաջարկվել է, որ «վերադաս մարմինը չունենա կարգապահական գործառույթներ»: Այդուհանդերձ, մանրակրկիտ քննությունից հետո, ՆԳ քարտուղարը 1976թ. ընդունել է որոշում, որով «Տեսուչների խորհուրդների անկախությունը համատեղելի է համարվում նրանց գործառույթների հետ»:

Խորհուրդների կարգավիճակի հարցը քննարկման առարկա է դարձել նաև սրբ. Ջերմենի գործով (տե՛ս ստորև՝ կետ 39): Վերաքննիչ ատյանում լորդ դատավոր Ուոլլերը նշել է, որ «Տեսուչների խորհուրդը կոչված է պահպանելու ուժերի հավասարակշռությունը, մի կողմից՝ կալանավայրի կառավարչի և ներքին կարգապահության, մյուս կողմից՝ կալանավորի միջև՝ վեճեր լուծելու գործառույթի իրականացման ժամանակ հանդես գալով իբրև անաչառ և անկախ իշխանություն»: Ըստ լորդ դատավոր Մեգոյի՝ վեճեր լուծելու խորհրդի գործառույթը դիտվում է իբրև առանձին, անկախ և մյուս լիազորություններից անջատ գործառույթ:

(գ) Վարույթը տեսուչների խորհրդում

34. Առանձնապես ծանր հանցանքի մեղադրանքով գործ՝ Խորհուրդ մուտք գործելու դեպքում նախագահը պարտավոր է գումարել խորհրդի նիստ, որին ներկա պետք է լինեն ոչ

ավելի քան հինգ, և ոչ պակաս քան երեք անգամ, որոնցից առնվազն երկուսը պետք է հաշտարար դատավորներ լինեն (52-րդ կանոն): Եթե մեղադրանքը քննության առնելուց հետո խորհուրդը այն ապացուցված է համարում, ապա պետք է սահմանի վերը՝ 28-ում կետում նշված տույժերից որևէ մեկը, որի ի կատար ածումը, այնուամենայնիվ, կարող է հետաձգվել:

35. Թե՛ 1952թ. Կալանավայրերի մասին օրենքը և թե՛ Կանոնները չեն պարունակում տեսուչների խորհրդում գործերի վարույթի մանրամասն նկարագրություն: Սակայն 49-րդ (2) կանոնում (նման դրույթ առկա է նաև օրենքի բաժին 47 (2)-ում) ասվում է հետևյալը, «Կալանավորի նկատմամբ մեղադրանքի առկայության դեպքում, նա իրավունք ունի տեղեկանալ մեղադրանքի էությանը և ներկայացնել սեփական փաստարկները»:

Վերոհիշյալը, որպես կանոն, կիրառվում է պրակտիկայում: 1977 թվականից ՆԳ գրասենյակի կալանավայրերի վարչությունը խորհուրդներին տրամադրում է ուղեցույց-բուկլետ՝ «Տեսուչների խորհրդում վեճերի լուծման վարույթի» վերաբերյալ:

36. Խորհրդում գործի վարույթը սկսվում է կալանավայրի ծառայողի կողմից դեպքի կապակցությամբ կառավարչին ներկայացված զեկույցով: Կալանավորը ստանում է «զեկույցի մասին ծանուցումը», որում տրվում է մեղադրանքի էությունը, տեղը, օրը և ժամանակը, և նա կարող է գրավոր կերպով պատասխանել դրան: Կալանավորին տրվում է նաև հատուկ թերթիկ, որը կանոնակարգային ուժ չունի, այլ պարզապես խորհրդում գործի վարույթի ուղեցույցն է: Կալանավորից պահանջվում է ձանաչել կամ հերքել մեղադրանքը, նա կարող է հարցեր տալ մեղադրողի վկաներին, պահանջել սեփական վկաների հարցաքննություն և անձամբ ցուցմունքներ տալ: Դռնփակ նիստն անցկացվում է կալանավայրի ներսում, նույն պայմաններում էլ արձակվում է խորհրդի որոշումը:

Բուն կանոններում որևէ դրույթ չի պարունակվում խորհրդում գործի վարույթի ժամանակ իրավաբանական օգնության կամ պաշտպանության կողմի ներկայության վերաբերյալ: Մինչև 1981թ. կիրառվող պրակտիկայում կալանավորին լսումներից առաջ իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունք չէր տրվում: Ավելին, Ֆրեյզերն ընդդեմ Մադջի գործով Վերաքննիչ դատարանը (1975թ., 3 համաանգլիական իրավաբանական զեկույցներ 78) վճռել է, որ թեև խորհուրդը պարտավոր է կարգապահական վեճերը լուծել բնական իրավունքի և ակտի պահանջներին համապատասխան, այնուհանդերձ, կալանավորին ներկայացնող փաստաբանի մասնակցություն չի թույլատրվում: Ինչևէ, Ռ.-ն ընդդեմ Ալբանի կալանավայրի գործով, *ex parte Tarrant* (1984, 1 համաանգլիական իրավաբանական զեկույցներ 799), Բաժանմունքային դատարանի 1983թ. նոյեմբերի 8-ի որոշման համաձայն՝ չնայած փաստաբանի մասնակցության վերաբերյալ հստակ ցուցումների բացակայությանը, խորհուրդն իրավասու է, ըստ հայեցողության, թույլատրել նման մասնակցություն: Ավելին, կալանավորը իրավունք ունի պահանջել խորհրդի այս լիազորության իրականացումը և փաստաբանի մասնակցության իր պահանջի պատշաճ քննարկում, հակառակ դեպքում խորհրդի որոշումը կարող է չեղյալ համարվել: Դատավոր Վեբսթերը ավելացրել է նաև, որ եթե ոչ միշտ, ապա մեծիմասամբ, խռովության մեղադրանքով գործերի վարույթում տեսուչների խորհուրդներից և ոչ մեկը չէր մերժի փաստաբանի մասնակցության պահանջը:

37. 1978թ. սուրբ Ջերմենի գործով (տե՛ս ստորև՝ պարագրաֆ 39) Վերաքննիչ դատարանը ստիպված էր որոշել, իրավագործության հստակեցման նկատառումներով, թե արդյոք Տեսուչների խորհրդում քննվող գործը քրեական է և պետք է լուծվի համապատասխան օրենսդրության շրջանակներում: Դատարանը բացասական պատասխան է տվել այս հարցին:

Լորդ դատավոր Ուոլթերը հիմնավորել է իր որոշումն այն փաստով, որ խորհրդում քննության առարկա մեղադրանքները քրեական բնույթ չունեն, այսինքն՝ «չէին սպառնում հասարակական կարգին», և որ խորհուրդը քրեական իրավագործության ատյան չի հանդիսանում:

Լորդ դատավոր Շոն գտել է, որ վարույթը պարունակում է քրեական գործի որոշ տարրեր (օրինակ՝ ներկայացված մեղադրանք, քննություն, վեճի լուծում և հնարավոր պատիժ), սակայն զուրկ է դրա հիմնական բնորոշ գծերից, մասնավորապես՝ հասարակական կարգի և իրավունքի դեմ ուղղված ոտնձգություններին առնչվող քրեական վարույթի պարտադիր

տարրերից: Վարույթի բնույթը որոշելու խնդրում կարևոր դեր է խաղում նաև դրա նպատակը և այն համատեքստը, որում ներկայանում է գործը: Եթե նույնիսկ Կանոններով նախատեսված արարքը համապատասխանում է նաև ընդհանուր իրավունքում նկարագրված հանցագործությանը և հանգեցնում է պատիժ նախատեսող հետևանքների, այս հանգամանքը, այնուամենայնիվ, խորհրդի լուծմանը չի վերածում քրեական գործի վարույթի: Գործն ի սկզբանե իրենից տեղային կարգապահական խնդիր է ներկայացնում, սահմանափակված է կալանավայրի ներքին շրջանակներում՝ առանց հասարակական կարգի և իրավունքի դեմ ուղղված ոտնձգությունների հետ կապված խնդիրներ կարգավորելու հավակնությունների: Անտրամաքանական և անհեթեթ կլիներ նաև քրեական գործ դարձնել կանոններով նախատեսված այն արարքը, ինչն ընդհանուր իրավունքի տեսանկյունից հանցագործություն չի համարվում:

Այնուամենայնիվ, Ռ.-ն ընդդեմ Հայփոինթի Կալանավայրի տեսուչների խորհրդի գործով, ex parte McConkey, դատավոր ՄքՔալաֆը 1982թ. սեպտեմբերի 20-ի իր որոշման մեջ (Թայմսի իրավաբանական զեկույցներ, սեպտեմբերի 23, 1982թ.) նշել է Կանոնների խախտման և օրենքի խախտման վերաբերյալ մեղադրանքների նմանության մասին. երկու դեպքում էլ առկա է վեճի լուծում, որը կարող է հանգեցնել պատասխանատվության՝ տույժերի ձևով, մասնավորապես՝ տվյալ դեպքում, վաղաժամկետ ազատման հնարավորության սահմանափակման ձևով: Չնայած կալանավայրում տեղ գտած իրավախախտումները վերաբերում են մասնավոր իրավունքին, դրանք, այդուհանդերձ, սկզբունքորեն «քրեական» են. Կանոնները պետք է նվազ խիստ լինեն, քան համապատասխան քրեական մեղադրանքի համար նախատեսված դրույթները: Եվս մեկ անգամ, Տարանտի գործով (տե՛ս վերը՝ կետ 36) Տեսուչների խորհուրդը որոշել էր, որ կարգապահական արարքի ապացուցման համար կիրառվող չափանիշները համապատասխանում են քրեական իրավունքին:

3. Տեսուչների խորհրդի կարգապահական վարույթի հետագա վերանայումը (ա) Ներքին միջոցները

38. Համաձայն 56-րդ կանոնի, Տեսուչների խորհրդի սահմանած կարգապահական տույժերը կարող են հանվել կամ մեղմացվել ՆԳ քարտուղարի կամ, վերջինիս ցուցումով, հենց իր՝ խորհրդի կողմից: Վաղաժամկետ ազատման հնարավորության սահմանափակումների վերականգնման կարգը և չափանիշները սահմանված են Նախարարի ընդունած 1976/58 շրջաբերական ցուցումներում: Կալանավորը պետք է հանդես բերի վարքագծի բարելավման նշանակալի առաջընթաց. վաղաժամկետ ազատման հնարավորության վերականգնման լիազորությունը չպետք է օգտագործվի պարզապես չափազանց խիստ կամ կասկածելի թվացող սահմանված պատիժը փոխելու նպատակով:

Նշանակված տույժի վերացման կամ մեղմացման վերաբերյալ դիմումները, որպես կանոն, ներկայացվում են հենց խորհրդին՝ իբրև առաջին ատյանի: Որոշումը կարող է բողոքարկվել ՆԳ քարտուղարին: Ըստ 7-րդ կանոնի՝ յուրաքանչյուր կալանավոր կալանավայր մուտք գործելիս պետք է գրավոր տեղեկացվի, inter alia, խնդրագրեր ներկայացնելու կարգի մասին:

Սուրբ Ջերմենի գործի կապակցությամբ (տե՛ս ստորև՝ կետ 39) Վերաքննիչ դատարանի անդամները կարծիք էին հայտնել, թե 56-րդ կանոնով նախատեսված խնդրագիրը չի կարող դիտվել իբրև պաշտոնական դիմում. ի թիվս այլոց, նշվել է նաև, որ ՆԳ քարտուղարը չի կարող չեղյալ հայտարարել մեղավոր ճանաչելու վերաբերյալ խորհրդի որոշումը:

(բ) Դիմում ներպետական դատարաններ

39. (ա) Տեսուչների խորհրդում լսված կարգապահական վարույթները վերանայելու անգլիական դատարանների իրավագործության հարցը խնդրո առարկա էր դարձել Ռ.-ն ընդդեմ Հալ կալանավայրի տեսուչների խորհրդի՝ ex parte, սուրբ Ջերմենը և այլոք գործով: Այս գործով վերադաս ատյանի դատարանը պահանջել է չեղյալ հայտարարել խորհրդի 1976թ. ընդունած որոշ որոշումներ՝ բնական իրավունքի պահանջներին չհամապատասխանող հիմքով:

(բ) 1977թ. դեկտեմբերի 6-ի վճռով (1978թ. 2 համաանգլիական իրավաբանական գեկույցներ 198) Բաժանմունքային դատարանը որոշել է, որ չնայած խորհուրդը՝ ստիպված լինելով իրականացնել դատական մարմնի գործառույթ, հանդես է եկել նման մարմնի դերում, այնուամենայնիվ, այս դեպքում չէր կարող կիրառվել ստորադաս ատյանի վարույթից գործը պահանջելու վերադաս ատյանի իրավունքը, քանի որ գործը սահմանափակվում էր ներքին մարմնում սեփական կարգապահական խնդիրների լուծման մասնավոր վարույթով: Հատուկ շեշտվել է այն հանգամանքը, որ խորհուրդը «սերտորեն կապված է» կալանավայրի հետ և վեճեր լուծելիս, փաստորեն, հանդես է եկել իբրև վերջինիս կարգապահական համակարգի տարր:

(գ) Այս որոշումը գանգատարկվել է 1977թ. դեկտեմբերի 20-ին: Վերաքննիչ դատարանը 1978թ. հոկտեմբերի 3-ի իր վճռով բավարարել է գանգատը (1979թ. 1 համաանգլիական իրավաբանական գեկույցներ 701): Դատարանը նշել է նաև, որ օրենքը չի պահանջում դատարաններից հրաժարվել լիազորությունից, եթե վարույթը վերաբերում է ներքին կարգապահական խնդիրների: Որևէ պարտադիր լիազորություն չի վերագրվում նաև վերադաս ատյանին՝ կարգապահական գործը Տեսուչների խորհրդի վարույթից պահանջելու և հրապարակային կարգով լուծելու հարցում: Խորհրդի կարգապահական գործառույթներն առանձնանում են և անկախ են մյուս գործառույթներից: Կարգապահական խախտումների վերաբերյալ վեճեր լսելիս՝ խորհուրդը ոչ թե դիտարկում է կալանավայրի ընդհանուր հաստատված կարգը՝ վարչական մարմնի կարգով, այլ հանդես է գալիս իբրև անկախ մարմին, որը կարող է տույժի ենթարկել կալանավորին միայն համապատասխան քննությունից և/կամ լսումներից հետո: Այսպիսով, նա իրականացնում է դատական մարմնի գործառույթ, և ուստի, վերադաս դատական ատյանը կարող է վերահսկողություն իրականացնել՝ պահանջելով գործը խորհրդի վարույթից: Այնուամենայնիվ, միջոցը կիրառելի է ըստ հայեցողության՝ մասնավորապես այն դեպքերում, երբ տեղ է գտել արդարության սկզբունքի ակնհայտ ոտնահարում, ինչը հանգեցրել է աննշան կամ պարզապես տեխնիկական թերացումից առավել շոշափելի անարդարության:

40. Այնուհետև գործը փոխանցվել է Բաժանմունքային դատարանին, որը 1979թ. հունիսի 15-ի վճռով (1979թ. 3 համաանգլիական իրավաբանական գեկույցներ 545) չեղյալ է հայտարարել Հալ կալանավայրի Տեսուչների խորհրդի որոշ որոշումներ: Բաժանմունքային դատարանը նշել է, որ Կալանավայրերի մասին օրենքի բաժին 47-ը և 49-րդ (2) կանոնը (տե՛ս վերը՝ կետ 35) ամրագրում են բնական իրավունքի այն հիմնադրույթը, որ վիճող կողմերից յուրաքանչյուրն արդար լսումների իրավունք ունի. թեև փաստերը վկայում են, որ չեղյալ հայտարարված որոշումների նկատմամբ այս սկզբունքը կիրառելի չէ և, ընդհանուր առմամբ, խորհրդի վարույթում բողոքարկման ենթակա փաստ տեղ չի գտել:

Բաժանմունքային դատարանն ընդգծել է այն հանգամանքը, որ արդար լսումների իրավունքը ենթադրում է վկայությունների լսում. կալանավորին վկաներ կանչելու իրավունքից զրկելու Նախագահի որոշումը պետք է պատշաճ կերպով հիմնավորված լինի (պատճառաբանված չլինի պարզապես վարչական անհրաժեշտությամբ): Ավելին, կալանավորի դեմ տրվող ցուցմունքները ևս պետք է մատչելի լինեն վերջինիս համար, մասնավորապես՝ հնարավորություն ընձեռելով նրան առերես հարցաքննել վկաներին, որոնց ցուցմունքները նախապես ներկայացվել էին խորհրդին:

41. Վերադաս ատյանում գործը վերաքննելու պահանջը պետք է ներկայացվի վիճարկելի վճռի ընդունումից հետո՝ սահմանված ժամկետում. 1976թ. դրա համար սահմանված է եղել վեցամսյա, 1978թ. հունվարի 11-ից ի վեր՝ եռամսյա ժամկետ: Այս ժամկետի լրանալուց հետո պահանջ ներկայացնելու համար անհրաժեշտ է թույլտվություն. հարցը ըստ հայեցողության լուծելի է, սակայն փորձը ցույց է տալիս, որ ՆԳ գրասենյակից առարկություններ չլինելու դեպքում ժամկետանց պահանջները սովորաբար չեն մերժվում:

Տեսուչների խորհրդի կարգապահական վարույթները դատարանում չեղյալ հայտարարվելու դեպքում, հետագայում, վիճարկելի հարցը կարող է փոխանցվել այլ կազմով խորհրդի քննությանը:

Բ. Կալանավորների նամակագրությունը և այցելությունները

42. Կալանավորների նամակագրության և այցելությունների հարցը կարգավորվում է մի շարք կանոններով:

Կալանավայրերում անվտանգության միատեսակ համակարգ պահպանելու նկատառումներով՝ ՆԳ քարտուղարը կալանավայրերի կառավարիչներին է տրամադրում նաև վարչական ուղեցույցներ՝ հրաման-ցուցումների («Հրահանգներ») և շրջաբերական ցուցումների («Ցուցումներ») ձևով: Այլ հրահանգների բացակայության դեպքում՝ կառավարիչները պետք է առաջնորդվեն այս ուղեցույցներով, սակայն դա չի նշանակում, որ դրանք օրենքի ուժ ունեն: Ինչ վերաբերում է նամակագրության և այցելությունների խնդրին, այստեղ ուղեցույցները երկակի դեր են կատարում. մի կողմից՝ սահմանափակում են կանոններով կառավարիչներին վերապահվող լիազորությունները, մյուս կողմից՝ սահմանում են որոշ դեպքերում ՆԳ քարտուղարի ծայնի որոշիչ լինելը:

Մինչ 1981թ. դեկտեմբերի 1-ը վերոհիշյալ ուղեցույցները ներկայացվել էին Խորհրդարանի երկու պալատների անդամների ուշադրությանը, սակայն իրենց՝ կալանավորներին կամ հանրությանը դրանք չէին ներկայացվել: Ճիշտ է կալանավորները ծանուցումների ձևով ստացել էին տեղեկություններ՝ նամակագրության և այցելությունների վերահսկման որոշ ասպեկտների վերաբերյալ:

1. Ընդհանուր իրավիճակը տվյալ գործի համար առիթ հանդիսացած միջադեպի ժամանակ.

43. Տվյալ գործի համար առիթ հանդիսացած միջադեպի ժամանակ գործող հիմնական կանոնները ներառում էին հետևյալը՝

«33 (1) Կալանավայրում գործող կարգը պահպանելու, հանցագործությունների կանխման և յուրաքանչյուրի շահերի պաշտպանության նկատառումներով՝ ՆԳ քարտուղարը կարող է, կոնկրետ գործով կամ ընդհանրապես, որոշակի սահմանափակումներ մտցնել կալանավորի և այլ անձանց թույլատրելի հաղորդակցման առումով:

(2) Կալանավորը չի կարող կալանավայրից դուրս գտնվող անձանց հետ շփվել առանց պետական քարտուղարի թույլտվության, բացառությամբ օրենքով կամ կանոնակարգով նախատեսված դեպքերի:

(3) Կալանավայրի կառավարիչը կամ նրան փոխարինող անձը կարող է կարդալ և ուսումնասիրել կալանավորին ուղղված կամ նրանց կողմից ուղարկվող ցանկացած նամակ կամ հաղորդագրություն և կարող է, բացառությամբ կանոնակարգով նախատեսված դեպքերի, ըստ իր հայեցողության, բովանդակության կամ ծավալի վերաբերյալ առարկությունների դեպքում կասեցնել դրա ընթացքը:

(4) Պետքարտուղարի այլ ցուցումների բացակայության դեպքում՝ կալանավորի բոլոր տեսակցությունները պետք է տեղի ունենան հսկիչի ներկայությամբ:

(5) Պետքարտուղարի այլ ցուցումների բացակայության դեպքում՝ կալանավորի հետ ցանկացած տեսակցություն պետք է անցնի հսկիչի (կալանավայրի պաշտոնյայի) ներկայությամբ և լսելի լինի նրա համար, բացառությամբ կանոնակարգով նախատեսված դեպքերի:

(6) Պետքարտուղարը կարող է ցուցումներ տալ ընդհանրապես կամ կոնկրետ կալանավորին կատարվելիք այցելության կամ տեսակցությունների թույլատրելի օրերի և ժամերի վերաբերյալ»:

«34 (8) Ըստ 34-րդ կանոնի (կարգավորում է տեսակցությունների և նամակագրության թույլատրելի քանակը)՝ կալանավորը չի կարող հաղորդակցվել այլ անձանց հետ՝ իրավաբանական կամ այլ գործով, կամ իր ազգականը կամ մտերիմ բարեկամը չհանդիսացող անձանց հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրում է պետքարտուղարը»:

44. Վերոհիշյալ կանոնները լրացվել կամ փոփոխվել են՝ Հրահանգների, Ցուցումների կամ նոր կանոնների միջոցով, արդյունքում ներառելով հետևյալը՝

(ա) Համաձայն 34-րդ (8) կանոնի՝ լրացված 5A 23 Հրահանգով, մերձավոր ազգականներից բացի այլ անձանց հետ տեսակցելու կամ նամակագրական կապ պահպանելու համար կալանավորներին անհրաժեշտ էր ունենալ ՆԳ քարտուղարի թույլտվությունը: Այնուամենայնիվ, նրանք սովորաբար հնարավորություն են ունենում տեսակցելու այլ ազգականների կամ ընկերների և՛ նաև առանց նման թույլտվության, սակայն կալանավայրի կառավարիչը կարող է արգելել նման տեսակցությունները կամ շփումները՝ անվտանգության, հաստատված կարգի պահպանման, հանցագործությունների կանխարգելման նկատառումներով: Կառավարիչներն իրավասու են նաև թույլատրել կալանավորին տեսակցել և շփվել այնպիսի անձանց հետ, որոնց նա ծանոթ չի եղել նախքան ազատագրվումը: Ճիշտ է, քիչ հավանական է, որ նման արտոնություն թույլատրվի «A կատեգորիայի» կալանավորներին, ինչպիսիք պրն Քեմբլը և հայր Ֆելն են: Անվտանգության այս կատեգորիան ներառում է այն կալանավորներին, որոնք փախուստի դեպքում ծայրահեղ վտանգավոր կարող են լինել հասարակության, ոստիկանության և պետական անվտանգության տեսանկյունից:

(բ) Քաղաքացիական կամ քրեական գործերով կողմ հանդիսացող կալանավորների նամակագրության վերահսկողության կարգը սահմանված է 1973թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած 37A (1) կանոնով, որում, մասնավորապես, ասվում է.

«Դատական վարույթի կողմ հանդիսացող կալանավորը վարույթի առնչությամբ կարող է նամակագրական կապ պահպանել իր փաստաբանի հետ, և կառավարիչն իրավասու չէ կարդալ կամ կասեցնել հաղորդագրությունները (ըստ Կանոնակարգի 33-րդ (3) կանոնի), եթե հիմքեր չունի ենթադրելու, որ դրանց բովանդակությունը չի առնչվում վարույթի հետ»:

(գ) Մինչ 1975թ. օգոստոսի 6-ը կալանավայրում գտնվող անձինք ստիպված էին խնդրագիր ներկայացնել ՆԳ քարտուղարին՝ քաղաքացիական գործերով իրավաբանական խորհրդատվություն ստանալու կամ ցուցումներ տալու համար (բացառությամբ ամուսնալուծության որոշ դեպքերի): Այդուհետ՝ 45/1975 ցուցումով որոշ փոփոխություններ էին ներմուծվել՝ հետագայում արտացոլվելով 37A (4) կանոնում, որն ուժի մեջ էր մտել 1976թ. ապրիլի 26-ին և սահմանում էր հետևյալը.

«Պետքարտուղարի ցուցումներով կալանավորը կարող է կապ պահպանել իր միջնորդի հետ՝ ստանալու համար իրավաբանական խորհրդատվություն այն գործի առնչությամբ, որում ինքը կողմ է հանդիսանում, կամ ցուցումներ տալու ներկայացուցչին՝ նման հայց ներկայացնելու համար»:

45/1975 ցուցումում, իսկ հետագայում նաև 17A Հրահանգում, *inter alia*, ասվում է.

(i) կալանավայրում գտնվող անձը նախքան հայց ներկայացնելը պետք է իրավաբանական խորհրդատվություն ստանա իր ներկայացուցչից:

(ii) յուրաքանչյուր փուլում նախ Կալանավայրի կառավարչին պետք է ներկայացվի հիմնավորված գրավոր դիմում՝ նամակի կամ տեսակցության միջոցով անհրաժեշտ օգնությունն ստանալու խնդրանքով: Այն պետք է անմիջապես բավարարվի, բացառությամբ այն դեպքերի, երբ ազատագրվման հետ առնչվող կամ դրանից բխող գործով քաղաքացիական հայց է հարուցվել ՆԳ գրասենյակի (կամ դրա պաշտոնյայի) դեմ և պետք է գործի «նախաքննության գաղտնիության կանոնը»:

Այս կանոնի էությունը կայանում է նրանում, որ կալանավորը չի կարող նամակագրության կամ տեսակցության միջոցով իրավաբանական խորհրդատվության հնարավորություն ստանալ, եթե պատշաճ կերպով չի դիմել համապատասխան ներքին օղակներին (ՆԳ քարտուղարին ուղղված խնդրագիր կամ Տեսուչների խորհրդին ուղղված դիմում) և չի ստացել նրանց հստակ պատասխանը՝ դրական, թե՛ բացասական:

(դ) Իրավախորհրդատուների հետ տեսակցությունը կարգավորվում է հետևյալ հատուկ կանոնով՝

«37 (1) Կալանավորի իրավախորհրդատուին պետք է տրամադրվի հնարավորություն հարցաքննելու կալանավորին ցանկացած գործի առնչությամբ (քրեական, թե՛

քաղաքացիական), որով վերջինս կողմ է հանդիսանում, հսկիչի ներկայությամբ՝ նրա համար լսելի, բայց ոչ տեսանելի պայմաններում:

(2) Պետքարտուղարի թույլտվությամբ կալանավորի իրավախորհրդատուն կարող է ցանկացած այլ իրավական հարցով հարցազրույց ունենալ կալանավորի հետ՝ հսկիչի ներկայությամբ՝ վերջինիս համար տեսանելի և լսելի պայմաններում»:

Տեսուչների խորհրդում իրականացվող կարգապահական վարույթն իշխանությունների գնահատմամբ՝ «իրավական վարույթ» չէ՝ Կանոնների, մասնավորապես՝ 37-րդ (1) և 37-րդ (A) կանոնի իմաստով:

(ե) Հանձնաժողով դիմելու համար սահմանված է հատուկ կարգ (պակաս խիստ):

2. Դրությունը 1981թ. դեկտեմբերի 1-ից հետո

45. Մինչ 1981թ. դեկտեմբերի 1-ը թե՛ Հրահանգները և թե՛ Ցուցումները, բացի կալանավորների տեսակցությունների և նամակագրության հետ կապված խնդիրներից, ցուցումներ են պարունակում նաև կալանավայրի ընթացիկ կառավարման վերաբերյալ: Դեկտեմբերի 1-ից այս ցուցումները էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելին, այս խնդրի վերաբերյալ վերանայված Հրահանգները հրապարակվել են միասնական ժողովածուի տեսքով՝ կալանավորների տեսակցություններին և նամակագրությանը չվերաբերող, ընդհանուր կառավարչական խնդիրներն առանձնացնելով Հրահանգներից և ամփոփելով Ցուցումների մեջ: Բուն կանոնները փոփոխությունների չեն ենթարկվել, սակայն Կառավարությունը նշել է, որ նամակագրության խնդրին առնչվող 34-րդ (8) կանոնը (տե՛ս վերը՝ կետ 43) ուժը կորցրած կձանաչվի ողջամիտ ժամկետում:

46. Որքանով առնչվում է սույն գործին, նախկին դիրքորոշումն այժմ փոփոխվել է հետևյալ առումներով.

(ա) Նոր Հրահանգներով (թիվ 5B23-5B30) սահմանվում է, որ, որոշակի բացառություններով, կալանավորը կարող է նամակագրական կապ պահպանել ցանկացած անձի կամ կազմակերպության հետ, եթե պահպանվում են նամակագրության բովանդակության վերաբերյալ դրույթները և «միաժամանակյա քննության կանոնը»:

(բ) 5B34 չ Հրահանգով նախատեսված «միաժամանակյա քննության կանոնը» փոխարինել է «նախնական քննության կանոնին» (տե՛ս վերը՝ կետ 44 (գ)): Կալանավորը կարող է իրավաբանական խորհրդատվություն ստանալ կալանավայրում իր նկատմամբ վերաբերմունքի առնչությամբ հարուցված քաղաքացիական գործի կապակցությամբ՝ համապատասխան գանգատը սահմանված կարգով ներկայացնելուց հետո. նա այլևս ստիպված չէ սպասել ներքին քննության արդյունքներին:

(գ) 37-րդ կանոնը, ինչպես և նախկինում, վերաբերում է կալանավորի հետ իրավախորհրդատուի տեսակցությանը այն գործի առնչությամբ, որով վերջինս կողմ է հանդիսանում: Ըստ նոր (5A34) Հրահանգի՝ մասնագիտական գործունեության շրջանակներում իրավախորհրդատուի այլ տեսակցությունները կալանավորի հետ՝ հսկիչի համար ոչ լսելի պայմաններում, նույնպես թույլատրելի են, պայմանով, որ քննարկման նյութի վերաբերյալ նախօրոք տեղեկացվել է կալանավայրի կառավարչին և այն չի հակասում նոր՝ 5B34 Հրահանգի պահանջներին՝ իրավախորհրդատուի հետ կալանավորի տեսակցության սահմանափակումների վերաբերյալ (ներառյալ՝ «միաժամանակյա քննության գաղտնիության կանոնը»): Քննարկման բովանդակությունը չբացահայտելու դեպքում՝ տեսակցությունը, մինևույն է, կթույլատրվի, սակայն հսկիչի համար լսելի պայմաններում:

Գ. Բժշկական խորհրդատվության մատչելիությունը կալանավորների համար

47. Ըստ 17-րդ կանոնի՝ կալանավորների առողջական վիճակի համար պատասխանատու է կալանավայրի բուժօժանայողը. վերջինս իրավասու է օգնության կանչելու այլ բժշկի ևս:

Կալանավայրի ղեկավարությունը սովորաբար չի թույլատրում դրսից ընտրված բժշկին (եթե այդ բժիշկը չի կանչվել՝ ինչպես վերը նկարագրված դեպքում) զննել կալանավորին,

բացառությամբ այն դեպքի, երբ կալանավորը դատական գործով կողմ է հանդիսանում և կիրառելի է 37A (3) կանոնը, որում ասվում է՝

«Պետքարտուղարի կողմից այլ ցուցումների բացակայության դեպքում՝ կալանավորի կողմից կամ նրա անունից ընտրված արտոնագրված բժշկին պետք է հնարավորություն ընձեռվի գործի կապակցությամբ զննել գործով կողմ հանդիսացող կալանավորին՝ հսկիչի համար տեսանելի, բայց ոչ լսելի պայմաններում»:

Դ. Նամակագրության և տեսակցությունների վերահսկման վերաբերյալ գանգատներ

1. Գանգատը ներքին մարմիններում

48. Կալանավայրում գտնվող անձը նամակագրության կամ տեսակցությունների կապակցությամբ գանգատ կարող է ներկայացնել Կալանավայրի կառավարչին, Տեսուչների խորհրդին կամ ՆԳ քարտուղարի լիազորած տեսչին կամ անմիջապես ՆԳ քարտուղարին: Կալանավորն իրավասու է, ըստ իր հայեցողության, գանգատը ներկայացնել այս մարմիններից մեկին կամ բոլորին միաժամանակ (մեկից ավելի լինելու դեպքում):

(ա) Տեսուչների խորհուրդը

49. Ինչ վերաբերում է Տեսուչների խորհրդին, այն իրավասու է քննել բողոքարկվող վճռի համապատասխանությունը Կանոններին և ՆԳ քարտուղարի ցուցումներին: Այնուհետև խորհուրդը կառավարչի ուշադրությունը հրավիրում է հայտնաբերված խախտման վրա կամ զեկուցում է այդ մասին ՆԳ քարտուղարին: Չնայած այս մարմնի որոշումները հիմնականում խորհրդատվական բնույթ են կրում, սակայն բացառիկ դեպքերում կարող են կիրառվել նաև անմիջականորեն:

(բ) Խնդրագրեր ՆԳ քարտուղարին

50. Կալանավայրում գտնվող անձինք ցանկացած հարցով կարող են խնդրագրով դիմել ՆԳ քարտուղարին, օրինակ՝ ստանալու թույլտվություն, որը կալանավայրի իշխանություններն իրավասու չեն եղել տալու, կամ մերժել են կամ բողոքելու կալանավայրում իրենց նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ:

Երբ կալանավորի ներկայացրած խնդրագիրը վերաբերում է իր նամակագրության կամ տեսակցությունների կապակցությամբ կալանավայրի իշխանությունների ընդունած որոշումներին, ՆԳ քարտուղարը կարող է ցուցումներ տալ վերջիններիս, եթե գտնում է, որ համապատասխան Հրահանգները սխալ են մեկնաբանվել կամ կիրառվել: Ճիշտ է, որոշ դեպքերում Քարտուղարը կարող է թույլ տալ Հրահանգից շեղումներ, սակայն սա շատ հազվադեպ է պատահում, քանի որ ի սկզբանե Հրահանգների իմաստն է՝ ապահովել նորմերի կիրառման միասնականությունը:

Մինչ 1981թ. դեկտեմբերի 1-ը խնդրագրեր ներկայացնելու կարգի մասին ուղեցույցները ներառված էին 5B 1-16 Հրահանգներում: Այստեղ, մասնավորապես, նշվում էր, որ կալանավորը, բացառությամբ որոշ դեպքերի, չէր կարող խնդրագիր ներկայացնել եթե կամ քանի դեռ չէր ստացվել ներկայացված նախորդ հանրագրի պատասխանը (Հրահանգ 5B 12 (2)):

1981թ. դեկտեմբերի 1-ից ի վեր 5B 12 (2) Հրահանգը մեղմացվել է նոր՝ 5C9 և 5C10 Հրահանգներով: Այժմ նոր խնդրագիրը կարող է ներկայացվել նախորդի հանձնումից մեկ ամիս անց: Ավելին, կալանավորը կարող է խնդրագիր ներկայացնել որոշակի խնդիրների, ներառյալ իր նամակագրությանը միաջամտելու, բայց ոչ տեսակցությունները սահմանափակելու հարցերի կապակցությամբ, եթե նույնիսկ նախորդ խնդրագիրը դեռ ընթացքի մեջ է:

2. Վարչակարգի հարցերով խորհրդարանական հանձնակատարը

51. Նամակագրության կամ տեսակցությունների վերահսկմանն առնչվող գանգատները, որոշ դեպքերում, կարող են ներկայացվել նաև խորհրդարանական հանձնակատարին

(Օմբուդսմենին): Ինչևէ, նրա լիազորությունները չեն տարածվում Կանոնների կամ ՆԳ քարտուղարի ցուցումների կիրառման հետևանքով առաջացած սահմանափակումների վրա: Ավելին, Օմբուդսմենն իրավասու չէ հանելու այդ սահմանափակումները, քանի որ նրա լիազորությունները սահմանափակվում են իր իրականացրած քննության արդյունքները Խորհրդարանի անդամին կամ համապատասխան իշխանական մարմնին, որոշ դեպքերում նաև Խորհրդարանի զույգ պալատներին զեկուցելով (Խորհրդարանական հանձնակատարի մասին 1967թ. օրենք, բաժիններ 10 և 12):

3. Դիմում ներպետական դատարաններին

52. Կանոններով կալանավայրերի իշխանություններին վերապահված՝ նամակագրությունը և տեսակցությունները վերահսկելու լիազորությունը ենթակա է վերահսկողության՝ անգլիական դատարաններում վերանայման վարույթների իրականացման միջոցով: Դատարանի իրավասությունն է՝ միջամտել, որպեսզի նամակագրության կամ տեսակցությունների կապակցությամբ կալանավայրի իշխանությունների գործողությունները չհակասեն Կանոններին (օրինակ՝ 37(A) 1 և 37 (1) կանոններ. տե՛ս, վերը կետ 44, (b) և (d) ենթակետեր), չկիրառվեն կամայական կամ անհարկի, անբարեխիղճ կերպով, իշխանության չարաշահմամբ կամ այլ նկատառումներով:

Այս կապակցությամբ դատարանը նշում է, որ Ռեյմոնդն ընդդեմ Հոնիի գործով (1982թ. 1 համաանգլիական իրավական զեկույցներ 759) լորդ Ուիլդերֆորսը վկայակոչել է անգլիական իրավունքի այն սկզբունքը, ըստ որի՝ «դատապարտված անձը ազատագրվման ընթացքում պահպանում է քաղաքացիական իր բոլոր իրավունքները, եթե դրանք չեն սահմանափակվում օրենքով»:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

53. Պրն Քեմբլը և հայր Ֆելլը դիմել են Հանձնաժողով՝ համապատասխանաբար 1977թ. մարտի 4-ին և 31-ին: Ներկայացված գանգատներում կամ համապատասխան գրավոր բացատրություններում նրանցից յուրաքանչյուրը՝

(ա) հայտարարել է, որ Տեսուչների խորհրդը իրեն մեղադրել է կարգապահական խախտումներում, որոնք ընդհանուր հաշվով համազոր են «քրեական» հանցանքի՝ առանց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջին համապատասխան լսումների,

(բ) պնդել է, որ 1976թ. սեպտեմբերի 16-ի միջադեպից հետո իրավաբանական օգնություն ստանալու թույլտվության ձգձգումը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված՝ դատարանի մատչելիության և 8-րդ հոդվածում ամրագրված՝ նամակագրության անձեռնմխելիության իր իրավունքները,

(գ) նշել է, որ անկախ բժշկական զննության պահանջի մերժումը ևս խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված իր իրավունքները,

(դ) բողոքարկել է մի շարք այլ հարցերի, մասնավորապես՝ վերոհիշյալ միջադեպից հետո կալանավայրում իր նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ:

1978թ. մայիսի 6-ին Հանձնաժողովը պրն Քեմբլի գանգատն ընդունելի է համարել (ա), (բ) և (գ) կետերի և անընդունելի՝ մնացած կետերի կապակցությամբ:

1980թ. հոկտեմբերի 9-ի մասնավոր և հոկտեմբերի 14-ի վերջնական որոշումներով Հանձնաժողովը՝

a. վճռել է, որ հայր Ֆելլի գանգատն ընդունելի է (բ) և (գ) կետերի կապակցությամբ, իսկ գանգատարկվող մնացած պնդումներն այն մասին, որ իր փաստաբանի հետ առանձին տեսակցելու թույլտվության մերժումը հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների խախտման, որ որոշ անձանց հետ նամակագրական կապ պաշտպանելու թույլտվության մերժումը հանգեցրել է 8-րդ հոդվածի խախտման, որ խախտվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, բավարար հիմքեր չեն պարունակում,

b. վճռել է, որ հայր Ֆելի գանգատն ընդունելի չէ (ա) և (դ) կետերի կապակցությամբ՝ այն հիմնավորմամբ, որ (ա) կետի պարագայում, 1981թ. մարտի իր որոշմամբ նա հրաժարվել էր սպառել պաշտպանության ներպետական միջոցները՝ չդիմելով վերադաս աստյան՝ գործը վերանայելու պահանջով (տե՛ս վերը՝ կետեր 15 և 39-41):

Վերջին վճռի կապակցությամբ Հանձնաժողովը, դատավարական կանոնադրության 29-րդ կանոնի համաձայն, պահանջել էր նաև երկու գանգատների միավորում:

54. 1982թ. մայիսի 12-ի իր եզրակացության մեջ (կամ զեկույցում) (Կոնվենցիայի 31-րդ հոդված) Հանձնաժողովն արտահայտել էր հետևյալ կարծիքը.

- որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված իրավունքների խախտում՝ Տեսուչների խորհրդում պրն Քեմբլի գործի վարույթի ընթացքում (կողմ՝ ինը, ձեռնպահ՝ երեք),

- որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ (1-ին կետ) և 8-րդ հոդվածների խախտում՝ դիմողների իրավաբանական օգնություն ստանալու թույլտվության ձգձգման կապակցությամբ (միաձայն),

- որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել՝ դիմողներին անկախ բժշկական զննության հնարավորություն չընձեռելու կապակցությամբ (միաձայն),

- որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ հայր Ֆելին իր փաստաբանի հետ առանձին տեսակցելու հնարավորությունից զրկելու կապակցությամբ, անկախ այն բանից՝ խախտվել է նաև 8-րդ հոդվածը, թե՛ ոչ (միաձայն),

- որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ քույր Փաուերի և քույր Բենեդիկտի հետ հայր Ֆելի նամակագրական կապը կասեցնելու կապակցությամբ (միաձայն),

- որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի կապակցությամբ հայր Ֆելի ներկայացրած գանգատի ընթացքում անհրաժեշտ պաշտպանական միջոցներից վերջինիս զրկված լինելու կապակցությամբ (միաձայն):

Հանձնաժողովի կարծիքը՝ ամբողջությամբ, ինչպես նաև չհամընկնող մեկ կարծիքը ներկայացվում են վճռին կից:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

55. 1983թ. սեպտեմբերի 20-ին Կառավարությունը դատարանին խնդրել է գործը լուծել (ըստ գործի կապակցությամբ առկա կոնցեսիաների) 1983թ. մարտի 17-ին ներկայացված գրավոր բացատրություններում նշված կարգով, մասնավորապես՝

«Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կապակցությամբ

(i) վճռել և հայտարարել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի չէ Կալանավայրերի 1964թ. կանոնադրության 47-րդ կամ որևէ այլ կանոնով նախատեսված կարգապահական խախտումների կապակցությամբ Տեսուչների խորհրդում քննության անցկացման և որոշման կայացման կապակցությամբ,

(ii) վճռել և հայտարարել, որ Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել Տեսուչների խորհրդում Ջոն Ջոզեֆ Քեմբլի գործի քննության անցկացման և որոշման կայացման կապակցությամբ,

(iii) վճռել և հայտարարել, որ վերոհիշյալ քննության և որոշման առնչությամբ Կոնվենցիայի հնարավոր խախտումների կապակցությամբ Ջոն Ջոզեֆ Քեմբլը չի սպառել պաշտպանության ներպետական բոլոր միջոցները,

(iiiv) վճռում նշել կալանավորների և նրանց իրավախորհրդատուների միջև հաղորդակցման վերահսկման կապակցությամբ Միացյալ Թագավորության օրենսդրության և պրակտիկայի մեջ Գոլդերի գործով Դատարանի վճռից հետո կատարված փոփոխությունների մասին, և

(ա) նկատի ունենալով այս փոփոխությունները՝ մերժել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման վերաբերյալ գանգատների հետագա քննությունը

կամ, որպես այլընտրանք,

(բ) վճռել և հայտարարել, որ ըստ հայտնաբերված փաստերի՝ Միացյալ Թագավորությունը չի խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված որևէ պարտավորություն, բացի Հանձնաժողովի գեկույցում նշվածից:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կապակցությամբ

(i) քանի որ հայտնաբերված փաստերը չեն պարունակում Միացյալ Թագավորության կողմից Կոնվենցիայի 8-րդ հոդվածում նախատեսված պարտավորությունների խախտում՝ հաստատել Հանձնաժողովի եզրակացությունը,

(ii) քանի որ Միացյալ Թագավորության կառավարությունը չի վիճարկում Կոնվենցիայի խախտումների վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը՝ կալանավորների նամակագրության հետ կապված պրակտիկայում վերանայված Հրահանգ-Ցուցումների կատարած փոփոխությունների կապակցությամբ,

(ա) վճռել և հայտարարել, որ հայտնաբերված փաստերը Կոնվենցիայի որևէ խախտում, բացի Հանձնաժողովի գեկույցում նշվածներից, չեն պարունակում;

(բ) վճռում նշել, որ վերանայված Հրահանգ-Ցուցումների ներմուծած փոփոխությունները վերացնում են Հանձնաժողովի հայտնաբերած խախտումները:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կապակցությամբ

Վճռել և հայտարարել, որ կալանավորների նամակագրության և տեսակցության վերաբերյալ նոր Հրահանգ-Ցուցումների ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված փաստերն այլևս չեն պարունակում Միացյալ Թագավորության կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածում նախատեսված պարտավորությունների խախտում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

Լ. ՆԱԽՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

Ա. Պրն Քենբլիի հիմնավորումը Տեսուչների խորհրդում գործի վարույթի կապակցությամբ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ

56. 1983թ. մարտի 17-ին Դատարան ներկայացրած գրավոր բացատրություններում Կառավարությունը նշել է, որ պրն Քենբլը չի սպառել պաշտպանության ներպետական միջոցները՝ չդիմելով տեսուչների խորհրդում լսված գործը վերադաս ատյանում վերանայելու պահանջով, ուստի և այս վարույթին վերաբերող նրա գանգատները չեն կարող բավարարվել:

57. Դատարանն ի գիտություն կընդունի նման փաստարկներն այն դեպքում, եթե պատասխանող պետությունն արդեն դրանք ներկայացրել է Հանձնաժողով՝ դրանց բնույթի և հանգամանքների թույլատրելիության սահմաններում. սա սովորաբար արվում է ընդունելիության քննության նախնական փուլում: Այս պայմանը չբավարարվելու դեպքում Կառավարությանը չի թույլատրվում փաստարկները ներկայացնել Դատարան (տե՛ս, *inter alia*, 1980թ. մայիսի 3-ի Արտիկոյի վճիռը, մաս Ա, թիվ 37, էջեր 12 և 13, կետեր 24 և 27):

1. Estoppel-

Մյուս կողմի շահերին հակասող նոր պահանջը

58. Պրն Քենբլիի դիմումի ընդունելիության վերաբերյալ Կառավարության դիտողությունները Հանձնաժողովին են ներկայացվել 1977թ. դեկտեմբերի 20-ին: Այստեղ որևէ բան չի ասվել խորհրդում գործի վարույթի առնչությամբ ներպետական պաշտպանության միջոցների սպառման հարցի մասին: Միայն գործի ըստ էության քննության ընթացքում (1978թ. դեկտեմբերի 13) Կառավարությունը պահանջել է Հանձնաժողովից մերժել այդ վարույթներին վերաբերող գանգատները (համաձայն Կոնվենցիայի 26 և 29 հոդվածների), քանի որ վերադաս ատյանում գործի բողոքարկման դիմում չի ներկայացվել: Հանձնաժողովը, որ 1978թ. մայիսի 6-ին արդեն իսկ ընդունելի էր համարել բողոքները, 1981թ. մարտի 14-ի և 19-ի որոշմամբ նշել է, որ բավարար հիմքեր չկան Կոնվենցիայի 29-րդ հոդվածի կիրառման համար՝ որպես միաձայնություն պահանջող դրույթ:

59. Ղատարանը նշում է, որ համաձայն սուրբ Ջերմենի գործով Բաժանմունքային դատարանի 1977թ. դեկտեմբերի 6-ի վճռի՝ վերադաս ատյանում գործի վերաքննությունը Տեսուչների խորհրդի վարույթների կապակցությամբ կիրառելի չէ (տե՛ս վերը՝ կետ 39(բ)): Այսպիսով, Կառավարությունը կոժվարանար ընդամենը երկու շաբաթ անց Հալ կալանավայրի Տեսուչների խորհրդի փաստաբանի կողմից կառավարության սոլիստորի ցուցումով Բաժանմունքային դատարանին ներկայացված փաստարկներին հակառակ, դիմել Հանձնաժողով՝ թե պաշտպանության այդ միջոցը հնարավոր էր: Հակառակ Հանձնաժողովի պատվիրակի արտահայտած կարծիքի՝ Ղատարանը գտնում է նաև, որ քանի որ ներպետական վարույթում իշխանությունների հաջողությունից հետո Կառավարությունը դժվար թե կարողանար պնդել, որ այս հարցը լուծված չէ կամ թերի է արտացոլված անգլիական իրավունքում, և որ պրն Քեմբլը ստիպված պետք է լիներ հարցի լուծումն ակնկալել դատական ատյաններում:

Սուրբ Ջերմենի գործով գանգատի ծանուցումը ներկայացվել է 1977թ. դեկտեմբերի 20-ին, սակայն գործի վերջնական լուծումն ստացվել է միայն 1978թ. հոկտեմբերի 3-ին, երբ Վերաքննիչ դատարանը բեկանել էր Բաժանմունքային դատարանի վճիռը (տե՛ս վերը՝ կետ 39(գ)): Ակնհայտ է, որ հենց 1978թ. վճիռն էր դրդել Կառավարությանը լրացնել նախնական փաստարկները, և որոշակի հանգամանքներում Ղատարանը չի համարում, որ նրանք պարտավոր էին պաշտպանական միջոցներն սպառելու վերաբերյալ հայտարարությունն անել ավելի վաղ փուլում (տե՛ս վերը մեջբերված՝ Արտիկոյի վճիռը, *ibid.* էջ 13, կետ 27, երրորդ ենթակետ): Հետևաբար նոր փաստարկ բերելու և նոր պահանջի հիմքեր չկան:

2. Հայտարարության հիմնավորված լինելու մասին

60. Ըստ Կոնվենցիայի 26-րդ հոդվածի՝ կարելի է կիրառել պաշտպանության միայն այն միջոցները, որոնք առնչվում են ենթադրյալ մեղադրանքին և, միևնույն ժամանակ, հասանելի են և բավարար (տե՛ս, *inter alia*, Վան Օստերվիլդեի 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, մաս Ա, թիվ 40, էջ 13, կետ 27):

Պրն Քեմբլի գործի կապակցությամբ Հանձնաժողովը որևէ կարծիք չի արտահայտել այն մասին, թե արդյոք վերադաս ատյանում գործի վերանայման միջոցը վերաբերում է այս կարգի գործերին:

61. Պաշտպանության միջոցի սպառման հարցը վիճարկելու համար նախ պետք է բավարար չափով հավաստի լինի դրա գոյությունն ընդհանրապես (տե՛ս, Դե Ուայլդ, Օմս և Վերսիպի 1971թ. հունիսի 18-ի վճիռը, մաս Ա, թիվ 12, էջ 34, կետ 62, Դիվերի գործով 1980թ. փետրվարի 27-ի վճիռը, մաս Ա, թիվ 35, էջ 18, կետ 32 և *mutates mutandis*, Վան Դրուգենբրոյքի գործով 1982թ. հունիսի 24-ի վճիռը, մաս Ա, թիվ 50, էջ 30, կետ 54): Պրն Քեմբլի դիմումը Հանձնաժողով ներկայացնելու պահին (1977թ. մարտի 4) որևէ բան հայտնի չէր Տեսուչների խորհրդի գործերը վերանայելու վերադաս ատյանի իրավասության մասին. ինչպես Վերաքննիչ դատարանն էր նշել՝ սուրբ Ջերմենի գործով՝ այս կապակցությամբ որևէ պարտադիր կարգավորում չի գործում (տե՛ս վերը՝ կետ 39 (գ)): Իրավիճակը, սակայն, փոխվել էր այս գործով Վերաքննիչ դատարանի 1978թ. հոկտեմբերի 3-ի վճռով, որով հաստատվում էր, որ կալանավորները կարող են կարգապահական վարույթների կապակցությամբ գործի վերանայում ակնկալել:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է հիշել, որ պրն Քեմբլի գործով հնարավոր վերանայման համար դիմելու սահմանված ժամկետը վաղուց անցել էր (տե՛ս վերը՝ կետ 41 և վերոհիշյալ Դե Ուայլդ, Ումս և Վերսիպի գործով վճիռը, մաս Ա, թիվ 12, էջեր 34-35, կետ 62): Ճիշտ է՝ հնարավոր էր թույլտվություն ստանալ ժամկետի սպառվելուց հետո ևս դիմում ներկայացնելու համար, և Կառավարությունը խոստովանել է, որ եթե պրն Քեմբլը նման թույլտվության համար դիմեր սուրբ Ջերմենի գործով Բաժանմունքային դատարանի երկրորդ որոշումից (1979թ. հունիսի 15) անմիջապես հետո, նա, ամենայն հավանականությամբ, չէր մերժվի: Սակայն այժմ արդեն, նրան, ամենայն հավանականությամբ, նման թույլտվություն չէր տրվի, քանի որ ժամկետն

անցնելը կդիտվեր անհիմն և աններելի (տե՛ս վերը՝ կետեր 15, 40 և 41): Պաշտպանության միջոցի հնարավորությունն անհրաժեշտ է դիտարկել այս փաստարկների համատեքստում:

62. Ինչ վերաբերում է պաշտպանության միջոցի արդյունավետությանը, Ղատարանում լսումների ընթացքում Կառավարությունը նշել է, որ դրանք կիրառելի չեն դիմողի բողոքների գերակշիռ մասի կապակցությամբ, մասնավորապես, խոսքը վերաբերում է այն բողոքներին, որ Խորհրդում գործի լսումների ընթացքում դիմողը գրկված է եղել իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից, Խորհրդի ո՛չ լսումները և ո՛չ էլ դատավճիռը հրապարակային չեն եղել, և ինքը՝ Խորհուրդը, «անկախ» չի եղել: Խորհրդում գործի լսումների ընթացքում իրավաբանական ներկայացուցչության հնարավորության կապակցությամբ նույն տեսակետն է պահպանվել նաև Տարանտի գործով: Ղատարանը նշում է, որ այդ գործով, հակառակ Կառավարության կարծիքին, հաստատվել է, որ գործը վերադաս դատական ատյանում վերանայելու պահանջը կարող է պաշտպանության արդյունավետ միջոց հանդիսանալ՝ փաստաբանի մասնակցության թույլտվությունը մերժելու դեպքում (տե՛ս վերը՝ կետ 36): Այդուհանդերձ, չնայած այս կապակցությամբ օրենքի պատշաճ պարզաբանված չլինելուն, փաստը մնում է փաստ, և սա ընդունում է նաև Կառավարությունը, որ պրն Քեմբլը իր գործով պաշտպանության այդ միջոցի հնարավորությունն այլևս ակնկալել չէր կարող:

63. Պրն Քեմբլը ներկայացրել է այլ բողոքներ ևս, մասնավորապես այն մասին, որ Խորհուրդը «անկողմնակալ» չի եղել և իրեն գրկել է արդար լսումների հնարավորությունից, որ խախտվել է անմեղության կանխավարկածը, որ նրան պատշաճ կարգով չեն տեղեկացրել իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին և նա հնարավորություն չի ունեցել նախապատրաստել իր պաշտպանությունը և որ նրա իրավունքները խախտվել են նաև վկաների առումով:

Այս բողոքների կապակցությամբ Կառավարությունը ընդունել է, որ դրանք կարող էին և պետք է դատական վերանայման առարկա դառնային 1978թ. հոկտեմբերի 3-ից հետո: Այնուամենայնիվ, երբ սուրբ Ջեյմսի գործով Վերաքննիչ դատարանի կայացրած վճռով հաստատվել էր վերադաս ատյանում գործի վերանայման՝ իբրև պաշտպանության միջոցի, հնարավորությունը, և, Կառավարության պնդմամբ, այն դեռևս հնարավոր էր պրն Քեմբլի համար, Հանձնաժողովը վճռել էր չմերժել դիմումն այս հիմքի վրա: Այս պայմաններում, դատարանի կարծիքով, արդարացված էր պրն Քեմբլի որոշումն իր գործի քննությունը Կոնվենցիայի առնչությամբ թողնել Հանձնաժողովի վճռին և չդիմել ներպետական դատարաններին՝ Տեսուչների խորհրդի վարույթի վերանայման պահանջով: Ավելին, Կառավարությունը խոստովանել է, որ պաշտպանության այս միջոցը, ամենայն հավանականությամբ, այլևս հնարավոր չէ նրա համար: Հետևաբար, Ղատարանը գտնում է, որ անարդարացի կլիներ այժմ այս գանգատները անընդունելի համարել՝ ներպետական պաշտպանության միջոցներն սպառված չլինելու պատճառաբանությամբ:

Բ. Տեսուչների խորհրդում գործի վարույթի կապակցությամբ հայր Ֆելի բողոքների ընդունելիությունը

64. Հայր Ֆելի բողոքները՝ Տեսուչների խորհրդում գործի վարույթի կապակցությամբ, Հանձնաժողովն անընդունելի էր համարել այն հիմքով, որ վճռի հրապարակման պահին (1981թ. մարտի 14-ին և 19-ին) նա չէր սպառել վերադաս ատյանում գործը վերաքննելու ներպետական պաշտպանության հնարավորությունը (տե՛ս վերը՝ կետ 53):

Ղատարանին ներկայացրած գրավոր բացատրություններում հայր Ֆելը, նշելով որ արդեն ներկայացրել է նման դիմում, ճիշտ է՝ ապարդյուն (տե՛ս վերը՝ կետ 15), պնդել է, որ վերոհիշյալ բողոքներն այժմ ընդունելի են:

65. Ըստ Ղատարանի հաստատված նախադեպային իրավունքի՝ դիմումների ընդունումը մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն և գործերն ըստ էության լսելու Ղատարանի իրավասությունը սահմանափակված է Հանձնաժողովի ընդունած դիմումների քննությամբ (տե՛ս, *inter alia*, վերոհիշյալ Դե Ուայլդ, Ումս և Վերսիայի գործով վճիռը, մաս Ա, թիվ 12, էջ 30, կետ 51, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության

1978թ. հունվարի 18-ի վճիռը, մաս Ա, թիվ 25, էջ 63, կետ 157, և Ֆոթիի և այլոց գործով 1982թ. դեկտեմբերի 10-ի վճիռը, մաս Ա, թիվ 56, էջ 14, կետեր 40-41):

Այսպիսով՝ Դատարանն իրավասու չէ քննելու հայր Ֆելի հայցը:

II. ՊՐՆ ՔԵՄԲԼԻ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ՏԵՍՈՒՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

66. Պրն Քեմբլը բողոքարկել է, թե Տեսուչների խորհրդի կողմից իրեն կարգապահական խախտումների համար ներկայացվել է մեղադրանք, որն ըստ էության համազոր է «քրեական մեղադրանքի»՝ զրկելով իրեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված լսումների հնարավորությունից: Այս հոդվածը որոշակի երաշխիքներ է պարունակում «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև քրեական մեղադրանքների կապակցությամբ»:

Ա. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիությունը

1. «Քրեական մեղադրանքի» առկայությունը

67. Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ պրն Քեմբլի գործով Տեսուչների խորհրդի քննությունը ներառում է «քրեական մեղադրանքի» որոշում, ուստի Կոնվենցիայի 6-րդ հոդվածն այստեղ կիրառելի է:

Կառավարությունն իր հայտարարության մեջ վիճարկել է այս կարծիքը:

68. Դատարանը նման խնդրի բախվել էր նաև Էնգելի և այլոց գործով, որը, իբրև փաստարկ, մեջբերվել էր ներկայիս վարույթին մասնակցողների կողմից: Այս գործով 1976թ. հունիսի 8-ի վճռով (Մաս Ա, թիվ 22, էջեր 17-18, կետեր 80-82) Դատարանը, ուշադրություն հրավիրելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածում «քրեական մեղադրանքի» հասկացության «առանձին» հանդես գալու հանգամանքին, առաջ է քաշել հետևյալ սկզբունքները, որոնք վերահաստատվել են Օգթուրքի գործով 1984թ. փետրվարի 21-ի վճռով (Մաս Ա, թիվ 73, էջեր 17-18, կետեր 48-50):

(ա) Կոնվենցիան չի հակադրվում պայմանավորվող պետություններին՝ քրեական և կարգապահական իրավունքների միջև որոշակիություն մտցնելը պահպանելու և դրանք տարանջատելու հարցում, բայց դա չի նշանակում, որ նման կերպ արված դասակարգումը կիրառելի չէ Կոնվենցիայի նպատակների համար:

(բ) Եթե պայմանավորվող պետություններն իրավասու լինեին սեփական հայեցողությամբ, արարքներն իբրև քրեական կամ կարգապահական որակելով, բացառել Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հիմնարար հոդվածների գործողությունը, ապա այս հոդվածների կիրառությունը ստորադասված կլինեին նրանց ինքնիշխան կամքին: Նման ազատությունը կարող է հանգեցնել Կոնվենցիայի սկզբունքների և նպատակների հետ անհամատեղելի հետևանքների:

69. Դատարանն Էնգելի և այլոց գործով վճռում շրջահայաց կերպով նշել է, որ «քրեական» և «կարգապահական» բնորոշումների միջև սահմանագիծ անցկացնելիս՝ Դատարանն ուշադրություն է դարձնում այն ոլորտին, որին առնչվում են տվյալ արարքները, մասնավորապես՝ զինվորական ծառայությանը: Պարզ է, որ երբ խոսքը վերաբերում է ազատագրկման վայրերին, այստեղ կարգապահական հատուկ ռեժիմի պահպանումը պրակտիկ և ներքին քաղաքականության նկատառումներով է իրականացվում, ինչպես, օրինակ՝ անվտանգության շահերից ելնելով կամ հասարակական կարգի պահպանման համար, կալանավայրում գտնվողների արարքների հնարավորինս անաչառ գնահատման, այնպիսի պատժամիջոցների կիրառման համար, որ կարող են հնարավոր չլինել սովորական դատարաններում, ինչպես նաև կալանավայրի իշխանությունների կողմից իրենց հաստատություններում առավելագույն կարգապահական ռեժիմ ապահովելու նպատակով:

Այնուամենայնիվ, արդար լսումների երաշխիքը, որ 6-րդ հոդվածի նպատակն է, ըստ Կոնվենցիայի բովանդակության՝ ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է (տե՛ս, Գոլդերի գործով 1975թ. փետրվարի 21-ի վճիռը, մաս Ա, թիվ 18, էջ 18, կետ 36): Ինչպես ցույց է տալիս Գոլդերի գործը՝ արդարադատությունը չի

կարող կանգ առնել կալանավայրի դարպասների մոտ և, որոշ դեպքերում, արդարացված չէ ազատագրված մեջ գտնվողներին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանությունից զրկելը:

Այստեղից հետևում է, որ Էնգելի և այլոց գործով կայացրած վճռով ամրագրված սկզբունքները, *mutatis mutandis*, տարածվում են նաև կալանավայրում պահվելու հետ առնչվող գործերի վրա, և վերը նշված պատճառները բավարար չեն անտեսելու համար այստեղ ևս «քրեականի» և «կարգապահականի» միջև սահմանագիծ անցկացնելու անհրաժեշտությունը, որ բխում է 6-րդ հոդվածի խնդրից և նպատակներից: Ուստի անհրաժեշտ է ճշտել՝ արդյո՞ք պրն Քեմբլի դեմ գործով վարույթը Կոնվենցիայի նպատակների համար պետք է դիտարկվի իբրև քրեական ոլորտին վերաբերող: Ի վերջո, Ղատարանը գտնում է, որ այդ վճռով սահմանված չափանիշները կարող են կիրառվել հաշվի առնելով այլ ենթատեքստով պայմանավորված առանձնահատկությունները:

70. Հստակեցման ենթակա առաջին խնդիրն է՝ ճշտել, թե արդյոք արարքները նկարագրող տեքստը, ըստ ներպետական օրենսդրության, համապատասխանում է քրեական, թե՞ կարգապահական իրավունքին, թե՞ երկուսին միաժամանակ (տե՛ս վերը նշված՝ Էնգելի և այլոց գործով վճիռը, մաս Ա, թիվ 22, էջեր 34-35, կետ 82):

Ակնհայտ է, որ անգլիական իրավունքում պրն Քեմբլին մեղսագրվող արարքները վերաբերում են կարգապահական իրավունքին. 47-րդ կանոնը սահմանում է, որ կալանավորի այս կարգի գործողությունները պետք է դիտվեն իբրև «կարգապահության դեմ թույլ տրված արարք», և նույն կանոնը ցուցումներ է պարունակում նման դեպքերում կալանավայրի հատուկ ռեժիմի շրջանակներում իրականացնելիք քայլերի մասին (տե՛ս վերը՝ կետեր 27-31): Տեսուչների խորհրդում գործերի քննությունների՝ քրեական իրավունքի ոլորտից դուրս լինելու մասին է վկայում սուրբ Ջերմենի գործով Վերաքննիչ դատարանի վճիռը, որով հաստատվում է «դրանց ոչ քրեական» լինելը (տե՛ս վերը՝ կետ 37):

Լորդ դատավոր Շոուն կարծիք է հայտնել, որ գործի նման քննությունը հանդիսանում է ներպետական կարգապահական վարույթ, որը չի առնչվում հանրային իրավունքի խախտման կամ հանրության շահերի վտանգման հետ և նախատեսված է կալանավայրի սահմաններում կարգի պահպանության նպատակով: Ղատարանը նշում է, որ նաև այս պատճառով է (ի թիվս այլոց), որ 1952թ. Կալանավայրերի մասին օրենքի բաժին 47-ով ՆԳ քարտուղարը լիազորված է ընդունելու կանոններ (տե՛ս վերը՝ կետ 26): Այնուամենայնիվ, Ղատարանը նշում է նաև, որ որոշ զուգահեռներ անցկացվել են Տեսուչների խորհրդում վարույթների և քրեական վարույթների միջև ՄքՔոնկիի և Տարանտի գործերով (տե՛ս վերը՝ կետ 37):

71. Ամեն դեպքում, ներպետական օրենսդրությամբ նախատեսված ցուցումները հարաբերական բնույթ ունեն և առավել էական է արարքի բուն բովանդակությունը (տե՛ս վերը նշված Էնգելի և այլոց գործով վճիռը, *ibid.*, էջ 35, կետ 82):

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կալանավորի արարքները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ. որոշ արարքներ ակնհայտորեն չեն անցնում ներքին կարգապահական խնդիրների սահմաններից, մինչդեռ մյուսները չեն կարող նույն կերպ դիտվել: Առաջինը՝ որոշ արարքներ կարող են մյուսներից առավել լուրջ լինել. իրականում Կանոնները աստիճանակարգում են արարքները՝ որակելով պրն Քեմբլի գործածներն իբրև «առանձնապես ծանր» (տե՛ս վերը՝ կետ 27): Երկրորդը՝ որոշ դեպքերում արարքների հակաօրինականությունը չի դիտվում զուտ իբրև կալանավայրի պատերից ներս կատարված իրադարձություն. Կանոններով նախատեսված որոշ արարքներ կարող են դիտվել նաև իբրև քրեական հանցագործություններ: Այսպես օրինակ՝ «կալանավայրի աշխատակցին մարմնական վնասվածք պատճառելը» կարող է համապատասխանել «հարձակում՝ մարմնական վնասվածքի պատճառմամբ» հանցանքին, և չնայած խռովությունը և խռովության դրդումն ընդհանուր քրեական իրավունքում նման արարքներ չեն համարվում, հիմքում ընկած փաստերը կարող են պարունակել դավադրության քրեական հանցանքի տարրեր (տե՛ս վերը՝ կետ 30): Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ, թերևս տեսականորեն, նման արարքները կարող են դիտարկվել միաժամանակ իբրև թե՛ քրեական, թե՛ կարգապահական (*ibid.*):

Դատարանը գտնում է, որ այսպիսի գործոնները, բավարար չլինելով դիմողին ներկայացված մեղադրանքների հիմքում ընկած արարքներն իբրև քրեական որակելու համար, այնուամենայնիվ, դրանց տալիս են որոշակի երանգ, ինչն առանձնացնում է դրանք զուտ կարգապահական արարքներից:

72. Այս կապակցությամբ անհրաժեշտ է անդրադարձնալ վերը նշված էնգելի և այլոց գործով (ibid. էջ 35, կետ 82) և վերը նշված Օգթուրքի գործով (Մաս Ա, թիվ 73, էջ 18, կետ 50) վճիռներում նշված վերջին չափանիշին, մասնավորապես՝ պրն Քեմբլին սպառնացող պատժի տեսակին և խստության աստիճանին: Նրա նկատմամբ կիրառվելիք հնարավոր առավելագույն պատիժը ներառում էր Խորհրդի որոշման պահի դրությամբ վաղաժամկետ ազատ արձակման առկա հնարավորությունների կրճատում (երեք տարուց քիչ պակաս), անսահմանափակ ժամանակով որոշակի արտոնություններից զրկում և յուրաքանչյուր արարքի համար՝ մեկուսացում ընկերային աշխատանքներից, եկամուտների և աշխատավարձի կասեցում՝ առավելագույնը 56 օրով. իրականում սահմանվել էր պատժի ժամկետի ավելացում՝ 570 օրով, և նշված մյուս տույժերի կապակցությամբ՝ 91 օրվա չափով (տե՛ս վերը՝ կետեր 14 և 28):

Թե՛ սուրբ Ջերմենի գործով, և թե՛ Կոնվենցիայի կապակցությամբ լուրջ քննարկումների առարկա էր դարձել պատժի կրումից վաղաժամկետ ազատման և ժամկետի ավելացման հարցը: Անգլիական իրավունքում վաղաժամկետ ազատումը համարվում է ըստ հայեցողության կիրառվող միջոց (տե՛ս վերը՝ կետ 29): Անգլիական դատարաններն այս միջոցը դիտում են ավելի շուտ իբրև արտոնություն, քան իրավունք, սակայն այդ արտոնությունից զրկվելը, փաստորեն, տույժ է, որն առնչվում է անձի իրավունքներին»:

Դատարանը, իր հերթին, չի գտնում, որ արտոնության և իրավունքների միջև հստակ սահմանագծի առկայությունը կարող է օգտակար լինել տվյալ գործի դեպքում: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ վաղաժամկետ ազատ արձակման հնարավորությունը (կալանավորն ազատ է արձակվում պատժի կրման սկզբում սահմանված ժամկետում, եթե պատժի կրման ժամկետը չի ավելացվում կարգապահական խախտումների պատճառով (տե՛ս վերը՝ կետ 29)), կալանավորին արդարացի հույս է ներշնչում, որ նա կարող է ազատ արձակվել մինչև ազատագրկման սահմանված ժամկետի լրանալը: Վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելը, փաստորեն, երկարացնում է ազատագրկումը՝ ակնկալվող ժամկետից առավել երկար ժամանակով: Ասվածի հաստատումն ենք գտնում սուրբ Ջերմենի գործով Լորդ դատավոր Ուոլերի վճռի հետևյալ հատվածում.

«... ընդունված կարգով... դատավճռի հրապարակումից հետո կալանավայր մտնելու պահին կալանավորն իր տրամադրության տակ ունենում է վաղաժամկետ ազատման առավելագույն հնարավորությունը և նրան տեղյակ է պահվում ազատ արձակման հնարավոր ամենավաղ ժամկետի մասին: Անկախ այն բանից՝ դա կդիտվի իբրև արտոնություն, թե իրավունք, կալանավորն իրավունք ունի ակնկալել, որ ազատ կարձակվի այդ ժամկետում, եթե այլ կերպ չի զրկվում այդ հնարավորությունից: Լորդ Ռեյդը նշում է, որ «իրավունքներից կամ արտոնություններից» զրկելը հավասար չափով կարևոր են, և ես հարգանքով միանում եմ նրա կարծիքին: Վաղաժամկետ ազատման արտոնություն կամ իրավունք լինելը, իմ կարծիքով, էական չէ: Բավական է միայն դիտարկել [X]-ի գործը, որը զրկվել էր վաղաժամկետ ազատման հնարավորությունից՝ 720 օրվա չափով: Արդյունքում՝ նա ստիպված էր ազատագրկման մեջ մնալ ազատման նախնական սահմանված ժամկետից երկու տարի ավելի: Այսպիսով, նա կորցրել էր շատ էական արտոնություն»: (1979թ. համաանգլիական իրավական զեկույցներ, էջեր 723j-724b):

Վերը նշված էնգելի և այլոց գործով վճռում Դատարանը նշել էր, որ ազատագրկումն իբրև պատժատեսակ ընդհանրապես ներհատուկ է «քրեական իրավունքի» ոլորտին: Ճիշտ է, տվյալ գործում ազատագրկման մեջ գտնվելու իրավական հիմքը, նույնիսկ Խորհրդի որոշումից հետո, մնում էր նախնական դատավճիռը, և այս պատժի ժամկետը չէր ավելացվել

(տե՛ս վերը՝ կետ 29): Ինչևէ, Ղատարանը կարծում է, որ վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկվելու հավանականությունը և փաստացի զրկումը ներառում էին պատժի կրման ժամկետի այնպիսի լուրջ փոփոխություններ, որ այս տույժերը, Կոնվենցիայի կապակցությամբ, պետք է դիտարկվեն իբրև «քրեական»: Նշանակալիորեն երկարաձգելով պատժի կրման ժամկետը՝ այս պատժամիջոցները փաստորեն ենթադրում են անձին ազատությունից զրկում (եթե նույնիսկ ձևակերպման մեջ դա չի ասվում) և Կոնվենցիայի նպատակն ու խնդիրները պահանջում են, որպեսզի նման խստության տույժի կապակցությամբ կիրառվեն 6-րդ հոդվածի երաշխիքները: Այս եզրակացության վրա չի ազդում նույնիսկ այն փաստը, որ դիմողի վաղաժամկետ ազատման հնարավորությունը հետազայում մասնակիորեն վերականգնվել էր (տե՛ս վերը՝ կետ 16):

73. Հաշվի առնելով պրն Քեմբլին մեղսագրվող արարքների «առանձնապես ծանր» բնույթը, ինչպես նաև նրան սպառնացող (և, ի վերջո սահմանված) պատժատեսակը, Ղատարանը գտել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի է Տեսուչների խորհրդում այս գործի վարույթի կապակցությամբ: Հետևաբար, կարիք չկա դիտարկել նրա նկատմամբ սահմանված կամ հնարավոր այլ պատժամիջոցներ, բացի վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելուց:

2. «Քաղաքացիական իրավունքների» քննության առկայությունը

73. Հաշվի առնելով նախորդ կետում ասվածը, կարիք չկա նաև քննելու, թե արդյոք նշված վարույթը պարունակում է «քաղաքացիական իրավունքների» քննություն: Ինչպես և Հանձնաժողովը, Ղատարանը գտնում է, որ այս հարցը էական չէ տվյալ գործով որոշում ընդունելու կապակցությամբ (տե՛ս վերը նշված՝ Դեվրիի գործով վճիռը, մաս Ա, թիվ 35, էջ 24, կետ 47):

Բ. Համապատասխանությունը 6-րդ հոդվածին

74. Պրն Քեմբլը հայտարարել է, որ Տեսուչների խորհրդում զրկված է եղել 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ (ա- դ) կետերով նախատեսված «արդար դատաքննության» հնարավորությունից: Նա բողոքարկել է նաև անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ (6-րդ հոդված, կետ 2):

1. 6-րդ հոդված, կետ 1

75. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական [իրավունքներն և պարտականությունները](#) կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Վճիռը հրապարակվում է դմբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա պահանջում են անչափահասների շահերը կամ կողմերի անձնական կյանքի պաշտպանությունը կամ այնքանով, որքանով դա դատարանի կարծիքով հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Տվյալ գործում չի վիճարկվում այն փաստը, որ վեճեր լուծելիս Տեսուչների խորհուրդը հանդիսանում է «օրենքով նախատեսված ատյան»: Իրականում պարզ է, որ անգլիական օրենսդրությունն այս ասպարեզում տեսուչների խորհրդին վերապահում է պարտադիր որոշում ընդունելու իրավագործություն, և սուրբ Ջերմենի գործով դատարանի արտահայտած կարծիքը վկայում է, որ սա դատական գործառույթ է (տե՛ս վերը՝ կետեր 38 և 39): 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված «դատարան» բառը, սակայն, անպայմանորեն չի նշանակում դատական ատյան՝ դրա դասական իմաստով, որ հանդիսանում է երկրի դատական

համակարգի մի օղակը (տե՛ս, *mutatis mutandis*, X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության 1981թ. նոյեմբերի 5-ի վճիռը, մաս Ա, թիվ 46, էջ 23, կետ 53):

(ա) «Անկախ» դատարան

76. Պրն Քմեբլը հայտարարել է, որ իր գործի լուծման իրականացնող Տեսուչների խորհուրդը չի հանդիսացել անկախ ատյան՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Նա պնդել է, որ խորհուրդները ընդամենը «ֆիկտիվ» են, որ կալանավորները դրանք անկախ չեն համարում, և որ դրանք գործնականում ծառայում են իբրև կառավարիչների զենք. դրանց գործառնություններից շատերը ենթարկվում են կալանավայրի իշխանությունների անմիջական վերահսկմանը և նրանք պարտավոր են հետևել ՆԳ քարտուղարի ցուցումներին: Մասնավորապես՝ պնդվում է, որ նրանք անկախ չեն վեճեր լուծելու իրենց գործառնությունը:

Հանձնաժողովը, նշելով, որ օրենքը պարտավորեցնում է խորհուրդներին լինել անկախ և անկողմնակալ, գտնում է, որ դա ինքնին բավարար չէ. իրապես «անկախ» լինելու համար մարմինը պետք է անկախ լինի գործադիրից թե՛ իր գործառնությունում և թե՛ իբրև հաստատություն՝ ապահովելով արդարադատության իրականացումը: Հանձնաժողովի կարծիքով, խորհուրդը չի ունեցել անհրաժեշտ անկախությունը. առաջինը՝ դրա անդամները նշանակվել են սահմանափակ ժամկետով՝ ՆԳ քարտուղարի կողմից և անձեռնմխելի չեն եղել իրենց պաշտոններում, երկրորդը՝ չնայած խորհուրդը վարչակազմի մաս չի հանդիսացել, դրա մյուս գործառնություններն ուղղված են կալանավայրի աշխատակիցների հետ ամենօրյա հաղորդակցության հաստատմանը, ինչը կարող է նույնացվել կալանավայրի կառավարման հետ:

Կառավարությունը վիճարկել է այս եզրակացությունը: Նրանք հայտարարել են, *inter alia*, որ խորհուրդը կալանավայրի կառավարման համակարգի մաս չի հանդիսանում. այն տեղական և պետական մասշտաբում անկախ է կալանավայրի վարչակազմից և, վարչական գործառնությամբ իրականացնելիս՝ գործադիրի անունից հանդես չի գալիս:

77. Որոշելու համար, թե արդյոք մարմինը կարող է անկախ լինել, մասնավորապես գործադիրից և գործի կողմերից (տե՛ս, *inter alia*, Լե Կոմտ, Վան Լովեն և Դե Մեյերի գործով 1981թ. հունիսի 23-ի վճիռը, մաս Ա, թիվ 43, էջ 24, կետ 55), Դատարանը հաշվի է առել այդ մարմնի անդամների նշանակման կարգը և լիազորությունների ժամկետը (նույն տեղում՝ էջեր 24-25, կետ 57), արտաքին հնարավոր ճնշման դեմ երաշխիքների առկայությունը (տե՛ս, Պիերսակի գործով 1982թ. հոկտեմբերի 1-ի վճիռը, մաս Ա, թիվ 53, էջ 13, կետ 27) և մարմնի անկախության արտահայտված դրսևորումը (տե՛ս, Դելկուրտի գործով 1970թ. հունվարի 17-ի վճիռը, մաս Ա, թիվ 11, էջ 17, կետ 31):

Խորհրդի «ոչ անկախ» լինելու մասին վկայող փաստարկների վերաբերյալ կխոսվի ավելի ուշ:

78. Խորհրդի անդամներին նշանակում է ՆԳ քարտուղարը, որն իր հերթին պատասխանատու է Անգլիայում և Ուելսում կալանավայրերի կառավարման համար (տե՛ս վերը՝ կետեր 26 և 32):

Դատարանը չի համարում, որ սա նշանակում է, թե անդամներն անկախ չեն գործադիրից. այլապես կնշանակեր, որ կառավարման ոլորտում պատասխանատու Նախարարի կողմից կամ նրա ներկայացմամբ նշանակվող դատավորները ևս «անկախ» չեն: Ավելին, ճիշտ է, ՆԳ գրասենյակը խորհուրդների գործառնություններն իրականացնելու վերաբերյալ ընդունում է ուղեցույցներ (տե՛ս վերը՝ կետ 35), սակայն վեճերն ըստ էության լուծելիս խորհուրդները գրասենյակի հրահանգներով չեն ղեկավարվում:

79. Խորհուրդների անդամների լիազորությունները տրվում են երեք տարի ժամկետով կամ պակաս, եթե այդ մասին կա ՆԳ քարտուղարի հրամանագիրը (տե՛ս վերը՝ կետ 32):

Լիազորությունների տևողությունը, անշուշտ, հարաբերականորեն կարճ է, սակայն Դատարանը նշում է, որ դա պատճառաբանված է. անդամները վճարովի հիմունքներով չեն գործում (նույն տեղում) և հասկանալիորեն դժվար կլիներ գտնել առավել երկար ժամկետով նման լուրջ պարտականություններ ստանձնելու պատրաստակամ անձանց:

Դատարանը նշում է, որ կանոնները չեն կարգավորում ո՛չ Խորհրդի անդամների պաշտոնանկության հարցերը, ո՛չ էլ նախատեսում են այդ պաշտոնում նրանց համար անձեռնմխելիության երաշխիքներ:

Ճիշտ է, ՆԳ քարտուղարն իրավունք ունի պահանջել Խորհրդի անդամի պաշտոնանկությունը, սակայն իրականում սա բացառիկ դեպքերում է կիրառվում և նման հնարավորության գոյությունը չի կարող դիտվել իբրև Խորհրդի անդամների անկախությանը, իրենց դատական գործառնության իրականացնելու գործընթացում, որևէ կերպ սպառնացող գործոն:

Իրավացիորեն դատավորների անկախության ամփոփական չափորոշիչ է համարվում և առնչվում է 6-րդ հոդվածի 1-ին կետի գործողությանը, երբ գործադիրն իրավասու չէ փոփոխել դատավորին՝ նրա պաշտոնավարության ընթացքում: Այդուհանդերձ, այս հարցի օրենսդրական կարգավորման բացակայությունն ինքնին դեռ չի նշանակում դատավորների անկախության բացակայություն՝ մի պայմանով, որ սկզբունքը փաստորեն ընդունված լինի և առկա լինեն նաև անհրաժեշտ այլ երաշխիքներ ևս (տե՛ս վերը նշված էնգելի և այլոց գործով վճիռը, մաս Ա, էջեր 27-28, կետ 68):

80. Խորհրդի անկախության հարցը վիճելի է մնում այն փաստի կապակցությամբ, որ այն միաժամանակ իրականացնում է թե՛ վեճեր լուծող, և թե՛ վերահսկիչ գործառնությո՞ւյթ (տե՛ս վերը՝ կետ 33):

Խորհուրդն իր վերահսկիչ գործառնությո՞ւյթում, Կառավարության հավաստմամբ, անկախ հսկողություն է իրականացնում կալանավայրի վարչակառավարման նկատմամբ: Իրականում վերահսկողությունը ենթադրում է Խորհրդի պարբերական շփումներ թե՛ կալանավայրի ղեկավարության, և թե՛ ազատագրկման մեջ գտնվողների հետ. ինչևէ, սա որևէ կերպ չի փոխում այն փաստը, որ Խորհրդի գործառնությո՞ւյթը՝ նույնիսկ վարչական պարտականություններ իրականացնելիս, կայանում է երկու կողմերի միջև միջանկյալ օղակի դեր կատարելը՝ անկախ մնալով թե՛ մեկից, թե՛ մյուսից: Կալանավորների շրջանում այն հնարավոր տպավորությունը, թե Խորհուրդները սերտ կապի մեջ են կալանավայրերի ղեկավարության հետ, չափազանց կարևոր գործոն է, եթե 6-րդ հոդվածի համատեքստում հիշելու լինենք հետևյալ միտքը. «արդարադատությունը պետք է ոչ միայն իրականացվի, այլև ակնառու իրականացվի»: Այնուամենայնիվ, ազատագրկման մեջ գտնվողների շրջանում նման տրամադրությունները, որ, թերևս, օրինաչափ են կալանավայրի համար, բավարար չեն «անկախության» բացակայության մասին դատելու համար: 6-րդ հոդվածում ամրագրված պահանջը բավարարված չէր լինի, եթե կալանավորներն իրավացիորեն իրավունք ունենային մտածելու (հաշվի առնելով Խորհրդի և կալանավայրի ղեկավարության հաճախակի շփումները), որ Խորհուրդը կախվածության մեջ է գտնվում կալանավայրի ղեկավարությունից (տե՛ս, *mutatis mutandis*, վերը նշված Պիերսակի գործով վճիռը, մաս Ա, թիվ 53, էջ 15, կետ 30 *in fine*): Այնուամենայնիվ, Դատարանը չի գտնում, որ միայն նման շփումների առկայությունը, որ կա նաև իրենց՝ կալանավորների հետ, կարող է հիմնավորել նման տպավորությունը:

82. Ասվածի համատեքստում Դատարանը պատճառ չի տեսնում ենթադրելու, որ խնդրո առարկա Խորհուրդը «անկախ» չի եղել՝ 6-րդ հոդվածի իմաստով:

(բ) «Անաչառ» ատյան

83. Այնուհետև պրն Քենբլը հայտարարել է, որ իր գործը քննած Տեսուչների Խորհուրդը «անկողմնակալ» չի եղել:

Կառավարությունը վիճարկել է այս պնդումը: Հանձնաժողովն այս առնչությամբ կոնկրետ կարծիք չի արտահայտել, թեև իր պարտքն է համարել նշել, որ իր զեկույցում տեղ գտած եզրակացությունները չպետք է ընկալվեն իբրև Խորհրդի նկատմամբ կողմնակալության կամ այդ կարգի այլ կասկածի վկայություն:

84. 6-րդ հոդվածին առնչվող որևէ մարմնի անդամները համարվում են անաչառ, եթե հակառակը չի ապացուցվել (տե՛ս վերը նշված՝ Լե Կոմտ, Վան Լյովան և Դե Մեյերի գործով վճիռը, մաս Ա, թիվ 43, էջ 25, կետ 58): Տվյալ գործում դիմողը որևէ ապացույց չի ներկայացրել, որ Դատարանին այս առումով կասկածի առիթ տար:

85. Ինչևէ, չի կարելի հարցը սահմանափակել միայն սուբյեկտիվ գնահատականով. այս ոլորտում արտաքին կողմը կարող է որոշակիորեն կարևորվել, և հաշվի պետք է առնել ներքին կազմակերպչական հարցերը (տես վերը նշված՝ Պիեթասկի գործով վճիռը, մաս Ա, թիվ 53, էջեր 14-15, կետ 30):

Մինչ 1976թ. հոկտեմբերի 6-ը Ալբանի կալանավայրի տեսուչների խորհուրդը որևէ դեր չէր խաղացել դիմողի դեմ հարուցված կարգապահական վարույթներում, և գործն սկսելու պահին այն լիովին նոր է եղել Խորհրդի համար (տես վերը՝ կետեր 12-14): Այսպիսով, Ղատարանը Խորհրդում վարույթի կազմակերպման հարցում չի տեսնում որևէ հանգամանք, որ ներգործեր Խորհրդի օբյեկտիվ «անկողնակալության» վրա:

Մնում է այն հանգամանքը, որ հնարավոր է՝ Խորհրդի անաչառությունն ակնառու չի եղել պրն Քեմբլի տեսանկյունից: Այնուամենայնիվ, վերը՝ 81-րդ կետում շարադրվածի նման հիմնավորումներով, Ղատարանը չի գտնում, որ տվյալ համատեքստում դա բավարար է հաստատելու համար, որ 6-րդ հոդվածի այս պահանջը չի կատարվել:

(գ) «Հրապարակային լսումներ»

86. Դիմողը բողոքարկել է, որ Տեսուչների խորհրդում իր գործի լսումները հրապարակային չեն եղել՝ խոստովանելով միաժամանակ, որ իր համար դա էական չի եղել:

Հանձնաժողովը եզրակացրել է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի պահանջների կատարման թերացում: Կառավարությունը նշել է, որ ընդունված պրակտիկան, համաձայն որի Խորհրդի լսումները դռնփակ են տեղի ունենում (տես վերը՝ կետ 36), օրինական է. նրանք հիմնվել են 6-րդ հոդվածի՝ դատավարությունը մամուլի և հանրության համար դռնփակ անցկացնելու վերաբերյալ դրույթների վրա՝ «Ժողովրդավարական հասարակության պայմաններում հասարակական կարգի կամ ազգային անվտանգության ... նկատառումներով», «... կողմերի անձնական կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու համար» կամ, իբրև այլընտրանք, «եթե հրապարակայնությունը կարող է ազդել արդարադատության անաչառության վրա»: Ի պաշտպանություն այս հիմնավորման՝ մեջբերվել են անվտանգության նկատառումները, կալանավորի կողմից սադրիչ գործողությունների պրոպագանդայի հնարավորությունը և անձնական կյանքի անձեռնմխելիության վերջինիս պահանջը:

87. Ճիշտ է, սովորաբար, երբ վարույթներն առնչվում են վտանգավոր անձանց կամ դրանց ընթացքում պահանջվում է կալանավորի քննությունը Ղատարանում, գործերը, որպես կանոն, հրապարակային են լսվում՝ անկախ անվտանգության նկատառումներից, սադրիչ գործողությունների քարոզչության հնարավորությունից և իրեն՝ մեղադրյալի ցանկությունից: Այնուամենայնիվ, Ղատարանը չի կարող հաշվի չառնել Կառավարության բերած փաստարկները, մասնավորապես՝ հասարակական կարգի և անվտանգության վերաբերյալ, որ անխուսափելի կլինեին կալանավայրի կարգապահական վարույթի հրապարակային անցկացման դեպքում: Նման գործը, անկասկած, շատ ավելի մեծ բարդություններ կարող է առաջացնել, քան սովորական քրեական վարույթները: Խորհրդի նիստերը, ինչպես և պահանջում է նման կարգապահական գործերի բնույթը, որպես կանոն, անցկացվում են կալանավայրի ներսում, և հանրությունն այս պատերից ներս թողնելու հետ կապված բարդություններն ակնհայտ են: Եթե դրանք անցկացվեին կալանավայրից դուրս, նմանօրինակ խնդիրներ կծագեին կալանավորների փոխադրման կապակցությամբ: Կալանավորների գործով կարգապահական վարույթների հրապարակային անցկացման պահանջները չպատճառաբանված խնդիրներ կառաջացնեին պետական իշխանությունների համար:

88. Ղատարանը, այսպիսով, համաձայնում է, որ պրն Քեմբլի գործի ընթացքում մամուլին և հանրությունը մասնակցության հնարավորությունից զրկելը հասարակական կարգի և անվտանգության տեսանկյունից միանգամայն պատճառաբանված է եղել: Այս կապակցությամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

(դ) Վճռի հրապարակային արձակումը

89. Ոչ սկզբունքային ևս մեկ հայտարարություն է արվել դիմողի կողմից՝ Տեսուչների խորհրդում իր գործով արձակված վճռի ոչ հրապարակային լինելու մասին:

Հանձնաժողովը գտել է, որ այս դեպքում ևս տեղի է ունեցել 6-րդ հոդվածի պահանջների կատարման թերացում: Կառավարությունն այս անգամ ևս հիմնվել է հասարակական կարգի և անվտանգության հիմնավորումների վրա. հետագայում Կառավարությունը համաձայնել է, որ եթե դռնփակ լսումներ անցկացնելու իրավունքը վերաբերեր միայն գործի քննությանը՝ վճռի հրապարակումից անջատ, ապա 6-րդ հոդվածի այս պահանջը կնշանակեր, որ հանրությունը չի կարող օրինական կերպով հեռացվել այն գործերի լսումներից, որոնցով քննության են առնվում կալանավորների կարգապահական խախտումների հարցեր:

90. Դատարանը համաձայնել է, որ երբեմն 6-րդ հոդվածով երաշխավորվող դատավարության մատչելիությունն անհրաժեշտության դեպքում կարող է սահմանափակվել (տե՛ս վերը՝ նշված Գոլդերի գործով վճիռը, մաս Ա, թիվ 18, էջեր 18-19, կետ 38): Դատարանի նման վերաբերմունքը բխել է այն հանգամանքից, որ վիճարկվող իրավունքը բնորոշ է 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում, սակայն հստակ նշված չէ դրանում: Իսկ երկրորդ նախադասությունում, ի տարբերություն առաջինի, տրվում է բացառությունների սպառիչ ցանկը: Հաշվի առնելով 17-րդ հոդվածի պայմանները, ինչպես նաև հրապարակման սկզբունքի կարևորությունը (տե՛ս, *inter alia*, Սաթերի գործով 1984թ. փետրվարի 22-ի վճիռը, մաս Ա, թիվ 74, էջ 12, կետ 26)՝ Դատարանը չի գտնում, որ այն կարող է դիտարկվել իբրև պատճառաբանված սահմանափակման առարկա, ինչպես պնդում է Կառավարությունը:

91. Այլ գործերով Դատարանը նշել է, որ պարտավորված չէ բառացիորեն մեկնաբանել «վճռի հրապարակային արձակում» արտահայտությունը. յուրաքանչյուր գործով կայացված «վճռի» արձակման ձևը, պատասխանող պետության օրենքներին համապատասխան, պետք է դիտարկվի վիճարկելի գործի յուրահատկությունների և այս կապակցությամբ 6-րդ հոդվածի պահանջների համատեքստում, մասնավորապես՝ արդարադատության և արդար դատավարության իրականացումը հրապարակայնության միջոցով ապահովելու իմաստով (տե՛ս, Պրետո և այլոց գործով 1983թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, մաս Ա, թիվ 71, էջեր 11-13, կետեր 21 և 26-27, և վերը նշված Սատերի վճիռը, մաս Ա, թիվ 74, էջեր 12 և 14, կետեր 26 և 33):

92. Այնուամենայնիվ, տվյալ գործում Տեսուչների խորհրդի վճիռը հրապարակայնորեն արձակելու ուղղությամբ որևէ քայլեր չեն ձեռնարկվել: Հետևաբար՝ այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում:

2. 6-րդ հոդվածի 2-րդ կետ

93. Պրն Քեմբլը գանգատվել է, որ Խորհրդում իր գործի քննության ընթացքում խախտվել է 6-րդ հոդվածի 2-րդ կետը, որում ասվում է հետևյալը.

«Քրեական հանցանքում մեղադրվող յուրաքանչյուր ոք անմեղ է, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով»:

Կառավարությունը վիճարկել է այս պնդումը: Հանձնաժողովն այս կապակցությամբ հատուկ եզրակացությամբ հանդես չի եկել:

94. Դատարանը նշում է, որ երբ պրն Քեմբլը չի ներկայացել Խորհրդի լսումներին, նրա անունից ներկայացվել է «մեղավոր չճանաչելու» հայտարարություն՝ երկու մեղադրանքների կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 14): Նա որևէ ապացույց չի ներկայացրել, որ կհաստատեր, թե Խորհուրդը չի հիմնվել այս հայտարարության վրա: Հետևաբար՝ այս կապակցությամբ նրա պահանջը պետք է մերժվի:

(3) 6-րդ հոդվածի 3-րդ (ա) կետ

95. Պրն Քեմբլը գանգատվել է, որ ինքը պատշաճ կերպով չի տեղեկացվել իր դեմ հարուցված մեղադրանքի բնույթի մասին և որ, հետևաբար, խախտվել է 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետը, որում ասվում է, որ քրեական հանցանքում մեղադրվող յուրաքանչյուր ոք «իրավունք ունի պատշաճ կերպով տեղեկանալ իր դեմ հարուցված մեղադրանքի բնույթի և պատճառի մասին՝ իր համար հասկանալի լեզվով և բոլոր մանրամասներով»:

Կառավարությունը վիճարկել է այս պնդումը: Հանձնաժողովն այս կապակցությամբ հատուկ եզրակացությամբ հանդես չի եկել:

96. Դատարանը նշում է, որ թե՛ Կառավարչի, և թե՛ Խորհրդի լսումներից առաջ դիմողն ստացել է համապատասխան «ծանուցագրեր», որոնցում ներկայացված է եղել իր դեմ հարուցված մեղադրանքը: Նրան այցելել է նաև Խորհրդի նախագահը՝ նախքան Խորհրդի նիստերի գումարումը (տե՛ս վերը՝ կետ 13):

Պրն Քեմբլի փաստարկի միակ հիմնավորումն այն է, որ խռովության մեղադրանքը բարդ հասկացություն է՝ հատկապես կալանավայրի համատեքստում, և ինքը բավարար չափով տեղեկացված չի եղել կամ ի վիճակի չի եղել հասկանալու՝ կոնկրետ ինչ է նշանակում այդ տերմինը կամ պաշտպանության ինչպիսի միջոցներ են հնարավոր իր համար: Ինչևէ, նա կարող էր ավելի հստակ պատկերացում կազմել այս ամենի մասին, եթե հետազայում ներկայանար Կառավարչի մոտ կամ Խորհրդում կայացած լսումներին. վերջինս, ինչպես հետազայում եզրակացրել էր Հանձնաժողովը (տե՛ս վերը՝ կետ 13 in fine), դիմողի պատասխանատվությամբ էր տեղի ունեցել:

Ամեն դեպքում՝ Դատարանը չի գտնում, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի խախտում:

(4) 6-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (գ) ենթակետերը

97. Դիմողը գանգատվել է, որ Խորհրդում իր գործի քննության ընթացքում խախտվել են 6-րդ հոդվածի (ա) և (գ) կետերը, որոնք նախատեսում են, որ քրեական հանցանքում մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի «իր պաշտպանությանը պատշաճ ժամանակում և միջոցներով նախապատրաստվելու իրավունք» և «իր պաշտպանությունն իրականացնելու անձամբ կամ իր ընտրած ներկայացուցչի միջոցով կամ, եթե չի կարող վճարել իրավաբանական օգնության համար, անհրաժեշտության դեպքում, տրամադրվող անվճար օգնության միջոցով»: Նա ընդգծել է, որ հաշվի առնելով իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթը՝ նրան պարտավոր էին տրամադրել իրավաբանական խորհրդատվության և օգնության հնարավորություն:

Հանձնաժողովն իր եզրակացության մեջ նշել է, որ Կոնվենցիայի դրույթների խախտում է տեղի ունեցել այն փաստի կապակցությամբ, որ պրն Քեմբլը զրկված է եղել իրավաբանական խորհրդատվություն և օգնություն ստանալու հնարավորությունից՝ նախքան Խորհրդում գործի վարույթը և ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից՝ այդ վարույթի ընթացքում: Դատարանում լսումների ընթացքում պատվիրակն ավելացրել է, որ նկատի ունենալով Հանձնաժողովի կարծիքն այն մասին, որ իրավաբանական ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից զրկված լինելու կապակցությամբ տեղի է ունեցել (գ) ենթակետի խախտում՝ այլևս աննպատակահարմար է դիտարկել հարցը (բ) ենթակետի կապակցությամբ: Կառավարությունը խոստովանել է, որ այդ ժամանակ գործող օրենսդրությամբ (տե՛ս վերը՝ կետեր 13 և 36) Խորհրդի լսումների ընթացքում դիմողին չէր տրամադրվում իրավաբան-ներկայացուցիչ ունենալու իրավունք: Նա համաձայնել է նաև, որ լսումներից առաջ իրավաբանական օգնություն ստանալու պահանջը ևս կմերժվեր (նույն տեղում):

98. Պրն Քեմբլին տեղեկացրել են իր դեմ հարուցված մեղադրանքի մասին 1976թ. հոկտեմբերի 1-ին՝ Խորհրդի նիստի գումարումից հինգ օր առաջ (տե՛ս, վերը՝ կետ 13): Նա ստացել է նաև համապատասխան ծանուցագրեր՝ Խորհրդի լսումներից մեկ օր առաջ: Ծանուցագրերում նշված է եղել, որ դիմողը կարող է մեղադրանքներին պատասխանել նաև գրավոր ձևով (նույն տեղում):

Դատարանը գտել է, որ, ամեն դեպքում, դիմողին տրամադրվել է «բավականաչափ ժամանակ» պաշտպանությունը նախապատրաստելու համար. դիմողն ակներևաբար լսումների հետաձգման կարիք չի ունեցել (նույն տեղում):

99. Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածի (գ) ենթակետին, ճշմարիտ է, որ պրն Քեմբլն ինքն է որոշել չներկայանալ Խորհրդի լսումներին, սակայն Կոնվենցիան պահանջում է, որ «քրեական հանցանքում մեղադրվող անձը, որ չի ցանկանում անձամբ իրականացնել իր

պաշտպանությունը, ունենա իր ընտրությամբ իրավաբանական օգնություն ստանալու իրավունք» (տե՛ս, Պակեյի գործով 1983թ. ապրիլի 25-ի վճիռը, մաս Ա, թիվ 64, էջ 15, կետ 31): Ավելին, փաստաբանը դժվար թե կարողանար իր պաշտպանյալին պատշաճ իրավաբանական օգնություն տրամադրել ((գ) ենթակետի իմաստով)՝ առանց նրա հետ նախնական հանդիպում ունենալու: Այս վերջին փաստարկը թույլ է տալիս Ղատարանին եզրակացնելու, որ (բ) ենթակետի խնդրո առարկա «պաշտպանության միջոցները» չեն տրամադրվել: Հետևաբար՝ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի (բ) և (գ) ենթակետերի խախտում:

5. 6-րդ հոդվածի 3-րդ (դ) կետ

100. Դիմողը գանգատվում է նաև, որ Խորհրդում իր գործի քննության ժամանակ խախտվել է 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետը, որը սահմանում է, որ քրեական հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի «իր դեմ հանդես եկող վկաների հարցաքննության իրավունք, ինչպես նաև իրեն թե՛ դեմ, թե՛ կողմ հանդես եկող վկաների հարցաքննությանը ներկա գտնվելու և մասնակցելու իրավունք:

Կառավարությունը վիճարկել է այս գանգատը: Հանձնաժողովն այս կապակցությամբ հատուկ եզրակացությամբ հանդես չի եկել:

101. Պրն Քեմբլը որևէ մանրամասնություն չի ներկայացրել ի պաշտպանություն այս պնդման: Այս առնչությամբ կարելի է դիտարկել սուրբ Ջերմենի գործով Բաժանմունքային դատարանի 2-րդ վճիռը (տե՛ս վերը՝ կետ 40), որից երևում է, որ անգլիական իրավունքը ճանաչում է Տեսուչների խորհրդում լսումների ժամանակ վկաների կապակցությամբ կալանավորի որոշակի իրավունքներ ունենալու փաստը: Այս բողոքն առաջին հերթին պետք է դիտարկել այն համատեքստում, որ կալանավորը հրաժարվել է ներկայանալ գործի քննությանը. թե ինչ կլինե՞ր եթե նա ներկայանար լսումներին՝ տվյալ դեպքում գուտ ենթադրություն կարող է լինել, և ուստի Ղատարանի համար էական չէ:

Տվյալ հանգամանքներում 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում չի հայտնաբերվել:

6. Ամփոփում

102. Ի ամփոփումն, Ղատարանը գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում այն կապակցությամբ, որ՝

- Տեսուչների խորհուրդն իր որոշումը չի հրապարակել,
- պրն Քեմբլին չի տրամադրվել Խորհրդի լսումներից առաջ իրավաբանական օգնության և լսումների ընթացքում՝ իրավաբանական ներկայացուցիչ ունենալու հնարավորություն:

Խնդրո առարկա է մնում դիմողի ներկայացրած ևս մեկ գանգատ, մասնավորապես՝ Խորհրդում «արդար» լսումների իրավունքից զրկված լինելու վերաբերյալ: Դիմողի հայտարարությունն այն մասին, որ Խորհուրդը լուրջ չի մոտենում իրենց գործերի քննությանը, կարելի է ի սկզբանե մերժել, քանի որ նա չի ներկայացրել որևէ փաստ, որ կհերքեր Ջելիկոյի հանձնաժողովի եզրակացությունն այն մասին, որ Խորհուրդները միանգամայն լրջորեն են մոտենում գործերի քննության իրենց պարտականություններին (տե՛ս վերը՝ կետ 33): Երկրորդը՝ մի կողմ թողնելով Ղատարանում քննված վերը նշված գանգատները, պրն Քեմբլին չի հաջողվել ներկայացնել որևէ լուրջ փաստարկ վարույթի բուն ընթացքի, ապացույցների գնահատման, մեղավորության ճանաչման, պատժի ընտրության և այլնի կապակցությամբ տեղ գտած անարդարությունների և արդարադատության չարաշահման վերաբերյալ: Նկատի ունենալով, որ նրան ընձեռնվել է լսումներին մասնակցելու հնարավորություն, որից նա, սակայն, չի օգտվել, Ղատարանը գտել է, որ այս գանգատները հիմնավորված չեն:

Ամփոփելով գործի այս մասը՝ Ղատարանը չի անտեսել վերադաս ատյանում գործի վերաքննության առնչությամբ անգլիական իրավունքում առկա միտումները, ինչի մասին է վկայում սուրբ Ջերմենի գործով վճիռը (տե՛ս վերը՝ կետեր 39-40), ինչպես նաև վերջին փոփոխությունները՝ Տեսուչների խորհրդում կալանավորներին իրավաբանական օգնության և ներկայացուցչության հնարավորության ընձեռնման վերաբերյալ (տե՛ս վերը՝ կետեր 36 և 46):

Անուշադրության չի մատնվել նաև հաստատված պրակտիկան (տե՛ս վերը՝ կետ 30), համաձայն որի բռնության դեպքերում կամ ազատագրկման վերջին փուլում գտնվող կալանավորներին առնչվող գործերը քննվում են ավելի շուտ քրեական դատարաններում, քան Տեսուչների խորհրդում:

III. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐ՝ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ա. Նախնական

103. Նպատակահարմար է նախ և առաջ դիտարկել մի շարք գանգատներ, որոնց հիման վրա Կառավարությունն իրականացրել է անգլիական իրավունքում առկա որոշ փոփոխությունները, ինչպես նաև տվյալ գործի համար առիթ հանդիսացած իրադարձությունների ծագման ժամանակ առկա պրակտիկան (տե՛ս վերը՝ կետեր 42-52): Այս գանգատները վերաբերել են ոչ միայն մարմնական վնասվածքների կապակցությամբ իրավաբանական խորհրդատվության մատչելիությանը դիմողների համար, այլև հայր Ֆելին փաստաբանի այցելության պայմաններին, նրա անձնական նամակագրության սահմանափակումներին և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վիճարկելի խախտմանը (տե՛ս ստորև՝ մասեր IV, VI և VII): Կառավարությունն առաջարկել է Դատարանին՝

- 6-րդ հոդվածի համատեքստում՝ վճռում նշել կալանավորների և նրանց իրավաբանական ներկայացուցիչների միջև հաղորդակցության վերահսկման կապակցությամբ կատարված փոփոխությունների մասին,
- նշել նոր Հրահանգներով կատարված փոփոխություններով՝ 8-րդ հոդվածի հետ կապված Հանձնաժողովի հայտնաբերած խախտումների «փոխհատուցման» մասին,
- հայտարարել, որ գործի փաստերը 13-րդ հոդվածի խախտում չէին պարունակի՝ նորացված հրամանների ուժի մեջ մտնելուց հետո:

104. Դատարանը դիտարկել է Միացյալ Թագավորության նմանօրինակ գանգատը՝ Սիլվերի և այլոց գործով 1983թ. մարտի 25-ի վճռի կապակցությամբ (մաս Ա, թիվ 61, էջ 31, կետ 79): Թվում է, թե ներկայիս գործի դեպքում վերոհիշյալ վճռին չհետևելու պատճառ չկա: Ուստի և Դատարանը գտնում է, որ փոփոխությունների ենթարկված օրենսդրությունը և պրակտիկան չեն կարող մրցակցել Կոնվենցիայի հետ. այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ, մասնավորապես՝ 1981թ. դեկտեմբերից ի վեր, Միացյալ Թագավորությունում Կոնվենցիայով նախատեսված նորմերի ապահովման առումով այս ոլորտում իրականացվել են հիմնարար փոփոխություններ:

Բ. 6-րդ հոդվածի 1-ին կետ

105. Դիմողները գանգատվել են, որ 1976թ. սեպտեմբերի 16-ի միջադեպի (տե՛ս, վերը՝ կետեր 17-20) ընթացքում ստացած մարմնական վնասվածքների կապակցությամբ ներկայացված փոխհատուցման պահանջի մասին քաղաքացիական հայցի շուրջ իրավաբանական օգնություն ստանալու պատասխանը ձգձգելը հակասել է դատարանի մատչելիության սկզբունքին՝ խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես մեկնաբանել է Դատարանը վերոհիշյալ Գոլդերի գործով վճռում (Մաս Ա, թիվ 18):

Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել խախտում: Կառավարության հիմնական փաստարկն այն է եղել, որ Դատարանը պետք է մերժեր այս գանգատը՝ հաշվի առնելով Գոլդերի գործով վճռից հետո օրենսդրության մեջ և պրակտիկայում տեղ գտած փոփոխությունները:

106. Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը: Իրավաբանական խորհրդատվության թույլտվության ձգձգման համար 1976-1977թթ. առիթ էր հանդիսացել «նախնական քննության կանոնը», սակայն վերջինս չէր փոխարինվել «համաժամանակյա քննության կանոնով» մինչև 1981թ. (տե՛ս վերը՝ կետ 46(բ)): Ուժի մեջ մտնելով նշված ժամկետից՝ այս փոփոխությունն ակնհայտորեն չէր կարող վերականգնել 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դիմողների վիճարկելի իրավունքը: Հետևաբար՝ անհնարին է խոսել հարցի, թեկուզ և մասամբ, լուծման

հնարավորության մասին (տե՛ս, *mutatis mutandis*, Ղատարանի կանոնակարգի 47-րդ կանոն, կետ 2, ինչպես նաև վերը նշված Սիլվերի և այլոց գործով վճիռը, մաս Ա, թիվ 61, էջեր 31-32, կետ 81): Բացի դրանից, դիմողների 1983թ. հոկտեմբերի 13-ի դիտողությունները՝ 50-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ (տե՛ս վերը՝ կետ 7), պարունակում էին այս վիճարկելի խախտման, *inter alia*, բավարարման պահանջ, և տեղին կլիներ այս կապակցությամբ Ղատարանի վճռի կայացումը (տե՛ս նույն վճիռը՝ նույն տեղում):

107. Ի պատասխան, Կառավարությունը նշել է, որ հաշվի առնելով ներպետական պրակտիկայում տեղ գտած համապատասխան փոփոխությունները՝ իրենք չեն վիճարկել Հանձնաժողովի որոշումը 6-րդ հոդվածի 1-ին կետի տեղի ունեցած խախտման վերաբերյալ:

Ճիշտ է, դիմողներին ի վերջո տրամադրվել է հայցած թույլտվությունը, իսկ պրն Քենբլի դեպքում՝ նա նույնիսկ նպաստել է ձգձգմանը՝ իր մեղադրանքի կապակցությամբ ներպետական քննության սկսվելու համար անհրաժեշտ պատշաճ և բավարար տեղեկությունների տրամադրման թերացմամբ (տե՛ս վերը՝ կետեր 17-20): Այնուամենայնիվ, ապացույցների և այլ նկատառումներով՝ իրավաբանական անհապաղ խորհրդատվության մատչելիությունը խիստ կարևոր է մարմնական վնասվածքների գործերով: Ավելին, ինչպես նշել է Ղատարանը վերոհիշյալ Գոլդերի գործով իր վճռում (մաս Ա, թիվ 18, էջ 13, կետ 26), նույնիսկ ժամանակավոր խոչընդոտները խախտում են Կոնվենցիան:

Քանի որ նշված վճռում ամրագրված սկզբունքները կիրառելի են սույն գործի համար, Ղատարանը համաձայնել է Հանձնաժողովի հետ, որ տեղի է ունեցել խախտում:

Գ. 8-ՐԴ ՀՈՂՎԱԾ

108. Դիմողները գանգատվել են, որ «նախնական քննության» պատճառաբանությամբ, նշված քաղաքացիական հայցի կապակցությամբ ներկայացուցիչների հետ հաղորդակցման հնարավորությունից իրենց զրկելով՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, որում ասվում է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության անձեռնմխելիության իրավունք:

2. Իշխանությունները չեն կարող խոչընդոտել այս իրավունքի իրականացմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և ժողովրդավարական պետության մեջ ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, պետության տնտեսական բարեկեցության, հանցագործությունների և անկարգությունների կանխարգելման, առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատառումներով»:

Հանձնաժողովը եզրակացրել է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել խախտում: Կառավարությունը նշել է, որ հաշվի առնելով ներպետական պրակտիկայում տեղ գտած համապատասխան փոփոխությունները՝ իրենք չեն վիճարկում այդ կարծիքը:

109. Ըստ Ղատարանում ներկայացված ապացույցների՝ կասեցվել է պրն Վուդֆորդից և Աբրոյդից պրն Քենբլին 1977թ. հունվարի 24-ին ուղղված մեկ նամակ (տե՛ս վերը՝ կետ 20): Բացի դրանից, ինչպես իրավացիորեն նշել էր Հանձնաժողովը, ակնհայտ է, որ «նախնական քննության» կանոնը պետք է կանխեր դիմողների և նրանց խորհրդատուների միջև տվյալ գործի կապակցությամբ բոլոր տեսակի հաղորդակցությունները՝ մինչև ներքին հետաքննության ավարտը:

Այսպիսով, տեղի է ունեցել 8-րդ հոդվածով նախատեսված դիմողի նամակագրության անձեռնմխելիության իրավունքի ոտնահարում:

110. Ղատարանը, վերը հիշատակված Սիլվերի և այլոց գործով վճռում, արդեն ունեցել է «նախնական քննության կանոնը» և դրանով պայմանավորված ազատազրկման վայրում կալանավորի նկատմամբ վերաբերմունքի մասին նրա իրավաբանական ներկայացուցիչներին ուղղված նամակների արգելումը 8-րդ հոդվածի կապակցությամբ քննելու նախադեպ: Ղատարանը, համաձայնելով Հանձնաժողովին, գտնում է, որ նամակագրության նման

սահմանափակումը կամ արգելքը պատճառաբանված անհրաժեշտություն չէ՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով (Մաս Ա, թիվ 61, էջեր 38-39, կետ 99):

Դատարանը պատճառ չունի տվյալ դեպքի կապակցությամբ այս եզրակացությունը կիրառելի չհամարելու համար: Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

IV. ՀԱՅՐ ՖԵԼԻ՝ ԻՐ ՍՈԼԻՍԻՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ա. 6-րդ հոդվածի 1-ին կետ

111. Միջնորդների հետ տեսակցելու թույլտվություն ստանալուց հետո հայր Ֆելին մոտ երկու ամիս չի թույլատրվել տեսակցել նրանց հետ՝ առանց կալանավայրի աշխատակցի ներկայության (տե՛ս վերը՝ կետ 22): Նա գանգատվել է, որ սույնով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, ինչպես մեկնաբանել է Դատարանը վերը հիշատակված Գոլդերի գործով վճռում: Հանձնաժողովը գտել է, որ փաստաբանի հետ պաշտպանյալի հաղորդակցման նման բացակայությունը հանգեցրել է Դատարանի մատչելիության իրավունքի խախտման, ինչը հակասում է 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

112. Կառավարության հիմնական առարկությունն այն էր, որ հաշվի առնելով ներպետական պրակտիկայում տեղ գտած փոփոխությունները, Դատարանը պետք է մերժի այս կարգի գանգատները:

Առաջնորդվելով վերը՝ 106-րդ կետում շարադրված հիմնավորումներով, Դատարանը մերժում է այս գանգատը: Դատարանն այս առնչությամբ նշում է նաև, որ կալանավորի և նրա իրավախորհրդատուի միջև մասնավոր տեսակցության վերաբերյալ կանոնները ևս չեն մեղմվել մինչև 1981թ. դեկտեմբերը (տե՛ս վերը՝ կետ 46 (գ)):

113. Ինչպես նշվել է Հանձնաժողովի կողմից, հնարավոր են անվտանգության այնպիսի նկատառումներ, որոնք պատճառաբանված կերպով կսահմանափակեն իրավախորհրդատուի տեսակցությունները կալանավորի հետ: Այնուամենայնիվ, չնայած հայր Ֆելը «Ա կատեգորիայի» կալանավոր էր (տե՛ս վերը՝ կետ 44 (ա)), Կառավարությունը Դատարանում չի առարկել, որ արտադատական խորհրդակցությունների կապակցությամբ նրա գործում հաշվի են առնվել այս նկատառումները. իրոք, նրանք նշել են, որ չեն վիճարկել այս առնչությամբ Հանձնաժողովի եզրակացությունը:

Դատարանը պատճառ չի տեսնում այս եզրակացությանը չհամաձայնելու համար, ուստի գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ն կետի խախտում:

Բ. 8-րդ հոդված

114. Հայր Ֆելը հայտարարել է նաև, որ մասնավոր տեսակցության նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտել են անձնական կյանքի անձեռնմխելիության 8-րդ հոդվածով երաշխավորվող իր իրավունքը:

115. Հանձնաժողովը, հաշվի առնելով 6-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ արված անփոփոմը, գտել է, որ այս գանգատը քննարկելու անհրաժեշտություն չկա:

V. ԱՆԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

116. Դիմողները Հանձնաժողովում գանգատվել են, որ իրենց զրկելով անկախ բժշկական քննության հնարավորությունից (տե՛ս վերը՝ կետեր 23-24)՝ խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը: Հանձնաժողովն այս գանգատը չի ընդունել:

117. Հաշվի առնելով այն փաստը, որ դիմողները չեն պնդել այս գանգատը Դատարանում, այն քննության առնելու անհրաժեշտություն չկա (տե՛ս, *mutatis mutandis*, Սանդի Թայմսի գործով 1979թ. ապրիլի 26-ի վճիռը, մաս Ա, թիվ 30, էջեր 43-44, կետեր 74-75):

VI. Հայր Ֆելի անձնական նամակագրության սահմանափակումը

118. Հայր Ֆելը գանգատվել է իր անձնական նամակագրության սահմանափակման կապակցությամբ, որ հիմնված է եղել ազգականներից կամ նախքան ազատագրվումն ունեցած ընկերներից բացի այլ անձանց նամակագրության արգելման մասին կանոնի վրա (տե՛ս վերը՝ կետ 44 (ա)): Նա մատնանշել է, մասնավորապես, այն փաստը, որ իրեն չի թույլատրվել հաղորդակցվել քույր Փաուերի և քույր Բենեդիկտի հետ (տե՛ս վերը՝ կետ 25) և հայտարարել է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

Հանձնաժողովը եզրակացրել է, որ այս երկու միանձնուհիների հետ հաղորդակցվելու հնարավորությունից դիմողին զրկելը պարունակել է 8-րդ հոդվածի խախտում: Կառավարությունը նշել է, որ հաշվի առնելով ներպետական պրակտիկայում տեղ գտած փոփոխությունները (տե՛ս վերը՝ կետ 46 (ա))՝ չեն վիճարկում այս կարծիքը:

119. Նամակագրության սահմանափակման՝ դիմողի վկայակոչած միակ դեպքը վերաբերում է դեռևս 1974թ., ինչը նրա Հանձնաժողով դիմելուց վաղ է եղել (տե՛ս վերը՝ կետեր 25 և 53): Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտել է, որ վիճարկվող սահմանափակումները տևել են մինչև համապատասխան կանոնների փոփոխությունը 1981թ., և Կառավարությունն այս կապակցությամբ չի առարկել:

120. Վերը նշված Սիլվերի և այլոց գործով վճռում Դատարանն արդեն ունեցել է ազգականներից կամ նախքան ազատագրվումն ունեցած ընկերներից բացի այլ անձանց հետ նամակագրության սահմանափակման խնդիրը 8-րդ հոդվածի կապակցությամբ քննելու նախադեպ: Տվյալ գործի կապակցությամբ հատուկ դիտողությունների բացակայության պայմաններում, նույնիսկ «Ա կատեգորիայի» կալանավորի դեպքում, որն է պատճառ չի եղել չհամաձայնելու Հանձնաժողովի եզրակացությանն այն մասին, որ նամակագրության սահմանափակումն անհրաժեշտությամբ հիմնավորված չէ՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով (Մաս Ա, թիվ 61, էջեր 38-39, կետ 99):

Դատարանը պատճառ չի տեսնում այս եզրակացությանը չհամաձայնելու համար, ուստի գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

VII. 13-րդ ՀՈՂՎԱԾԻ ՎԻՃԱՐԿԵԼԻ ԽԱՆՏՈՒՄԸ

121. Հայր Ֆելը գանգատվել է, որ Միացյալ Թագավորությունում 6-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի իմաստով ներկայացրած իր բողոքների կապակցությամբ չկան անհրաժեշտ պաշտպանության միջոցներ, և որ ինքը, հետևաբար, տուժող է հանդիսանում 13-րդ հոդվածի խախտման կապակցությամբ, որում, մասնավորապես, ասվում է.

«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Ա. 13-րդ հոդվածը՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ զուգակցված

122. Հանձնաժողովի կարծիքով՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ հայր Ֆելի գանգատները՝ իրավաբանական խորհրդատվության, անկախ բժշկական զննության, փաստաբանի հետ մասնավոր տեսակցության թույլտվությունը մերժելու առնչությամբ, 13-րդ հոդվածի իմաստով առանձին հարց չեն առաջացնում:

123. Դատարանը համաձայնել է այս կարծիքին, որը ևս առարկության է արժանացել Կառավարության կողմից: Սահմանվել է, որ բժշկական զննության վերաբերյալ գանգատը (տե՛ս վերը՝ կետ 117) քննելու անհրաժեշտություն չկա: Մյուս երկու գանգատները վերաբերում են դատարանի մատչելիության խնդրին, և հաշվի առնելով 6-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ Դատարանի արած եզրակացությունը (տե՛ս վերը՝ կետեր 107 և 113)՝ կարիք չկա դրանք քննելու 13-րդ հոդվածի իմաստով: Բանն այն է, որ 13-րդ հոդվածի դրույթները ավելի մեղմ են և տվյալ դեպքում կլանվում են առաջինի կողմից (տե՛ս վերը նշված՝ Սիլվերի և այլոց գործով վճիռը, մաս Ա, թիվ 61, էջ 41, կետ 110):

Բ. 13-րդ հոդվածը՝ 8-րդ հոդվածի հետ զուգակցված

124. Մնում է հայր Ֆելի գանգատը՝ 8-րդ հոդվածի առնչությամբ՝ իրավաբանական խորհրդատվության մատչելիության, իր փաստաբանի հետ մասնավոր խորհրդակցման և անձնական նամակագրության սահմանափակման վերաբերյալ: Հանձնաժողովն այս գանգատները դիտարկել է 13-րդ հոդվածի իմաստով՝ եզրակացնելով, որ խախտում է տեղի ունեցել «անհրաժեշտ պաշտպանական միջոցների» բացակայության կապակցությամբ:

125. Գտնելով, որ փաստաբանի հետ մասնավոր խորհրդակցության վերաբերյալ գանգատը 8-րդ հոդվածի իմաստով դիտարկելու կարիք չկա (տե՛ս վերը՝ կետ 115)՝ Դատարանը հիմք չի տեսնում այս խնդիրը 13-րդ հոդվածի իմաստով քննելու համար: Ինչևէ, սա չի վերաբերում մյուս երկու գանգատներին:

126. Որևէ բան չի ասվել վիճարկելի սահմանափակումների՝ ներպետական օրենսդրությամբ անօրինական կամ համապատասխան նորմերի չարաչափման արդյունք լինելու վերաբերյալ: Որևէ բան չի ասվել նաև Հանձնաժողովում քննության ներկայացված չորս ատյաններից բացի (դիմումը Տեսուչների խորհրդին, դիմումը Մարդու իրավունքների խորհրդարանական հանձնակատարին, վարույթը անգլիական դատարաններում և ՆԳ քարտուղարին ներկայացված խնդրագիրը) այլ ներպետական պաշտպանության միջոցների հնարավորության մասին:

Դատարանին ներկայացրած գրավոր բացատրություններում Կառավարությունը խոստովանել է, որ մինչ 1981թ. դեկտեմբերը գանգատարկման առաջին երեք ատյանները վիճարկելի գործով հայր Ֆելին չէին տրամադրի «պաշտպանության արդյունավետ միջոցներ»՝ 13-րդ հոդվածի իմաստով: Հաշվի առնելով վերը նշված Սիլվերի և այլոց գործով վճռում (Մաս Ա, թիվ 61, էջեր 42-44, կետեր 114-118) նշված հիմնավորումները՝ Դատարանը գտնում է, որ այդպես պետք է լինի:

127. Դատարանում գործի լուծման ժամանակ Կառավարությունը նշել է, որ իրենք չեն փորձում առարկել, թե ՆԳ քարտուղարին խնդրագրի ներկայացումը «արդյունավետ պաշտպանության միջոց» կարող էր հանդիսանալ՝ փաստաբանի հետ տեսակցելու թույլտվության ձգձգման կապակցությամբ: Սակայն նրանք նշել են, որ խնդիրն այլ կարող էր լինել քույր Փաուերի և քույր Բենեդիկտի հետ նամակագրության թույլտվության մերժման դեպքում, եթե հայր Ֆելին հաջողվեր հիմնավորել, որ իշխանությունները սխալ են կիրառել համապատասխան ցուցումները՝ չդասելով նշված միանձնուհիներին իր «մտերիմ բարեկամների» շարքը (տե՛ս վերը՝ կետեր 25 և 44(ա)):

Դատարանը գտել է (տե՛ս վերը՝ կետեր 110 և 120), որ հայր Ֆելի իրավաբանական խորհրդատվության և անձնական նամակագրության սահմանափակումները հիմնված են եղել Կոնվենցիայի հետ անհամատեղելի հոդվածների վրա: Նման հանգամանքներում, ինչպես եզրակացրել է Դատարանը Սիլվերի և այլոց գործով վերը հիշատակված վճռում (նույն տեղում, էջ 44, կետ 118), 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության արդյունավետ միջոց լինել չէր կարող: Մասնավորապես՝ ՆԳ քարտուղարին ուղղված խնդրագիրը կարող էր արդյունավետ լինել, միայն եթե դիմողին հաջողվեր հիմնավորել, որ նամակագրության սահմանափակումը համապատասխան ցուցումների սխալ կիրառության հետևանք է եղել (նույն տեղում՝ էջ 43, կետ 116): Տվյալ գործում հայր Ֆելը նման հայտարարություն չի ներկայացրել և, հանգամանքներից դատելով՝ չէր էլ կարող ներկայացնել:

128. Ինչ վերաբերում է վիճարկելի սահմանափակումների վերաբերյալ դիմողի երկու գանգատներին, այստեղ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

VIII. 50-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Նախաբան

129. Կոնվենցիայի 50-րդ հոդվածը, որի կիրառելիությունը տվյալ գործում չի վիճարկվել, սահմանում է հետևյալը.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ մարմնի մարմնի կողմից ընդունված որոշումը կամ կիրառված միջոցառումը հակասում է

...Կոնվենցիայից բխող պարտավորություններին, և եթե նշված կողմի ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս կիրառված միջոցի կամ որոշման հետևանքների միայն մասնակի հատուցում, Ղատարանի վճռով տուժած կողմին, անհրաժեշտության դեպքում, կարող է արդարացի բավարարում տրամադրվել»:

130. Ղատարանը, ստանալով 50-րդ հոդվածի կապակցությամբ դիմողների գանգատների վերաբերյալ Կառավարության դիտողությունները և նշելով, որ Հանձնաժողովը Ղատարանի հայեցողությանն է թողել խնդրի լուծումը (տե՛ս, վերը՝ կետ 7), գտնում է, որ հարցը պատրաստ է լուծման համար (Ղատարանի կանոնակարգի 50-րդ կանոն, 3-րդ կետ, առաջին նախադասություն):

Բ. «Ընդհանուր» և «մասնակի» վնասներ

1. Պրն Քեմբլը

(ա) Կարգապահական վարույթը Տեսուչների խորհրդում

131. Պրն Քեմբլը նշել է, որ Տեսուչների խորհրդում իր գործի քննության ժամանակ տեղ գտած թերացումների պատճառով վարույթն «առջին» է եղել և սահմանված տույժերը չեն կարող օրինական համարվել. ասվածը վերաբերում էր, մասնավորապես, պատժի կրումը 427 օրով երկարաձգելուն: Մատնանշելով, *inter alia*, այս կապակցությամբ հանրությունից մեկուսացման և առողջության վտանգման հանգամանքները՝ դիմողը հայտարարել է իր կրած «զգալի», բայց ոչ որոշակիացված «ընդհանուր» վնասի մասին: Նա 12,400 ֆունտ ստերլինգ և 3,745 ֆունտ ստերլինգ փոխհատուցում է պահանջել «հատուկ» վնասի կապակցությամբ, համապատասխանաբար՝ ազատագրկման մեջ գտնվելու ընթացքում կորցրած շահույթի և ընտանիքի անդամների այցելությունների հետ կապված ծախսերի առնչությամբ:

Կառավարությունը վիճարկել է այն փաստարկը, որ խորհրդում գործի վարույթն անօրինական է եղել: Նրանց հիմնական փաստարկը եղել է այն, որ պրն Քեմբլին չի հաջողվել ապացուցել, որ իր նկատմամբ ոչ անաչառ վերաբերմունք է դրսևորվել:

132. 6-րդ հոդվածի կապակցությամբ Ղատարանի հայտնաբերած միակ խախտումը վերաբերել է պրն Քեմբլին իրավաբանական օգնություն կամ խորհրդատվություն ստանալու հնարավորությունից զրկելուն և Տեսուչների խորհրդի վճիռը հրապարակելուն (տե՛ս վերը՝ կետ 102): Ղատարանի միակ խնդիրն է որոշել, թե այս խախտումներն ինչ հետևանքներ են առաջացրել պրն Քեմբլի համար:

133. Հաշվի առնելով անարդարության մասին պրն Քեմբլի գանգատի վերաբերյալ Ղատարանի եզրակացությունը (տե՛ս վերը՝ կետ 102)՝ չի կարելի ենթադրել կամ պնդել, թե ինչ կլինեին, եթե դիմողն իրավաբանական օգնության և ներկայացուցչության հնարավորությունից զրկված չլիներ: Անհրաժեշտ է հիշել նաև, որ դիմողը չի օգտվել իր դեմ ներկայացված մեղադրանքներին գրավոր պատասխանելու հնարավորությունից, և որ ամենակարևորն է, հրաժարվել է լսումներին ներկայանալուց՝ այսպիսով զրկելով իրեն պաշտպանության կամ պատժի մեղմացման պահանջ ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս վերը՝ կետեր 13 և 14):

Նորից ակնհայտ է, որ պրն Քեմբլի գործով խորհրդի որոշման հետևանքները նույնը կլինեին, եթե նույնիսկ այն հրապարակավ արձակվեր:

134. Տվյալ խախտումների և վիճարկելի վնասի միջև որևէ պատճառական կապ չի հայտնաբերվել, ուստի այս կապակցությամբ արդարացի փոխհատուցման մասին խոսք չի կարող (տե՛ս, 1983թ. հոկտեմբերի 24, մաս Ա, թիվ 68, էջ 7, կետ 11):

(բ) Վնասվածքի կապակցությամբ իրավաբանական խորհրդատվության մատչելիությունը

135. Պրն Քեմբլը հայտարարել է վնասվածքի կապակցությամբ հարուցված քաղաքացիական հայցի առնչությամբ իրավաբանական խորհրդատվություն ստանալու թույլտվության ձգձգման իմաստով իր կրած «զգալի», բայց ոչ որոշակիացված «ընդհանուր» վնասի մասին (տե՛ս վերը՝ կետեր 17-20):

Կառավարությունն այս գանգատը վիճարկել է, *inter alia*, հիմնավորելով, որ ձգձգումն ոչ անաչառության չի հանգեցրել:

136. Ղատարանը գտել է, որ նշված ձգձգումը հանգեցրել է 6-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի խախտումների (տե՛ս, վերը՝ կետեր 107 և 110): Ինչևէ, պրն Քեմբլին հաջողվել է ի վերջո ստանալ պահանջած խորհրդատվությունը, և նա չի փաստարկել, թե ինչպես կարող էր այդ խորհրդատվությունն ավելի վաղ փուլում ստանալու հնարավորությունից զրկված լինելը բացասաբար ազդել իր քաղաքացիական գործի ընթացքի վրա: Ղատարանը, մասնավորապես, նշել է, որ նույնիսկ փաստաբանի հետ խորհրդակցելուց հետո էլ դիմողը պատշաճ կերպով չի մասնակցել գործին (տե՛ս վերը՝ կետ 21):

Հետևաբար, այս գանգատը պետք է մերժվի:

2. Հայր Ֆել

(ա) Վնասվածքի կապակցությամբ իրավաբանական խորհրդատվության մատչելիությունը

137. Պրն Քեմբլի գանգատը մերժելու ժամանակ Ղատարանի բերած հիմնավորումները (շարադրված նախորդ կետում) հավասարապես տարածվում են նաև «ընդհանուր վնասի» կապակցությամբ հայր Ֆելի ներկայացրած գանգատի վրա, որ նրա դեպքում առնչվում էր ոչ միայն իրավաբանական խորհրդատվության թույլտվության ձգձգմանը, այլ նաև արդյունավետ ներպետական պաշտպանության միջոցների բացակայությանը (տե՛ս վերը՝ կետեր 17-20 և 124-128):

(բ) Փաստաբանների այցելությունների պայմանները

138. Հայր Ֆելը հայտարարել է իր կրած «զգալի», բայց ոչ որոշակիացված «ընդհանուր» վնասի մասին, կալանավայրի աշխատակցի հսկողությունից դուրս իր սոլիսիտորների հետ տեսակցելու հնարավորությունից զրկված լինելու կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 22):

Կառավարությունն այս գանգատը վիճարկել է, *inter alia*, այն հիմքի վրա, որ նշված սահմանափակումները ոչ անաչառություն չեն առաջացրել:

139. Ղատարանը գտել է, որ վիճարկելի սահմանափակումների կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (տե՛ս վերը՝ կետ 113): Այնուհանդերձ, դիմողին չի հաջողվել ցույց տալ, թե ինչպես է դա խոչընդոտել, եթե խոչընդոտել է, իր կողմից քաղաքացիական հայցի ներկայացմանը: Ղատարանը, մասնավորապես, նշում է, որ, ամեն դեպքում, սահմանափակումները տևական չեն եղել:

Հետևաբար՝ այս գանգատը պետք է մերժվի:

(գ) Անձնական նամակագրության սահմանափակումներ

140. Հայր Ֆելը հայտարարել է իր կրած «զգալի», բայց ոչ որոշակիացված «ընդհանուր» վնասի մասին՝ իր անձնական նամակագրության և այս առնչությամբ ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցների բացակայության կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետեր 25 և 124-128):

Կառավարությունն այս գանգատը վիճարկել է՝ տարբեր հիմքերով:

141. Ճիշտ է, որ դիմողը կարող էր վիճարկելի խնդիրների կապակցությամբ ապրել խիստ հուզմունքի և վրդովմունքի պահեր: Սակայն, դժվար թե այդ զգացողություններն այնքան ուժեղ լինեին, որ դրանց կապակցությամբ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջը հիմնավորված լիներ: Իրականում, հայր Ֆելին թույլատրված էր բավականին ակտիվ նամակագրական կապ պահպանել (տե՛ս վերը՝ կետ 25), և նա չէր գանգատվում, թե քույր Փաուերի և քույր Բենեդիկտի հետ իր նամակագրության սահմանափակումը բխել է համապատասխան ցուցումների չարաշահումից (տե՛ս վերը՝ կետ 127): Ավելին, չնայած Ղատարանը գտել էր, որ չի կարող քննել 1981թ. ի վեր գործող նամակագրության հսկողության ռեժիմի հետ Կոնվենցիայի համատեղելիությունը (տե՛ս վերը՝ կետ 104), զգալի փոփոխություններ են կատարվել, որոնք, կարծես թե, այս հարցում հանգեցրել են նշանակալի բարելավումների:

Այս հանգամանքներում Ղատարանը գտնում է, որ տվյալ գանգատի իմաստով 8-րդ հոդվածի, ինչպես նաև 13-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ զուգակցված, խախտման փաստի հաստատումը (տե՛ս վերը՝ կետեր 120 և 128) արդեն իսկ պարունակում են արդարացի փոխհատուցում՝ առանց նյութական փոխհատուցման անհրաժեշտության (տե՛ս ի թիվս այլոց՝ Սիլվերի և այլոց գործով 1983թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, մաս Ա, թիվ 67, էջեր 6-7, կետ 10):

Գ. Պրն Քենբլի և հայր Ֆելի ծախքերը և ծախսերը

142. Դիմողները Հանձնաժողովում իրենց գործը ներկայացնելու կապակցությամբ կատարած ծախսերի դիմաց պահանջում են հետևյալ գումարը՝

(ա) 13, 860 ֆունտ ստերլինգ՝ արտոնագրված փաստաթան պրն Թորնբերիի հոնորարի և ծախսերի դիմաց,

(բ) 10,923.90 ֆունտ ստերլինգ (ներառյալ՝ 1,641.59 ստերլինգ չափով ավելացված արժեքի հարկը)՝ միջնորդներ պրն Ջորջ Է. Բեյքեր և Ընկ. վճարումների և ծախսերի դիմաց:

143. Ղատարանը նկատել է, որ համաձայն իր նախադեպային իրավունքում սահմանված չափանիշների՝ պետք է հստակեցնել, արդյո՞ք պահանջվող գումարը փաստացի և անհրաժեշտաբար ծախսվել է և ընդունելի է (տե՛ս, *inter alia*, Ջիմերման և Շտայների գործով 1983թ. հուլիսի 13-ի վճիռը, մաս Ա, թիվ 66, էջ 14, կետ 36):

Այս կապակցությամբ Ղատարանը նշում է, որ պրն Քենբլը, բայց ոչ հայր Ֆելին Հանձնաժողովում գործի վարույթի ժամանակ ընձեռվել է իրավաբանական օգնություն, իսկ հետագայում՝ Ղատարանում գործի քննության ընթացքում, նաև ներկայացուցչի ծառայությունների հնարավորություն (Հանձնաժողովի ընթացակարգային կանոնադրության հավելված):

144. Կառավարությունը նշել է, որ պատրաստ է վճարել դիմողի պահանջած ծախքերի և ծախսերի դիմաց, եթե Ղատարանը որոշի, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար են կատարվել, դրանց ծավալն ընդունելի է եղել և դրանք Հանձնաժողովի իրավաբանական օգնության շրջանակներում չեն վճարվել: Կառավարությունը չի պնդել, որ դիմողի պահանջները չեն բավարարում Ղատարանի ներկայացրած չափանիշները. մասնավորապես՝ նրանք չեն վիճարկել, թե պրն Քենբլը պահանջել է որևէ այլ ծախք, բացի իր ստացած իրավաբանական օգնությունից (*cf.* ... *inter alia*, Էյրիի գործով 1981թ. փետրվարի 6-ի վճիռը, մաս Ա, թիվ 41, էջ 9, կետ 13): Քննության առնելով այս կետերը՝ Ղատարանն ընդունել է գանգատն ամբողջությամբ:

145. Ղատարանում գործի լսումների ժամանակ Կառավարությունը նշել է, որ Ստրասբուրգում կրած ծախքերը պետք է մասնակիորեն մերժվեն, քանի որ դիմողի ներկայացրած գանգատների զգալի մասը մերժվել կամ անընդունելի է ճանաչվել: Այնուամենայնիվ, 1983թ. դեկտեմբերի 2-ին ներկայացրած գրավոր բացատրություններում Կառավարությունը նշել է, որ թողնում է այս հարցը Ղատարանի հայեցողությանը:

Կառավարությունը գանգատվել է նաև, որ իր մատուցած ծառայությունների դիմաց պրն Թորնբերին ներկայացրել է չափազանցված ժամավճար, չափից դուրս ժամաքանակ և չափազանց մեծ գումար՝ լսումների նախապատրաստության համար. նրանք առաջարկել են 5,456 ֆունտ ստերլինգ (12, 820 ֆունտ ստերլինգի փոխարեն): Կառավարությունը կասկած է հայտնել նաև նրա կատարած որոշ ծախսերի ծավալի կապակցությամբ:

146. Հաշվի առնելով, որ դիմողի գանգատների մի մասն անընդունելի է եղել, Ղատարանը գտել է, որ դրանց դիմաց պետք է վճարվի մասնակիորեն միայն (տե՛ս, Լե Կոմտ, Վան Լյովեն և Դե Մեյերի գործով 1982թ. հոկտեմբերի 18-ի վճիռը, մաս Ա, թիվ 54, էջ 10, կետ 21): Ղատարանը գտել է նաև, որ պրն Թորնբերիի հոնորարի պահանջների վերաբերյալ Կառավարության առարկությունները հիմնավորված են:

Այս հանգամանքներում, Ղատարանը՝ արդարացիորեն, 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, նկատի ունենալով պրն Քենբլին Հանձնաժողովի կողմից իրավաբանական օգնության ձևով տրամադրված գումարը, սահմանում է հետևյալ ծախքերը և ծախսերը՝ 5,000 ֆունտ ստերլինգ՝ պրն Թորնբերիի և 8,000 ֆունտ ստերլինգ՝ պրն Ջորջ Է. Բեյքերի և Ընկ.

համար: Նշված թվերը կարող են ավելացվել՝ անհրաժեշտ ավելացված արժեք հարկի գումարման դեպքում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

I. ՆԱԽՆԱԿԱՆ

1. միաձայն մերժում է Կառավարության պնդումն այն մասին, որ պրն Քեմբլը չի սպառել ներպետական պաշտպանության միջոցները,
2. միաձայն վճռում է, որ իրավասու չէ քննության առնելու հայր Ֆելի հայտարարությունն այն մասին, որ Տեսուչների խորհրդում վարույթի կապակցությամբ իր գանգատներն այժմ ընդունելի են,

II. ՊՐՆ ՔԵՄԲԼԻ ԳՈՐԾՈՎ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

3. վճռում է չորս ձայնով՝ ընդդեմ երեքի, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածն այս կապակցությամբ կիրառելի է,
4. վճռում է չորս ձայնով՝ ընդդեմ երեքի, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել՝ Խորհրդում գործի քննությունը ոչ հրապարակային անցկացնելու կապակցությամբ,
5. վճռում է հինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Խորհրդի որոշումը ոչ հրապարակային արձակելու կապակցությամբ,
6. վճռում է հինգ ձայնով՝ ընդդեմ երկուսի, որ պրն Քեմբլին իրավաբանական օգնության կամ իրավաբանական խորհրդատվության հնարավորությունից զրկելը պարունակում է 6-րդ հոդվածի՝ համապատասխանաբար (բ) և (գ) կետերի խախտումներ,
7. վճռում է միաձայն, որ վիճարկելի մյուս հարցերի կապակցությամբ 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,

III. ՎՆԱՍՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԱՆՁԱՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

8. վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի խախտում:

IV. ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅՐ ՖԵԼԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

9. վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, և կարիք չկա այս հարցը նաև 8-րդ հոդվածի իմաստով քննարկելու,

V. ՀԱՅՐ ՖԵԼԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

10. վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում,

VI. 13-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

11. վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել այս հոդվածի խախտում՝ սույն վճռի 128-րդ կետում ներկայացված հիմքերով,

VII. 50-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

12. վճռում է միաձայն, որ Միացյալ Թագավորությունը պետք է դիմողին վճարի՝ կրած իրավաբանական ծախքերի և ծախսերի դիմաց՝ տասներեք հազար ֆունտ ստերլինգին համարժեք գումար (13,000 ֆունտ ստերլինգ), ինչպես նաև համապատասխան ավելացված արժեքի հարկը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով (անգլերեն տեքստը բնօրինակն է) և հրապարակված է Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, հազար ինը հարյուր ութսունչորս թվականի հունիսի քսանութին:

Ժերար Վիարդա
Նախագահ

Մարկ-Անդրե Էյսեն
Քարտուղար

Սույն վճռին կցվում են պրն Թոր Վիլհելմսոնի հայտարարությունը և, Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 50-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն, հետևյալ չհամընկնող կարծիքները.

- պրն Քրեմոնայի, պրն Մաքդոնալդի և պրն Ռուսոյի մասնակի չհամընկնող միասնական կարծիքը,
- պրն Թոր Վիլհելմսոնի և պրն Գյոլքուքլուի մասնակի չհամընկնող միասնական կարծիքը,
- սըր Վինսենթ Էվանսի մասնակի չհամընկնող կարծիքը:

Գ. Վ.
Մ.-Ա. Է.

ԴԱՏԱԿՈՐ ԹՈՐ ՎԻԼՀԵԼՄՍՈՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատարանի մեծամասնությունը չի կիսում իմ կարծիքը 6-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ: Հաստատելով հոդվածի կիրառելիությունը՝ Դատարանն սկսել էր դրա հոդվածների վիճարկելի խախտումների կապակցությամբ քննությունը: Ես մասնակցել եմ այս քննությանը և քվեարկել Դատարանի վճռին ներկայացված տարբեր հարցերի առնչությամբ: Իմ մասնակցությանը չեն առարկել Դատարանի նախագահը կամ իմ մյուս գործընկերները: Կոնվենցիայում ևս չեն պարունակվում այս տարբերակի ճիշտ կամ սխալ լինելու մասին կարգավորումներ: Այս մասին որևէ բան ասված չէ նաև Դատարանի կանոնակարգի մեջ: Իմ դիրքորոշումը նման է Քյոնիգի և Գազարդիի գործով փոքրամասնության մեջ հայտնված դատավորների դիրքորոշմանը, որոնք մի շարք դեպքերում բախվել էին այն հարցին, թե արդյո՞ք պետք է մասնակցել Կոնվենցիայի 50-րդ հոդվածով նախատեսվող արդարացի փոխհատուցման կապակցությամբ որոշումների ընդունմանը:

ԴԱՏԱԿՈՐՆԵՐ ՔՐԵՄՈՆԱՅԻ, ՄԱՔԴՈՆԱԼԴԻ ԵՎ ՌՈՒՍՈՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՀԱՄԸՆԿՆՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Մենք համաձայն ենք վճռի 73-րդ կետում նշված այն եզրակացությանը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է Տեսուչների խորհրդում պրն Քեմբլի գործի քննության կապակցությամբ: Եվ իրոք, Էնգելի և այլոց գործով վճռի չափանիշները տարածելով տվյալ գործի վրա (հաշվի առնելով համատեքստի առանձնահատկությունները)՝ պրն Քեմբլի դեմ վարույթը՝ գործի տվյալ հանգամանքներում և վճռում նշված պատճառներով, պետք է դիտարկվի «քրեաիրավական» դաշտում՝ 6-րդ հոդվածի իմաստով: Եթե այսպես է, ապա տրամաբանորեն հետևում է (ինչպես և փաստորեն ընդունվել է վճռում), որ պետք է հետևել այս հոդվածում սահմանված պահանջներին, եթե, անշուշտ, բացառությունները նախատեսված չեն հենց նույն հոդվածով: Մենք համամիտ չենք վճռին այն առումով, թե արդյո՞ք ներկայացված ապացույցների հիման վրա կարելի է դիտարկել թույլատրելի բացառությունների շրջանակներում վարույթի ոչ հրապարակային լինելու կապակցությամբ 6-րդ հոդվածի պահանջների շրջանցումը: Անշուշտ, Կառավարության խնդիրն էր հիմնավորել գործի նման հանգամանքներում բացառությունների պատճառաբանվածությունը: Այնուամենայնիվ, Կառավարությունը (ինչպես նաև պալատի մեծամասնությունը՝ վճռի 87-րդ կետում) հիմք է ընդունել Տեսուչների խորհրդում գործերի վարույթի ընդհանուր կարգը և հաստատված պրակտիկան, և չնայած պրն Քեմբլը «Ա

կատեգորիայի» կալանավոր էր համարվում, Կառավարությունը չի ներկայացրել բավարար փաստարկներ՝ հիմնավորելու համար, որ տվյալ գործում հրապարակայնության բացակայությունը կարելի է պատճառաբանել 6-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի բացառություններով:

Այս փաստարկների բացակայության պայմաններում մենք, ինչպես և Հանձնաժողովը, եզրակացնում ենք, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում նաև այս կապակցությամբ:

ՂԱՏԱՎՈՐՆԵՐ ԹՈՐ ՎԻՆՇԵՍՏՈՆԻ ԵՎ ՊՅՈՒՆԻՔՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՀԱՄԸՆԿՆՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Այս գործի առանցքային հարցն է պարզել՝ թե արդյո՞ք Ալբանի կալանավայրում 1976թ. սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ վարույթի նկատմամբ կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Ղատարանի մեծամասնությունը համակարծիք է եղել, որ պրն Քեմբլին ներկայացվել է «քրեական մեղադրանք», և որ, հետևաբար, 6-րդ հոդվածը կիրառելի է: Մենք չենք կարող համաձայնել այս կարծիքին:

Այս նույն Ղատարանը էնգելի և այլոց գործով 1976թ. հունիսի 8-ի իր վճռում հստակորեն նշել է այն երեք չափանիշները, որոնց վրա հիմնվել է «քրեական» գործի շրջանակներում 6-րդ հոդվածի կիրառելիության մասին որոշումը: Այնտեղ խնդիրն այն էր, թե արդյո՞ք դիմողների դեմ հարուցված վարույթները, զինվորական արդարադատության համատեքստում, քրեական էին, թե՛ կարգապահական: Մեր կարծիքով, և այստեղ մենք համամիտ ենք Ղատարանի մեծամասնության հետ, այդ նույն չափանիշները կիրառելի են նաև տվյալ գործի կապակցությամբ:

Առաջին չափանիշի՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգի կապակցությամբ, երկնտանք չի առաջացել: Պրն Քեմբլին ներկայացված մեղադրանքը նախատեսված է եղել Անգլիական կարգապահական կանոնադրությամբ, և դրանց վարույթն իրականացվել է համաձայն Անգլիական կարգապահական դատավարության: Հնարավոր էր նաև քրեական մեղադրանքի հարուցումը, ինչը, սակայն, չէր արվել:

Էնգելի վճռում բերված երկրորդ չափանիշը վերաբերում էր հանցանքի բնույթին: Այս չափանիշը բերում ենք ցույց տալու համար, որ կարգապահական կանոնների խախտումը դուրս է 6-րդ հոդվածի գործողությունից: Մեր կարծիքով, նստացույցը, որին մասնակցել էր նաև դիմողը, հանդիսանում էր կալանավայրի կարգապահության բնորոշ խախտում: Անշուշտ, կալանավայրերից դուրս նման միջադեպերը կարող են սովորական լինել, սակայն կալանավայրում դրանք առանձնակի նշանակություն են ստանում: Որոշակի տարածքներից հեռանալու հրամաններին ընդդիմանալը, թեև կարող է տեղի ունենալ այլ հանգամանքներում ևս, սակայն առանձնակի նշանակություն է ձեռք բերում կալանավայրերում: Մենք կարծում ենք, որ խնդրո առարկա վարույթների առիթ հանդիսացած միջադեպը կալանավայրի խռովության բնորոշ օրինակ է, որի դեպքում, որպես կանոն, ձեռնարկվում են և պետք է ձեռնարկվեն կարգապահական միջոցներ:

Էնգելի գործով բերված երրորդ չափանիշը վերաբերում էր հնարավոր պատժամիջոցների խստությանը: Այս մասին ասվում է սույն վճռի 28-րդ կետում: Պատժամիջոցները կարող են բաժանվել երկու խմբի: Առաջին խմբին են պատկանում այն պատժամիջոցները, որոնցով կասեցվում է կալանավորի մասնակցությունը ընկերային աշխատանքներին, նրանց եկամուտների ստացումը, կալանավորը տեղափոխվում է մենախուց՝ բոլոր դեպքերում 56 օրը չգերազանցող ժամկետով: Նշված պատժամիջոցներից, մեր կարծիքով, միայն վերջինն է վիճարկելի: Մենախցում փակելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ անձի վրա: Այնուամենայնիվ, այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշել, որ այս պատժամիջոցը

կալանավայրերի կարգապահական ընդունված միջոցներից է և որ կալանավորներն, այսպես թե այնպես, գրկված են ազատությունից: Այս նկատառումներով, մենք կարծում ենք, որ ճիշտ չէ այն մեկնաբանությունը, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթները պարտադրում են պետություններին այս պատժամիջոցը չկիրառել կալանավայրերում տեղի ունեցող ոչ քրեական, կարգապահական գործերի առնչությամբ: Պրն Քեմբլի նկատմամբ հնարավոր կիրառվելիք պատժամիջոցների երկրորդ խմբին են պատկանում որոշակի արտոնություններից և վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելը: Ըստ համապատասխան օրենսդրության՝ այս տույժերը չունեն ժամանակային սահմանափակում, բացի այն պայմանից, որ դրանք չպետք է գերազանցեն նշանակված նախնական պատիժը: Այս կանոններն առավել մանրամասն շարադրված են քննարկվող վճռի 28-րդ և 29-րդ կետերում: Պարզ է, որ որոշակի արտոնություններից զրկումը և սահմանափակումները ինքնին չեն կարող գործը կարգապահական ոլորտից տեղափոխել քրեական ոլորտ: Առավել վիճահարույց է, մեր կարծիքով, վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելու հարցը: Միանշանակորեն, կալանավորը դատապարտված է եղել ազատագրկման՝ որոշակի ժամանակով, և այդ ժամանակը սահմանվել է դատավճիռը կայացնող Դատարանի կողմից: Մյուս կողմից, համաձայն Անգլիայում ընդունված պրակտիկայի՝ ազատագրկման մեջ հայտնվելու ժամանակ դատապարտյալին տեղեկացվում է նրա ազատ արձակման հավանական ժամկետի մասին, որ հաշվարկվում է դատավճռում նշված ժամկետից հանելով դրա մեկ երրորդը: Իրականում, ըստ վաղաժամկետ ազատման կանոնների կիրառման ընդունված կարգի համաձայն կալանավորն ազատ է արձակվում պատժի երկու երրորդը կրելուց հետո, եթե կարգապահական վարույթների արդյունքում չի գրկվում այդ հնարավորությունից: Այսպիսով՝ կալանավորները կարող են ակնկալել վաղաժամկետ ազատում լավ վարքագիծ դրսևորելու դեպքում. վաղաժամկետ ազատ արձակման, ժամկետների փոփոխության հարցերը հստակ կերպով կանոնակարգված են: Այսպիսով, կարգապահական վարույթները կարող են էականորեն երկարացնել կալանավայրում դատապարտյալի փաստացի գտնվելու ժամանակը: Չնայած դրան, մենք եկել ենք այն եզրակացության, որ ասվածը չի նշանակում, թե այսպիսով դիմողի դեմ հարուցված վարույթները կարգապահական չեն: Բանն այն է, որ կալանավայրում անցկացված ժամանակը չի կարող գերազանցել նախնական դատավճռով սահմանված ազատագրկման ժամկետը, և վաղաժամկետ ազատ արձակումը նույն՝ կարգապահական միջոցներով պահպանվող համակարգի տարրերից մեկն է:

Մենք կարծում ենք, որ դրանք եզակի գործոններ են, որոնք քննարկելի են «քրեական» գործի շրջանակներում 6-րդ հոդվածի կիրառելիության կապակցությամբ: Այսպիսով, մենք եզրահանգում ենք, որ դիմողի դեմ ներկայացված մեղադրանքները «քրեական» չեն եղել:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմերը, ի տարբերություն 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսվածների, վերաբերում են ոչ միայն «քրեական» մեղադրանքներին, այլև «քաղաքացիական իրավունքների և ազատությունների» պաշտպանությանը: Դիմողը վիճարկել է 6-րդ հոդվածի կիրառելիությունը տվյալ համատեքստում: Մենք կարծում ենք, որ այս հարցը պետք է քննարկվի միայն հաշվի առնելով վաղաժամկետ ազատ արձակման հնարավոր իրավունքը: Նույնիսկ եթե համարելու լինենք, որ վաղաժամկետ ազատ արձակումն ավելի շուտ իրավունք է, քան արտոնություն, միևնույն է, չենք կարող այն «քաղաքացիական իրավունք» անվանել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Վաղաժամկետ ազատ արձակումը և դրա հնարավորության սահմանափակումը, որպես կանոն, կարգապահական միջոցներ են: Հետևաբար, մենք կարծում ենք, որ կարգապահական վարույթի և քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ վարույթի միջև երկընտրանքի դեպքում, նժարը թեքվում է հօգուտ կարգապահական կողմի:

Վերը նշված նկատառումներով՝ մենք կարծում ենք, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէ տվյալ գործի կապակցությամբ:

ԴԱՏԱԿՈՐ ՍԸՐ ՎԻՆՍԵՆՅԵ ԷՎԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Ցավում եմ, սակայն չեմ կարող համաձայնել Ղատարանի մեծամասնության հետ՝ Տեսուչների խորհրդում պրն Քեմբլի գործի վարույթի ժամանակ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի ունենալու հարցում: Իմ կարծիքով, 6-րդ հոդվածը կիրառելի չէ տվյալ վարույթի կապակցությամբ, քանի որ այն չի առնչվել պրն Քեմբլի նկատմամբ քրեական մեղադրանքին կամ նրա քաղաքացիական իրավունքների և պարտականությունների պաշտպանությանը՝ 6-րդ հոդվածի իմաստով:

2. Էնգելի և այլոց գործով 1976թ. հունիսի 8-ի իր վճռում Ղատարանը հավաստել է, որ Պայմանավորվող պետությունները կարող են սահմանազատել կարգապահական և քրեական վարույթները, մի պայմանով, որ «կարգապահականն անուղղակիորեն չհավակնի քրեականին»՝ «հանգեցնելով Կոնվենցիայի նպատակներին և խնդիրներին անհարիր հետևանքների» (Մաս Ա, թիվ 22, էջեր 33-34, կետեր 80-81):

3. Էնգելի և այլոց գործով, քննարկելով այն հարցը, որ ներկայացված մեղադրանքները, չնայած պետության կողմից սահմանված էին եղել իբրև «կարգապահական», սակայն 6-րդ հոդվածի իմաստով դիտարկվել էին «քրեական» ոլորտում՝ Ղատարանը սահմանափակել էր հարցը զինվորական ծառայության շրջանակում (նույն տեղում, էջեր 34-35, կետ 82), և տվյալ գործով կայացրած վճռի 69-րդ կետում համաձայնել էր, որ կալանավայրերում հատուկ ռեժիմի սահմանումը հիմնավորված է թե՛ գործնական, և թե՛ հատուկ քաղաքականության նկատառումներով: Այնուամենայնիվ, կիրառելով Էնգելի և այլոց գործով, ինչպես նաև Օզթյուրքի գործով 1984թ. փետրվարի 21-ի վճիռներով (Մաս Ա, թիվ 73, էջեր 17-18, կետ 82) սահմանված չափանիշները՝ Ղատարանը եկել է այն եզրակացության, որ 6-րդ հոդվածը կիրառելի է պրն Քեմբլի դեմ հարուցված վարույթի կապակցությամբ: Նույնիսկ այս չափանիշների կիրառման պայմաններում, իմ կարծիքով, Ղատարանը սխալվել է, երբ 6-րդ հոդվածի իմաստով «քրեական» է համարել այն մեղադրանքը, որը թե՛ արարքի և թե՛ համապատասխան պատժամիջոցի առումով գերազանցապես կարգապահական բնույթ ունի: Արդյունքում՝ Ղատարանը տարածել է 6-րդ հոդվածի կիրառելիությունը մի վարույթի վրա, որի կապակցությամբ, իմ կարծիքով, հոդվածը կիրառելի չէ:

4. Անկասկած, և սա խոստովանել էր նաև Կառավարությունը, նույն փաստերի հիման վրա, ըստ Անգլիական օրենքների, պրն Քեմբլի դեմ կարող էր հարուցվել նաև քրեական մեղադրանք: Սակայն, նույնիսկ ըստ Էնգելի և այլոց գործով սահմանված չափանիշների, սրանից չի հետևում, որ նման հանգամանքներում ներկայացված կարգապահական մեղադրանքը պետք է դիտարկվի իբրև քրեական՝ 6-րդ հոդվածի իմաստով: Որոշ արարքների դեպքում, թեև դրանք տեսականորեն կարող են դիտվել թե՛ իբրև կարգապահական և թե՛ իբրև քրեական, հարկ է դրանք քրեական համարել, ինչպես, օրինակ՝ կալանավայրի հսկիչի սպանության դեպքում: Սակայն այն արարքները, որոնց կապակցությամբ մեղադրվել է պրն Քեմբլը (կոլեկտիվ անհնազանդություն, կալանավայրի իշխանություններին չենթարկվել), չնայած դիմողի կողմից բռնության կիրառմանը, ճիշտ է բավականին լուրջ, սակայն ակնհայտորեն կարգապահական բնույթի էին և քննվել են իբրև այդպիսիք:

5. Սահմանված պատժամիջոցները ևս որոշակի առումով կարգապահական են եղել: Պրանց նպատակն է եղել կալանավայրում հաստատված կարգի և վարքագծի պահպանումը: Մասնավորապես՝ ըստ Կալանավայրերի մասին 1985թ. օրենքի 25-րդ (1) մասի, կալանավորը կարող է վաղաժամկետ ազատվել սահմանված պատժի կրումից պատշաճ և լավ վարքագծի դեպքում: Վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելը, հետևաբար, կարգապահական գործառնություն է: Ինչպես և Կալանավայրերի 1964թ. Կանոնադրությամբ կարգապահական խախտումների համար նախատեսված այլ տույժերը, այս տույժը ևս չի պատկանում «քրեական» ոլորտին: Պրն Քեմբլի գործով Տեսուչների խորհրդի սահմանած տույժը՝ վաղաժամկետ ազատման հնարավորությունից զրկելու մասին, խիստ էր, սակայն դրանով չէր գերազանցվում և չէր կարող գերազանցվել նրա նկատմամբ սահմանված նախնական ազատագրկման ժամկետը, ուստի այն մնում է կարգապահական ոլորտի շրջանակներում:

6. Այս նկատառումներով, ես գտնում եմ, որ Կառավարությունն իրավացի էր՝ Տեսուչների խորհրդում պրն Քեմբլի գործի վարույթի համար առիթ հանդիսացած մեղադրանքները չդիտարկելով իբրև «քրեական»՝ 6-րդ հոդվածի իմաստով:

7. Գտնելով, որ 6-րդ հոդվածը կիրառելի է՝ պրն Քեմբլին ներկայացված մեղադրանքի «առանձնապես ծանր» բնույթի և սահմանված տույժերի բնույթի ու խստության հիմքով, Դատարանն անհրաժեշտ չի համարել քննության առնել, թե արդյո՞ք Տեսուչների խորհրդում գործի քննությունն առնչվել է «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» խնդրին: Իմ կարծով՝ չի առնչվել: Խորհրդում գործի վարույթի օբյեկտն ակնհայտորեն կարգապահական էր և ոչ թե «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» պաշտպանության խնդիրն էր՝ 6-րդ հոդվածի իմաստով (տե՛ս այս կապակցությամբ իմ չհամընկնող կարծիքը Լե Կոմտի, Վան Լյովենի և Դե Մեյերի գործով, Մաս Ա, թիվ 43, էջեր 43-44):

8. Կցանկանալի ավելացնել, այնուամենայնիվ, որ եթե նույնիսկ 6-րդ հոդվածը կիրառելի էր Դատարանի բերած հիմքով, ես համամիտ եմ վճռում ներկայացված այն կարծիքին, որ հիմք չի եղել ենթադրելու, որ պրն Քեմբլի գործի քննության ժամանակ Տեսուչների խորհուրդը «անկախ» կամ «անաչառ» չի եղել՝ 6-րդ հոդվածի իմաստով, կամ որ տեղի են ունեցել 6-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ (ա) կամ (դ) կետերի խախտումներ, կամ որ դիմողը զրկված է եղել Խորհրդում «արդար» դատավարության հնարավորությունից: Ես համաձայն եմ նաև, որ պրն Քեմբլի գործի վարույթը՝ հասարակական կարգի պահպանության և անվտանգության նկատառումներով ոչ հրապարակային անցկացնելը հիմնավորված է եղել:

9. Բոլոր այլ հարցերում, բացի Տեսուչների խորհրդում պրն Քեմբլի գործի վարույթի կապակցությամբ 6-րդ հոդվածի կիրառելիության խնդրից, ես համաձայն եմ Դատարանի որոշմանը: